ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(**74**-րդ տարի) **Թիվ-12** (1646) — *Դեկտեմբեր 2020*

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող
Ա. Շ.
Որպես սկիզբ ազատվել ապազգային իշխանությունից (էջ 1-2)

2- Հարցազրույց
Հարցազրույց ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանի հետ
Նոր հիմքերի վրա կառուցենք մեր պետականությունը: Ազգային գաղափարախոսությունը պետք է դարձնել պետականության հիմքը (էջ 3-9)

3- Երիտասարդական
Տիգրան Չանդոյան
Մեր գործելու ժամանակը (էջ 10)

4- Քաղաքական
Խաչատուր Ստեփանյան
Արցախի ամբողջականության վերականգնումը ռազմավարական խնդիր է (էջ 11-13)

5- Տարածաշրջանային
Արմեն Ասրյան
Արցախյան հիմնախնդրի հանգուցալուծում. իրավունք, թե ուժ (էջ 14-22)

6- Աշխարհաքաղաքական
Վարդան Հակոբյան
Ո՞վ ի՞նչ շահեց և ի՞նչ կորցրեց արցախյան աղետի հետևանքով (էջ 23-25)

7- Տնտեսական
Թադևոս Ավետիսյան
Տնտեսական ճգնաժամի հիմնապատճառները անցած երկուսուկես տարում (էջ 26-29)

10- Պատմության լուսարձակ
Անի Մելքոնյան
Հայաստանի խորհրդայնացումը (էջ 30-33)
Դերենիկ Մելիքեան
ՀՅ Դաշնակցութիւնը եւ Պարսկաստանի Սահմանադրական շարժումը (1-ին մաս)(էջ 34-41)

11- Ընկերական Զրույցներ
Վրէժ-Արմէն
Անվարա՛ն (էջ 42-43)

11- Նոր հրատարակություններ
2020 թ. ՀՅԴ Բյուրոյի հրատարակությունները (էջ 44)

Որպես սկիզբ ազատվել ապազգային իշխանությունից

Ա. Շ.

Ներկա իրականությունը մերժում է այն պատմագիտական տեսակետը, ըստ որի՝ անհատների դերը վճռորոշ չէ պատմական գործընթացներում: Եթե այսօրվա և 100-102 տարի առաջվա հայաստանյան իրականությունը զուգահեռենք, ապա ակնհայտ կդառնա, որ մի դեպքում դարերով պետականազուրկ երկրի մի սերունդ, ցեղասպանված ազգի մեջ ոգի ներարկելով, կարողացել է պետականություն կերտել, իսկ մյուս դեպքում, հարյուրամյա պետականության ու ինքնազարգացման ճանապարհ անցած նույն ժողովրդի մի զգալի զանգվածի մեջ բացասական կրքեր գրգռելով, ապազգային և օտարասուն տարրը կարողացել է հաղթանակած ու կայուն պետությունը տանել կործանման: Այս մասին գրում ենք՝ բոլորովին հեռու լինելով կուսակցական քարոզչությունից և արձանագրելով ողբերգական իրականությունը: Նույն այս տարրը՝ ի դեմս իր առաջնորդի, նեղ անձնական շահերով առաջնորդվելով, ամեն օր իր հայրենիքին հավելյալ կորուստներ է պատճառում, խարխլում է նաև ապագայի հիմքերը՝ շարունակելով կառչած մնալ իշխանությունից: Առաջնորդ Նիկոլ Փաշինյանը նման է այն խեղդվողին, որը, հրաշալիորեն գիտակցելով իր վիճակը, կառչում է ինչ-որ մեկի ոտքերից և իր հետ ջրասույզ անում վերջինիս, միայն թե տվյալ դեպքում այդ ինչ-որ մեկը անձ չէ, այլ ամբողջ Հայաստանը:

Որքան էլ որ անհեթեթ թվա, ժողովրդի առջև այսօր ծառացած հիմնահարցը երկիրը մասնատած ու ամեն օր նոր բնագծեր խլող ոսոխը չէ, այլ հենց դավաճան ղեկավարը, առանց որի հեռացման՝ անհնար է նախաձեռնել հակաքայլեր, կանգնեցնել նահանջն ու կորուստները և կազմակերպել ազգն ու պետությունը՝ քաղաքական և այլ ճակատներում դիմակայելու համար:

Քաղաքական ու բարոյական առումներով սպառված, կառավարելու հնարավորությունները կորցրած, թշնամիների կողմից ծաղրի ենթարկվող, օտարների ու յուրայինների համար անընդունելի իշխանությունը ունակ չէ լուծում տալու ո՛չ ներքին և ո՛չ էլ արտաքին մարտահրավերներին: Ինչպես նույն օրը հաղորդել է «Mediaport» տելեգրամային ալիքը, Անվտանգության խորհրդի՝ դեկտեմբերի 12-ին տեղի ունեցած նիստի ժամանակ Փաշինյանն ասել է, թե դիրքերի փոփոխություն է եղել, այժմ ադրբեջանցիներն ավելի ուժեղ են, հետևաբար ստիպված պետք է համակերպվել այդ վիճակին:

Պատերազմում պարտված ղեկավարը, կաշկանդված լինելով հոգեբանորեն և գուցե այլ առումներով, համակերպվել է, որ թշնամին շարունակելու է գրավել նորանոր գյուղեր, Հայաստանի սահմանների՝ ռազմավարական նշանակության բարձունքներ, դիրքեր, ճանապարհներ՝ ընդհուպ մխրճվելով հայկական քաղաքների ու գյուղերի տարածքներ և ուժով պարտադրելով իր առջև մնաց մնացած տեղացիներին զիջել հայկական բնագծերը, և ադրբեջանցի զինվորները ազատորեն շրջելու են հայկական սահմանային բնակավայրերում, երբ հայկական կողմը դժվարությամբ է կարողանում վերադարձնել իր գերիներին ու նահատակների մարմինները, իսկ հայ ժողովուրդը պետք է ոտնահարված արժանապատվությամբ համակերպվի այս ամենի հետ: Ծնկի բերված ղեկավարը պարտադրում է ողջ երկրին ծնկի գալ թշնամու առաջ՝ միաժամանակ ճակատագրական պահին հրաժարվելով կարևոր պարտականությունների կատարումից և այդ գործն ամբողջությամբ թողնելով ռուսական իշխանությունների ու զինվորականության բարի կամքին: Մյուս կողմից՝ միաժամանակ Հայաստանի իշխանության ղեկը ձեռքում պահելը բխում է նոյեմբերի 9-ին կնքված պայմանագրով շահագրգիռ ուժերի շահերից: Վերջիններիս համար լրիվ կանխատեսելի է իրենց ձեռնածուն դարձած անկամ ու հանձնված առաջնորդը, որի ձգձգվող իշխանության պայմաններում հնարավոր է դարձել ստանալ այն, ինչ նշված է հապճեպ կազմված կապիտուլյացիոն ակտում, և զիջումներ, որոնք չկան այդ փաստաթղթում ու անհասկանալի են մնում հայ ժողովրդի համար: Այսինքն՝ հեղհեղուկ փաստաթղթի կամ գուցե և դրա՝ մեզ համար անհայտ հավելվածների պայմաններում թուրքական առաջխաղացումը շարունակվում է, և, մյուս կողմից, թշնամին բացահայտորեն խոսում է Զանգեզուրի նկատմամբ իր հավակնությունների մասին: Ակնհայտ է, որ չեզոք գոտու և սահմանային միջանցքների վերացման, անկատար ու անհստակ հաշտության հայտարարության պայմաններում խիստ մեծացել է գալիք փոքր և մեծ բախումների հավանականությունը:

Կարծես թե ճիշտ պահն է՝ հիշելու նաև Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ հայ իրականության մեջ զարգացվող այն տեսակետը, ըստ որի՝ հայկական կողմն է իր ագրեսիվ քաղաքականությամբ խաթարել հայ-ադրբեջանական ու հայ-թուրքական բարիդրացիական հարաբերությունների հաստատման հնարավորությունը, և ազատագրված տարածք-

ների զիջումը պետք է հնարավորություն ստեղծի այդ հարաբերությունների բարելավման համար: Ինչպես տեսնում ենք, ազատագրված տարածքների ետգրավումը, Արցախի կեսի ու Շուշիի բարձունքի ձեռքբերումը, ինչպես և Մեղրիի միջանցքը ստանալու դարավոր երազանքի իրականացումը ավելի են գրգռել ադրբեջանցիների ու թուրքերի ախորժակը՝ տեսանելի դարձնելով պանթուրքական և պանթուրանական ծրագրերի կենսագործման հնարավորությունը: Այս էլ որերորդ անգամ ակնհայտ է դառնում, որ թուրքասերների թուրքական հաշվարկները քիչ առնչություններ ունեն թուրքերի սեփական հաշվարկների հետ, սակայն սա մեկ այլ ծավալուն խոսակցության թեմա է:

Թուրքերն ու ադրբեջանցիները գործում են արագ ու ագրեսիվ՝ փորձելով առավելագույնս նպաստավոր պայմաններ ստեղծել թե՛ Հայաստանի հետ հետագա հարաբերությունների և թե՛ տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական առումներով: Թուրքիան իրեն հավատարիմ ծայրահեղական իսլամիստներով բնակեցնում է Ադրբեջանին անցած մերձարաքսյան և Իրանին հարող սահմանագիծը: Կասկած չկա, որ այս տարրը վաղը անկայունության ու սադրանքների մշտական գործոն է դառնալու Հայաստանի ինչպես և Իրանի համար: Շատ հավանական է, որ այս հարցում ադրբեջանա-թուրքական տանդեմին լավ գործակից կարող է դառնալ նաև Իսրայելը: Մյուս կողմից՝ ահաբեկչական այս նիզակի հակառակ ծայրն ուղղվելու է դեպի արևելք՝ բացելու դեպի Կենտրոնական Ասիա տանող թուրքական մեծ երազանքի ճանապարհը, ինչպես և թափանցելու Ռուսաստանի մուսուլմանաբնակ և ոչ միայն մուսուլմանաբնակ հարավային գոտի: Այս տարածքներում ռուս-թուրքական կոշտ մրցակցությունը ոչ հեռավոր ապագայում սրվելու է ոչ միայն տարածքային ազդեցությունն ուժեղացնելու, այլև այդ տարածքներով անցնող էներգակիրների գծերի վրա գերիշխանություն հաստատելու համար:

Ռուս խաղաղապահների՝ տարածաշրջան մուտք գործելու համար անհրաժեշտ եղավ, որ ադրբեջանական կողմը՝ բավարարված, իսկ հայկական կողմը պարտադրված լիներ՝ ընդունելու նրանց ներկայությունը: Այդ սահմանագիծը Շուշին էր՝ Արցախի իրական տերը լինելու համար անհրաժեշտ ռազմավարական բարձունքը: Ավելին՝ հայկական շահերի գիտակցումից հեռու և ինչ-ինչ գործարքների մեջ խրված հայաստանյան իշխանությունները որպես վրադիր զիջեցին նաև հակամարտության հետ առնչություն չունեցող Մեղրիի միջանցքն ու չնախատեսված առավելագույնը ԵԱՀԿ փաստաթղթերում տասնամյակներով արձանագրված նախնական պայմանավորվածություններից:

Ռուսաստանն առայժմ հասել է իր ցանկությունների առաջին հանգրվանին, այն է՝ ոտքատեղ է ձեռք բերել Արցախում և այժմ ռազմականորեն արագ հաստատվում է այնտեղ: Ակնհայտ է, որ ոչ երկար ժամանակ անց հայաբնակ մնացած Արցախում աճելու է նաև Ռուսաստանի քաղաքական ազդեցությունը: Այսքանը բավարար կլինի՞ Ռուսաստանին՝ դիմակայելու էրդողանական Թուրքիային և թուրքապատկան դարձող ու ռուսական ազդեցությունը դանդաղորեն թոթափող Ադրբեջանին: Թվում է, որ ոչ. ազատ շարժումներ անելու համար արցախյան ներկայիս միջանցքը շատ նեղ է: Մյուս կողմից, ինչպես ասվեց, իշխելու է նա, ով իրական տերը կլինի Շուշիի և գուցե դրան հարակից տարածքների: Ռուս խաղաղապահները վաղը կարո՞ղ են հայտնվել Շուշիում, և ենթադրենք՝ Շուշին դառնա, այսպես ասած, տարբեր ժողովուրդների համակեցության օրինակ: Աշխարհաքաղաքական առումով Ի՞նչ է սպասվում Հայաստանն ու Արցախը ներառող այս տարածաշրջանում տեսանելի ապագայում: Անշուշտ, հարցը մեզ հետաքրքրում է մեր շահերի տեսանկյունից, և այս առումով քիչ չեն նաև մտահոգությունների տեղիք տվող վարկածները. Հայաստանը ապագայի մեծ հաշիվներում հանդես է գալու որպես օբյե՞կտ, թե՞ սուբյեկտ:

Սեփական բախտի ղեկը իր ձեռքով և իր ուզած ուղղությամբ Հայաստանը կկարողանա թեքել միայն համարժեք ուժ ունենալու դեպքում: Առայժմ նրա ունեցած նվազ ուժն էլ է ջլատվում: Առայժմ նրան ցանկանում են ներքաշել ոչ պակաս վտանգավոր արկածախնդրությունների մեջ, ինչպիսիք են, օրինակ, ծնկած վիճակում Ադրբեջանի ու Թուրքիայի հետ հարաբերությունների հաստատման և համագործակցության պայմանագրերի կնքումը, առևտրային հարաբերությունների հաստատումը և այլն: Հիշենք, որ երբ անցած դարի 90-ականներին հարաբերությունների հաստատման խաղ էր նախաձեռնում Լևոն Տեր-Պետրոսյանը, նրա առջև դրվեցին հայ-թուրքական սահմանը ճանաչելու, ցեղասպանության հարցից հրաժարվելու և այլ նախապայմաններ: Նույնը տեղի ունեցավ նաև Սերժ Սարգսյանի նախագահության օրերին: Այս հարցում հուշող հանգամանք կդառնան նաև Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի կնքման 100-րդ տարելիցները: Եվ այս ճակատագրական մարտահրավերների պայմաններում հայ ժողովրդին ներկայացնում է նրա շահերի հաշվին առևտուր անելու պատրաստակամ ապազգային իշխանությունը: Որպես սկզբնական քայլ՝ առաջնահերթություն է այս աղետաբեր իշխանություններից ազատվելու հրամայականը: ■

Նոր հիմքերի վրա կառուցենք մեր պետականությունը: Ազգային գաղափարախոսությունը պետք է դարձնել պետականության հիմքը

Հարցազրույց ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանի հետ

-Պարո՛ն Սաֆրաստյան, Խորհրդային Միության փլուզումից հետո ակնհայտ դարձավ Թուրքիայի ագրեսիվ հետաքրքրությունը Կովկասի ու մասնավորապես Հայաստանի նկատմամբ: Թուրքիայի ախորժակը, սակայն, միշտ զսպել է տարածաշրջանում ռուսական գործոնի առկայությունը: 2020 թվականի սեպտեմբերին, բոլորի համար անակնկալ, Թուրքիան համարեց, որ կարող է ուղղակիորեն մասնակից դառնալ Արցախի դեմ պատերազմի՝ Ադրբեջան բերելով զինվորական մասնագետների, հատուկ պատրաստության ուժեր ուղղակիորեն իր գլխավոր շտաբին հանձնելով ռազմական գործողությունների ղեկավարումը: Ի՞նչ հանգամանքներ նրան վստահություն ներշնչեցին, թե եկել է հարմար պահը, երբ կարող է ոտնձգություն թույլ տալ ավանդաբար ռուսական ազդեցության գոտի համարվող տարածաշրջանի նկատմամբ:

-Այս հարցին պատասխանելու համար խնդրի մի քանի շերտ դիտարկենք: Առաջինն այն է, որ վերջին 2-3 տարվա ընթացքում Թուրքիան կտրուկ փոխեց իր արտաքին քաղաքականությունը և անցավ ծավալապաշտական քաղաքականության, որի հիմքում դրեց զինված ուժերի օգտագործումը կամ տեղակայումը: Ներկայումս Թուրքիայի զինված ուժերը գտնվում են աշխարհի 13-14 երկրում տարբեր հանգամանքներում: Եվ իր զինված ուժերը տեղակայելու համար նա սկսեց տարբեր տարածաշրջաններում խառնվել դրանցում գոյություն ունեցող հակամարտություններին կամ այդ հակամարտություններն ավելի սրել կամ այնպիսի քայլեր ձեռնարկել, որոնք տանում են հակամարտությունների առաջացմանը: Եվ մենք տեսանք, որ Թուրքիան այդ քաղաքականությունը կիրառում է ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես էլ արդեն Միջերկրական ծովի արևելյան շրջաններում, Հյուսիսային Աֆրիկայում և այլուր: Եթե այդ տեսանկյունից դիտարկենք այն, ինչ որ արեց Թուրքիան Արցախի նկատմամբ, դա հենց այդ նույն քաղաքականության շարունակությունն է:

Երկրորդ շերտը կապված է այն հանգամանքի հետ, որ երբ Թուրքիան վերջին տարիներին սկսեց իրականացնել այս քաղաքականությունը, պարզվեց, որ դժգոհություններ կան, այլ պետություններ, այդ թվում՝ Ռուսաստանը, փորձում են հակազդել նրան, բայց վերջիվերջո Թուրքիային հաջողվում է հասնել իր նպատակներին և անպատիժ դուրս գալ բոլոր այդ հակամարտություններից, որ ինքն է

հրահրել կամ ավելի է արագացրել դրանց ընթացքը: Սա նաև կարևոր հանգամանք էր Թուրքիայի համար: Նա հասկացավ, որ կարող է իր այդ ծավալապաշտական, արկածախնդրական քաղաքականությունն իրականացնել ինչպես տարբեր տարածաշրջաններում, նույնպես էլ Արցախում:

Երրորդ շերտը բուն Ռուսաստանին առնչվող խնդիրներն են: Ռուսաստանն ու Թուրքիան, իմ խորին համոզմամբ, մնում են ռազմավարական հակառակորդներ: Դա և՛ պատմականորեն է գալիս, և՛ այսօրվա աշխարհաքաղաքական իրողություններից: Եվ դրա արտահայտությունը մենք տեսնում ենք տարբեր տարածաշրջաններում, օրինակ՝ մեր տարածաշրջանում, որտեղ երկուսի նպատակները տարբեր են և հակադիր: Ռուսաստանն ուզում է պահել իր ազդեցությունը Հարավային Կովկասում, Թուրքիան ուզում է այստեղ իր ազդեցությունն ուժեղացնել: Բայց վերջին տարիներին մենք ականատես եղանք նաև այն իրողությանը, որ այս երկու երկրները կարողանում են մարտավարական հարցերում գալ համաձայնության և իրենց շահերը, որոնք ընդհանուր առմամբ հակադիր են, կարողանում են նաև համատեղել: Դա մենք որոշ չափով տեսնում ենք արդեն Լիբիայում: Ես համոզված եմ, որ Թուրքիայի ղեկավարությունը, ինչպես Էրդողանը, այնպես էլ գլխավոր շտաբը, որ որոշում ընդունեցին այս պատերազմի մասին, հաշվի առան այն հանգամանքը, որ հնարավոր է հասնել նրան, որ Ռուսաստանը սուր չարձագանքի իրենց այդ քայլերին, այդ քաղաքականությանը:

Չորրորդ շերտը կապված է զուտ քաղաքական իրողությունների, պահի հետ: Շատ լավ հաշվարկված էր այդ պահը: Հաշվարկված էր, որ աշխարհը գտնվում

է համաճարակի պայմաններում, և շատ երկրներ հիմնականում դրանով են զբաղված, որ պետք է տեղի ունենային և տեղի ունեցան ընտրություններ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որոնք իրադրությունն այդ երկրում սրեցին, և ամերիկյան ղեկավարության, վարչակազմի ուշադրությունը հիմնականում դրանց վրա էր կենտրոնացած: Հաշվի առնվեց այն հանգամանքը, որ Ռուսաստանը գտնվում է ուժեղ ճնշման ներքո՝ կապված Բելառուսի իրադարձությունների, Նավալնիի գործի հետ, և ընդհանրապես վերջին տարիներին Արևմուտքն ուժեղ ճնշում է գործադրում Ռուսաստանի վրա: Այդ բոլոր հաշվարկներն արվեցին, և ընտրվեց պահը՝ հարձակվելու, այդ ագրեսիան սկսելու համար:

Հինգերորդ շերտը հետևյալն է: Ես համոզված եմ, որ հաշվի առնվեցին նաև այն քաղաքական իրողությունները, որոնք ձևավորվել էին Հայաստանում, հայ-ռուսական հարաբերություններում: Այնպես որ այս բոլոր հանգամանքները հաշվի առնվեցին, և որոշում ընդունվեց պատերազմ, ագրեսիա սկսելու Արցախի դեմ:

- 44 օրյա ռազմական գործողություններից և մանավանդ ստորագրված հայտարարությունից հետո կարծես թե շրջանում նոր դրություն ձևավորվեց: Ի՞նչ ստացան Ադրբեջանն ու Թուրքիան ֆիզիկապես և աշխարհաքաղաքական հնարավորությունների առումով:

-Առաջինը պետք է նշենք, որ մեր տարածաշրջանում ընդհանուր առմամբ փոխվեց աշխարհաքաղաքական պատկերը: Փոխվեց, մի կողմից, այն առումով, որ Ռուսաստանն իր դիրքերն ուժեղացրեց՝ հնարավորություն ստանալով խաղաղապահ զորքեր տեղակայելու, որոնք նոր գործոն են դառնում տարածաշրջանում: Եթե մինչ այդ Ռուսաստանը Հարավային Կովկասի տարածաշրջանում միայն Հայաստանում ուներ զինված ուժեր, այժմ արդեն ունի նաև Ադրբեջանի տարածքում, Արցախի սահմանի երկայնքով: Սա նոր իրողություն է աշխարհաքաղաքական առումով և վկայում է Ռուսաստանի դիրքերի ուժեղացման մասին:

Երկրորդը Թուրքիայի գործոնն է: Թուրքիան, իհարկե, ես համոզված եմ, որ շատ ավելի մեծ ծրագրեր ուներ, նրա ախորժակն ավելի մեծ էր, երբ, ըստ էության, հրահրում էր այս պատերազմը: Թուրքիայի հիմնական նպատակն էր համաձայնության գալ Ռուսաստանի, այսինքն՝ իր հիմնական հակառակորդի հետ մեր տարածաշրջանում՝ իր զորքերը տեղակայելու Արցախի երկայնքով, նույնիսկ Արցախի տարածքում, բայց դա նրան չհաջողվեց: Ես կասեի՝ մարտավարական, դիվանագիտական բավական մեծ վարպետություն էր, որ ցուցաբերեց Ռուսաստանը, մասնավորապես՝ Պուտինը, որը կարողացավ այնպես անել, որ Թուրքիան չստանա այդ իրավունքը, և ես համոզված եմ, որ այդպես էլ թույլ չի տա: Այսինքն՝ իր հիմնական նպատակին Թուրքիան չհասավ: Մյուս

նպատակը, որ մենք այժմ տեսնում ենք, այն է, որ Թուրքիան փորձում է ռուս-թուրքական համատեղ մշտադիտարկման կենտրոնի շրջանակներում իր ներկայացուցիչների միջոցով, որոնք պետք է այդ կենտրոնին մաս կազմեն, իրականացնել Արցախի տարածքում մշտադիտարկում, այսինքն՝ թուրքական զինված ուժերի ներկայացուցիչներ հաստատել Արցախի տարածքում մշտադիտարկման պատրվակով: Ռուսները դրան էլ չեն համաձայնում և հայտարարում են, որ մշտադիտարկումը պետք է լինի միայն տեխնիկական միջոցներով: Այս երկու հանգամանքները վկայում են, որ Թուրքիան չհասավ իր նպատակներին:

Երրորդ հանգամանքը հետևյալն է. Թուրքիան, ի տարբերություն Ռուսաստանի, հենց առաջին օրվանից հրապարակայնորեն հայտարարելով, որ աջակցում է Ադրբեջանին, իրավունք ստացավ ռուսների կողմից մաս կազմելու այդ խաղաղապահ ուժերի մշտադիտարկման կենտրոնին: Այսինքն՝ չլինելով չեզոք (նեյտրալ) երկրի ներկայացուցիչ՝ Թուրքիան, ըստ էության, այնպիսի գործառույթներ կարողացավ սակարկել իր համար, որոնք վկայում են, որ նա պետք է մաս կազմի այդ խաղաղապահ գործողություններին: Սա, իհարկե, թվում է, փոքր նվաճում է, բայց ես կարծում եմ՝ սա Թուրքիայի համար ունի խորհրդանշական նշանակություն, քանի որ նա հետխորհրդային շրջանում առաջին անգամ արդեն լեգիտիմ իրավունք է ստանում նաև իր զինված ուժերի ներկայությունը, չնայած շատ սահմանափակ, մշտադիտարկման կենտրոնի շրջանակներում և այլն, ամրագրելու մեր տարածաշրջանում: Սա, կարելի է ասել, Թուրքիայի կողմից առաջին քայլն է իր մեծ նպատակի իրագործման ճանապարհին: Ես կարծում եմ, որ Թուրքիան կձգտի իր նպատակն իրականացնել, իսկ այդ նպատակը հետևյալն է՝ հնարավորինս Ռուսաստանին դուրս մղել տարածաշրջանից և տարածաշրջանը, այսինքն՝ Հարավային Կովկասը, դարձնել իր ազդեցության ոլորտը: Ես՝ որպես պատմաբան, կարող եմ նշել, որ, 1914 թվականից սկսած, Թուրքիան մի քանի անգամ փորձել է նվաճել Հարավային Կովկասը և ընդհանրապես Կովկասը՝ և՛ 1914 թվականի դեկտեմբերին, և՛ 1918 թվականի գարնան ու ամռան ամիսներին, և՛ 1920 թվականի

աշնանը: Առաջին անգամ դա նրան չհաջողվեց. Թուրքական զորքերը ռուսներից պարտություն կրեցին Առաջին համաշխարհային պատերազմում, այսպես կոչված, Սարիղամիշի գործողության շրջանակներում: 1918 թվականին նրանք 3 ուղղությամբ էին հարձակվել մեր տարածաշրջանի վրա: Առաջինը, իհարկե, Հայաստանն էր, բայց Սարդարապատում կանգնեցվեցին մեր ժողովրդի կողմից հերոսական ճակատամարտի միջոցով, թեև հասան մինչև Բաքու: 1920 թվականին նորից հարձակվեցին Հայաստանի վրա և կարողացան բոլշևիկների հետ կիսել Հայաստանը: 1941-1942 թվականներին կրկին պատրաստվում էին հարձակման Հարավային Կովկասի վրա, բայց նացիստական Գերմանիան պարտություն կրեց Ստալինգրադի ճակատամարտում, և դրանից հետո նրանք ետ կանգնեցին իրենց ծրագրերից: Այնպես որ Թուրքիայի հիմնական նպատակներից մեկը միշտ եղել է նվաճել Հարավային Կովկասը: Խորհրդային Միության փլուզումից հետո այդ ծրագիրը փոքր-ինչ փոխվեց. Ոչ թե տարածքային առումով նվաճել, միացնել իրեն, այլ ազդեցության ոլորտ դարձնել և այդպիսով դառնալ այս տարածաշրջանի միակ տերն ու տիրակալը: Եվ ես կարծում եմ, որ այդ նպատակը նրանք կշարունակեն իրականացնել, ամեն դեպքում կփորձեն: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա, իհարկե, Ադրբեջանի հաղթանակը կարևոր է, բայց նաև խնդիրներ կառաջանան Ադրբեջանի համար, ես համոզված եմ, կապված, օրինակ, այն հանգամանքի հետ, որ վարձկանները մնալու են այնտեղ: Թուրքիան ոչ մի ցանկություն չունի նրանց այնտեղից դուրս բերելու: Դեռ ավելին՝ արդեն տեղեկություն կա, որ ծրագրում է, այդ վարձկանների ընտանիքներին տեղափոխել Ադրբեջան և բնակեցնել այն տարածքներում, որոնք Ադրբեջանը Արցախից զավթել է այս ագրեսիվ պատերազմի հետևանքով: Դա ճնշման գործիք ու զենք է լինելու Թուրքիայի համար ոչ միայն Արցախի և Հայաստանի, այլև Ադրբեջանի դեմ՝ վերջինիս ավելի հնազանդ պահելու համար: Նշեմ մի հանգամանք ևս Ադրբեջանի վերաբերյալ: Պատերազմը ցույց տվեց, որ Ադրբեջանը կորցնում է իր ինքնիշխանությունը և գնալով դառնում է Թուրքիայի արբանյակ պետություն: Թուրքացվում է Ադրբեջանը: Պատահական չէ, որ թուրք-ադրբեջանական գործոնը ես միասնական եմ ընկալում, ինչը նշանակում է, որ թուրք-ադրբեջանական գործոնը մեր տարածաշրջանում պանթուրքիստական ծրագրեր իրականացնող համատեղ գործոն է, իհարկե, Թուրքիայի գլխավորությամբ: Նպատակները գեոստրատեգիայի առումով վերջիվերջո պանթուրքիստական են: Այդ նպատակների տեսանկյունից պետք է դիտարկել այն հանգամանքը, որ Ադրբեջանը, իսկ իրականում նաև Թուրքիան հնարավորություններ ստացան Նախիջևան-Ադրբեջան ճանապարհի միջոցով: Արդեն Թուրքիայում հնչում են ծրագրեր, որ այստեղ պետք է նաև թուրքական երկաթգիծը վերանորոգեն և գործարկեն: Նպատակը այստեղ ևս պանթուրքիստական է. Թուրքիայի և Ադրբեջանի միջոցով հնարավորություն ստանալ ուղղակի կապ հաստատելու և դրանով շարունակելու պանթուրքիստական ծրագրերի իրականացումը դեպի Կասպից ծովի մյուս՝ արևելյան ափ, դեպի Կենտրոնական Ասիա և այլն: Այս ամենը պետք է նաև աշխարհաքաղաքական տեսանկյունից դիտարկել որպես պանթուրքիստական լայն ծրագրերի իրականացման ուղղությամբ կատարվող քայլեր:

Ասիկա-իսլամական պետությունների կոնֆեդերացիա

-Պարո՛ն Սաֆրաստյան, բոլորի համար ակնհայտ են այսօրվա Թուրքիայի պանթուրքական, պանթուրանական հավակնությունները և այս երկրի, այսպես ասած, նորահայտ սուլթանի ագրեսիվ ձգտումները իրականություն դարձնելու իր ցնորական ծրագրերը: Արդյոք Թուրքիան ներկայումս ունի՞ քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ համապատասխան ներուժ՝ իրականացնելու իր երազանքները, և Ձեր կարծիքով՝ աշխարհը մշտապես հանդուրժելո՞ւ է վերջինիս այս պահվածքը:

Հաշվի առնելով այն ծավալապաշտական քաղաքականությունը, որ Թուրքիան այժմ վարում է ոչ միայն պանթուրքիստական, այլև նեոօսմանականության առումով, այսինքն՝ նախկին Օսմանյան կայսրության տարածքում իր իշխանությունը և ազդեցությունը տարածելու ուղղությամբ, որն իրականացվում է արդեն այլ տարածաշրջաններում, ինչպես և պանթուրքական ծրագիրը, որը մեր տարածաշրջանում է իրականացվում, ես կարծում եմ, որ ոչ, Թուրքիան այդպիսի ռեսուրսներ և ներուժ չունի: Բայց Էրդողանի քաղաքականության ու ռազմավարության առանձնահատկությունն այն է, որ իրենց էությամբ դրանք արկածախնդրական են: Նա դիմում է վաբանկ քայլերի՝ հետևանքները թողնելով ապագային: Ես սպասում եմ, որ Թուրքիան պետք է սպառի իր ռեսուրսները մոտ ապագայում, բայց նա գնում է այդ քայլերին, որովհետև այդ քաղաքականությունն իրեն պետք է նաև ներքաղաքական նպատակներով: Նա խնդիրներ ունի ներքին քաղաքականության մեջ, արդեն հաղորդագրություններ կան, որ կուսակցության վարկանիշն իջել է 30 տոկոսից: 2023 թվականին և՛ խորհրդարանական, և՛ նախագահական ընտրություններ կան: Դա շատ կարևոր տարեթիվ է Թուրքիայի համար. Լրանում է Թուրքիայի Հանրապետության 100-ամյակը: Էրդողանն ամեն ինչ անում է, որ ծավալապաշտական քաղաքականությունը ծառայեցնի 2023 թվականի իր նպատակին՝ հանդես գալու Երկրորդ հանրապետության՝ նոր Թուրքիայի հիմնադիր: Նա գնում է վաբանկ քայլերի և այնպիսի քաղաքականություն է վարում, որը թուրքական ռեսուրսների համար բավական վտանգավոր է, թեև մինչ օրս ռեսուրսները Թուրքիային հերիքում են: Ինչ վերաբերում է աշխարհի կողմից հակազդեցությանն առնչվող հարցին, ապա պետք է այս մի քանի տարիների օրինակը դիտարկենք: Հաջողվել է Թուրքիային, ցավոք սրտի, տարբեր տարածաշրջաններում և՛ զորք տեղակայել, և՛ զորք օգտագործել, և՛ հակամարտությունները սրել ՆԱՏՕ-ի անդամ պետությունների դեմ: Այս ամենը վկայում է, որ Թուրքիային և Էրդողանին հաջողվում է այդ քաղաքականությունն իրականացնել, և մեծ ճնշման ու հակազդեցության իր այդ քաղաքականությունը չի հանդիպում: Մի կողմից դա արդյունք է Թուրքիայի առանձնահատուկ աշխարհագրական դիրքի, երբ Արևմուտքը չի ուզում կորցնել Թուրքիային որպես դաշնակից, մյուս կողմից՝ այն բանի, որ Ռուսաստանի հետ կարողանում է մարտավարական առումով գտնել համագործակցության շրջանակներ, օրինակ՝ Սիրիայում: Կարելի է ասել, որ դա արդյունք է նաև Էրդողանի դիվանագիտության, որն արկածախնդրական ու ռիսկային է, վտանգավոր է ոչմիայն տարածաշրջանում հարևանների, այլև Թուրքիայի համար: Մենք պետք է լավ գիտակցենք, որ Էրդողանը որքան էլ թվում է, թե անմիտ գործողություններ է անում, վտանգավոր իր երկրի համար, բայց իրականում նա նաև հաշվարկում և հասկանում է կարմիր գծերը: Գնալով այդպիսի արկածախնդրությունների՝ նա աշխատում է ամենատարբեր տարածաշրջաններում կարմիր գծերը չանցնել, օրինակ՝ Հունաստանի հետ հարաբերություններում և Միջերկրական ծովի արևելյան շրջանում Ռուսաստանի հետ հարաբերություններում: Այսինքն՝ երբ նա զգում է կարմիր գիծը, ետ է նահանջում: Այնպես որ Թուրքիան կարողանում է իր նպատակներն իրականացնել: Ես չեմ տեսնում հնարավորություն, որ կարող է Թուրքիայի նկատմամբ լուրջ հակազդեցություն լինել, օրինակ, որ կարող է Եվրամիությունը լուրջ պատժամիջոցներ սահմանել Թուրքիայի դեմ: Իմ խորին համոզմամբ՝ միայն 2 երկիր կարող են, եթե ցանկանան, Թուրքիային զսպել: Մեկը Ամերիկայի Միացյալ Նահանգներն է, որը եթե իր տնտեսական լծակների շատ փոքր մասն օգտագործի, թուրքական տնտեսությունը շատ մեծ հարված կստանա: Մենք դրա օրինակն ունենք՝ կապված ամերիկացի բողոքական պատվելի Բենսոնի հետ: ԱՄՆ-ի հետ ճգնաժամն առաջացավ, երբ 2 տարի առաջ թուրքերը ձերբակալեցին այդ մարդուն, որը տարիներ շարունակ ապրում էր Թուրքիայում: Բանտ նետեցին նրան և ուզում էին փոխանակել ԱՄՆ-ում գտնվող ընդդիմադիր գործիչ Ֆեթուլլահ Գյուլենի հետ, որն առաջին թշնամին է Թուրքիայի, ինչպես հայտարարել է Էրդողանը: Ամերիկացիները, իհարկե, չգնացին այդ փոխանակմանը, բավական սահմանափակ պատժամիջոցներ մտցրին 2 թուրք նախարարի նկատմամբ և ամենակարևորը՝ թուրքական պողպատի ու երկաթի՝ ԱՄՆ արտահանման մաքսավճարը բարձրացրին, և դա այնպիսի մեծ ազդեցություն ունեցավ Թուրքիայի վրա, որ նա կարճ ժամանակ անց ստիպված էր զիջել: Բաց թողեցին այդ պատվելիին, և դրանով սուս ու փուս ամեն ինչ ավարտվեց: Այսինքն՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները Թուրքիայի վրա ազդելու մեծ լծակներ ունի, բայց Թրամփի վարչակազմը դրանք չէր կիրառում: Տեսնենք՝ ինչպես կվարվի Բայդենը, որը կարծես թե ավելի անհանդուրժողական տրամադրվածություն ունի Թուրքիայի նկատմամբ:

Երկրորդ երկիրը Ռուսաստանն է, որը հնարավորություն ունի իր զինված ուժերի հզորությամբ Թուրքիային զսպելու: Բայց մենք տեսանք, որ Ռուսաստանը Թուրքիայի հետ այլ

քաղաքականություն է վարում, իհարկե զսպում է, սակայն Թուրքիան էլ իր կողմից փորձում է Ռուսաստանի հետ լեզու գտնել, տարբեր հարցերում համագործակցել, և երբ մոտենում է կարմիր գիծը, երկուսն էլ փորձում են այն չանցնել: Այս 2 երկիրը կարող են Թուրքիային զսպել, բայց, ինչ-ինչ հանգամանքներից ելնելով, չեն զսպում:

-Տարածաշրջանային այս նոր իրողությունները ի՞նչ հավելյալ վտանգներ ու սպառնալիքներ են ստեղծում այլ երկրների, մասնավորապես՝ Վրաստանի, Ռուսաստանի, միջինասիական հանրապետությունների համար:

-Այն փոփոխությունները, որոնք տեղի ունեցան մեր տարածաշրջանում, և որոնց մասին խոսեցինք, փոխեցին աշխարհաքաղաքական իրադրությունը և իրենց էությամբ վտանգ են ներկայացնում ոչ միայն Հայաստանի, այլև, օրինակ, Վրաստանի համար, որովհետև վարձկանները, որոնք գտնվում են Ադրբեջանի տարածքում, կարող են օգտագործվել և Վրաստանի դեմ՝ նրա վրա ճնշում գործադրելու համար: Մյուս կողմից՝ նշվեց, որ Թուրքիայի պանթուրքիստական նպատակները տարածվում են դեպի Կենտրոնական Ասիա, և այստեղ Թուրքիան նույնպես նպատակ ունի իր ռազմական համագործակցությունն ուժեղացնելու: Մենք տեսանք, որ այս պատերազմից առաջ և դրա ընթացքում Թուրքիայի և կենտրոնաասիական մի շարք երկրների միջև ստորագրվեցին պայմանագրեր՝ ռազմական ոլորտում համագործակցությունն ուժեղացնելու ուղղությամբ: Զգացվում է, որ Թուրքիան ձգտում է նոր որակ հաղորդել ու իր պանթուրքիստական ծրագրերին և դրա համար օգտագործում է թուրքական երկրների կազմակերպությունը: Այդ շրջանակներում կան խոսակցություններ, որ Թուրքիան ուզում է ստեղծել միասնական թուրքական զինված ուժեր, Թուրանի զինված ուժեր և այլն: Դրանք, իհարկե, խոսակցություններ են: Ստույգ բան դեռևս չկա, բայց մենք պետք է արձանագրենք, որ վերջին մի քանի ամիսներին ռազմական համագործակցության առումով Թուրքիան ակտիվությունը կտրուկ մեծացրել է Կենտրոնական Ասիայի երկրներում: Սա փաստ է: Մյուս կողմից, իհարկե, պանթուրքիզմը վտանգ է բոլոր այն երկրների համար, որոնցում կա թուրքալեզու բնակչություն: Մեծաթիվ թուրքալեզու ժողովուրդներ ապրում են Ռուսաստանում, և պանթուրքիզմը Ռուսաստանի համար իրական վտանգ է: Ես համոզված եմ, որ ռուսները դա շատ լավ գիտեն և պայքարում են դրա դեմ: Ես չեմ բացառում՝ երբ գա մի պահ, որ ռուս-թուրքական հարաբերությունները վատանան կամ սրվեն, Թուրքիան կսկսի պանթուրքիզմի իր մահակն օգտագործել Ռուսաստանի դեմ, ինչպես, օրինակ, այդ հնարավորությունը նա իր ձեռքում պահում է Չինաստանի հետ հարաբերություններում՝ կապված Արևելյան Չինաստանի, այսպես կոչված, ույղուրների հետ: Այնպես որ Թուրքիայի ծավալապաշտական ծրագրերն են ստեղծել պանթուրքիստական այդ մեծ դաշինքը՝ իր ղեկավարությամբ, որը ճնշման միջոց է տարբեր երկրների նկատմամբ, որոնցում կան, բնակվում են թուրքալեզու ժողովուրդներ: Իմիջիայլոց, գորշ գայլերի կազմակերպությունները, որոնք հիմնականում այդ պանթուրքիստական գաղափարների կրողներն ու գործիքներն են, լայնորեն գործում են եվրոպական մի շարք երկրներում: Այստեղ էլ այդ վտանգը կա, և գործում են նրանք՝ Անկարայի հրամաններին ենթարկվելով, թուրքական հետախուզության կողմից ղեկավարվելով: Նոր-նոր մենք տեսնում ենք, որ եվրոպական երկրները հասկանում են այդ վտանգը: Սկզբում Ավստրիան, իսկ վերջերս էլ Ֆրանսիան արգելեցին գորշ գայլերի գործունեությունը: Գերմանիայում է քննարկվում այդ հարցը: Գորշ գայլերն ակտիվ են, օրինակ, Բելգիայում, սկանդինավյան երկրներում: Այնպես որ պանթուրքիզմը վտանգ է նաև եվրոպական երկրների համար:

Մի հանգամանքի վրա էլ եմ ուզում կանգ առնել, որի մասին մեզանում քիչ է խոսվում, բայց դա էլ իր տեղն ունի վերջին տարիների թուրքական արտաքին քաղաքականության մեջ: Դա հետևյալն է: Թուրքիան ձգտում է շատ կտրուկ և արագ ամրապնդելու իր դիրքերը մահմեդական աշխարհում, և Էրդողանն էլ ձգտում է դառնալու մահմեդական աշխարհի ամենամեծ առաջնորդը: Եվ սա ոչ միայն ձգտում է, այլև քաղաքականություն: 2 հանգամանք կարելի է նշել: Էրդողանի ամենամտերիմ մարդկանցից մեկի՝ նախկին գեներալ Արնան Թանրվերդիի ղեկավարությամբ, որը մինչև այս տարվա հունվարը եղել է Էրդողանի գլխավոր խորհրդականը, գործում է մի կազմակերպություն, որը բացահայտ հայտարարում է, թե իր նպատակն է նպաստել այն բանին, որ ստեղծվի 61 երկրից կազմված մուսուլմանական համադաշնություն, որի մայրաքաղաքը պետք է լինի Ստամբուլը: Եվ նույնիսկ այդ համադաշնության անունն են նրանք որոշել՝ Ասրիկա, որը նշանակում է Ասիա և Աֆրիկա: Այդ կազմակերպությունը տարիներ շարունակ գործում է, ամեն տարի անցկացնում է իր խոշոր կոնֆերանսները, որոնց հրավիրվում են այդ երկրների ներկայացուցիչները, և ամեն անգամ մի խնդիր է քննարկվում, օրինակ՝ այս տարի պետք է քննարկվի ապագա Ասրիկա համադաշնության ռազմական բնագավառը: Դա՝ մեկ, իսկ մյուսն այն է, որ տեսնում ենք՝ մուսուլմանական մի շարք երկրներում, մանավանդ՝ ոչ արաբական, Թուրքիան սկսել է ակտիվորեն գործել, օրինակ՝ Պակիստանի հետ Թուրքիայի համագործակցությունը: Պիտի չմոռանանք, որ Պակիստանն այն երկիրն է, որն ունի միջուկային զենք և բազմիցս պաշտոնապես հայտարարել է, որ իր միջուկային զենքը մուսուլմանական միջուկային զենք է: Նաև կան տվյալներ, որ համագործակցում է, օրինակ, Մալայզիայի հետ, որը ևս մուսուլմանական երկիր է: Եվ դա առաջին հերթին ուղղված է արաբական աշխարհի այն խոշոր և հեղինակավոր

պետությունների դեմ, որոնք մուսուլմանական աշխարհում մեծ հեղինակություն ունեն, օրինակ՝ Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան: Պատահական չէ, որ այդ երկրների հետ Թուրքիայի հարաբերությունները լարված կամ սրված են: Այսինքն՝ Թուրքիան, ըստ էության, նաև արաբական աշխարհի դեմ է գործում: Այստեղ, կարելի է ասել, նրա դաշնակիցը միայն Քաթարն է, որտեղ գտնվում են թուրքական զինված ուժեր: Թուրքիան չի վախենում իր այդ մեծապետական նպատակները մուսուլմանական աշխարհում իրականացնելու համար հակամարտության մեջ մտնել նաև հիմնական արաբական երկրների հետ: Սա թուրքական քաղաքականության՝ վերջին տարիների առանձնահատկությունն է:

–Ձեր կարծիքով՝ չափից ավելի չհապաղեց Ռուսաստանը գործնականորեն հակամարտությանը միջամտելու հարցում և ինչ խնդիրներ լուծեց կոնկրետ ու լայն առումներով Արցախի մնացած տարածքում՝ Ադրբեջանի տիրապետությանն անցած բնակավայրերի հետ շփման գծում տեղակայելով իր խաղաղապահներին:

–Մենք կարող էինք, իհարկե, սպասել, որ Ռուսաստանը կարող է այնպես օգնություն ցույց տալ Հայաստանին, ինչպես բացահայտ ցույց է տալիս Թուրքիան Ադրբեջանին, մանավանդ որ մենք ունենք համագործակցության մասին պայմանագիր, ռազմաքաղաքական դաշնակցային հարաբերություններ Ռուսաստանի հետ: Բայց, մյուս կողմից, Ռուսաստանը, այդպիսի քաղաքականություն վարելով, որին մենք ակամատես եղանք, կարողացավ հասնել զինադադարի, երբեմն նաև միջնորդի դեր ստանձնել: Եթե նա այդպիսի քաղաքականություն չվարեր, ապա չէր կարող նաև միջնորդի դեր ստանձնել: Մենք պետք է գնահատենք, որ Ռուսաստանը ստանձնեց միջնորդի դեր և վերջիվերջո այն ձևով, ինչպես որ մենք տեսանք, այնուամենայնիվ նպաստեց, որ ռազմական գործողությունները դադարեն: Նա իր վրա վերցրեց խաղաղապարար դերակատարությունը, ընդորում, հումանիտար մեծ օգնություն է ցույց տալիս և ցույց կտա, որը, կարծում եմ, պետք է գնահատել շատ բարձր: Ես համոզված եմ, որ մեր քաղաքականությունը պետք է նպատակ ունենա մոտ ապագայում Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունները հասցնելու շատ ավելի բարձր մակարդակի: Դա պետք է իրականացվի նաև ամենատարբեր բնագավառներում՝ և՛ ռազմական, և՛ քաղաքական, և՛ հետախուզական, և՛ վերլուծական շրջանակներում և այլն, որովհետև մենք, կարող ենք ասել, համոզվեցինք, որ մեր միակ դաշնակիցը, որը ռեալ օգնություն ցույց տվեց մեզ, Ռուսաստանն է: Ես դրանում չեմ կասկածում: Ես բարձր եմ գնահատում այն քաղաքականությունը, որը Ռուսաստանը վարում է: Ես համոզված եմ, որ դա նաև հնարավորություն կտա պահպանելու այն, ինչ որ մնացել է Արցախից: Իսկ դրան նպաստում է նաև խաղաղապահների տեղակայումը, ինչը մեզ համար ունի շատ կարևոր նշանակություն: Դա հնարավորություն է տալիս, որ բնակչությունը վերադառնա Արցախ: Մյուս կողմից՝ իր աշխարհաքաղաքական նպատակները Ռուսաստանը, կարծում եմ, նույնպես իրականացրեց, ուժեղացրեց իր դիրքերը մեր տարածաշրջանում:

–Ակնհայտ է, որ Ռուսաստանի միջնորդությամբ Հայաստանի ու Ադրբեջանի միջև կնքված հայտարարությունը անօրինական է, թերի է ու թերություններով լի, սակայն այսօր այն գործում է: Տեղի ունեցողի նկատմամբ Հայաստանի իշխանությունների բացարձակ հաշտվողականության պայմաններում Ադրբեջանի կողմից խաղաղ ճանապարհով յուրացվում են Արցախի բնակավայրերը, ոտնձգություններ թույլ տրվեցին նույնիսկ Հայաստանի սահմանամերձ տարածքների նկատմամբ: Այնուամենայնիվ, ստորագրված փաստաթուղթը որքանո՞վ եք ամուր համարում նաև տեսանելի ապագայում կենսունակ լինելու առումով: Այն լուծե՞լ է արդյոք տարածաշրջանում երկարատև խաղաղության խնդիրը: Մյուս կողմից մենք ինչ անելիքներ ունենք առաջիկայում մեր երկրի համար երաշխավորված ապագա ապահովելու համար:

– Գոնե այս դրությամբ տարածաշրջանում խաղաղության հաստատումը առաջին հերթին ես պայմանավորում եմ ռուսական խաղաղապահ ուժերի ներկայությամբ, որովհետև փաստաթուղթն իսկապես թերություններ ունի, և պետք է մեր դիվանագիտությունը կարողանա այդ թերություններից որոշ բան շտկել: Իհարկե, մեծ բան հնարավոր չէ, բայց պետք է փորձել պայքարել ամեն մի փոքր հնարավորության համար, ինչ-որ մի բան մեզ համար ավելի դրական դարձնել: Փաստաթուղթը, ցավոք սրտի, շատ վատն է, բայց դա է, որ կա: Երկարատև խաղաղության խնդիրը այն անկարող է լուծել: Ռուսական խաղաղապահ ուժերն են, որ մոտ տարիներին հնարավորություն կտան, որ ընդհանուր առմամբ մեր տարածաշրջանում գոնե խաղաղություն պահպանվի, բայց, մյուս կողմից, ես սպասում եմ, որ թուրքական կողմը, նկատի ունեմ Թուրքիային և նրա արբանյակ Ադրբեջանին, մոտ տարիներին կփորձի տարբեր սադրանքներ իրականացնելով հասնել այն նպատակներին, որոնց մինչ այդ չէր հասել, այսինքն՝ զորքեր կբերի և կտեղակայի որպես խաղաղապահներ և այլն: Ես չեմ կասկածում, որ կլինեն սադրանքներ և Հայաստանի սահմանի երկայնքով, ճնշում կլինի, կմեծանա լարվածությունը: Դա թուրքական քաղաքականությունն է, որ այժմ Թուրքիան կսկսի կիրառել Հայաստանի նկատմամբ: Հույսեր չունենանք, թե Թուրքիան իրեն խելոք կպահի, ինչպես ասում են, բայց, մյուս կողմից, մեր ժողովրդի առջև նոր խնդիր է դրվում: Ես կարծում եմ, որ այդ խնդիրը պետք է ձևակերպել հետևյալ կերպ. մենք պետք է նոր հիմքերի վրա կառուցենք մեր

պետականությունը: Այն պետականության մոդելը, որը մենք ունեցել ենք այս 30 տարվա ընթացքում, փաստվեց, որ կենսունակ չէ, թույլ է: Ես կարծում եմ, որ այդ թուլությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մենք մեր պետությունը չենք կառուցել ազգային գաղափարախոսության հիման վրա: Մեր ազգային գաղափարախոսության վրա պետք է հիմնվի ապագա Հայաստանը, որը պետք է ստեղծի ուժեղ պետականություն, որը պետք է ունենա ուժեղ, մարտունակ, ժամանակակից բանակ, և դա մենք պետք է կարողանանք հնարավորինս արագ անել, որովհետև որքան էլ որ հույս դնենք ռուսական խաղաղապահ զորքերի վրա, առաջին հերթին մենք պետք է մեզ վերափոխենք, ազգային հիմքերի վրա պետք է կառուցենք մեր պետականությունը, իսկ դա նաև հնարավորություն կտա ունենալու մեր ավելի հզոր բանակը՝ ժամանակակից զենքերով զինված և այլն: Անհրաժեշտ է փոքր տարիքից դաստիարակել երեխաներին ազգային արժեքների ու նպատակների հանդեպ հավատարմության ոգով: Մենք պետք է ունենանք մեծ ազգային գաղափարներ ու նպատակներ, որոնք պետք է միավորեն Հայաստանի Հանրապետությունը, Արցախն ու Սփյուռքը, որ կարողանանք հանդես գալ աշխարհում որպես միասնական հայկական գործոն: Մենք շատ անելիքներ ունենք, և այդ անելիքներից ամենակարևորը ես համարում եմ ազգին ծառայելու դաստիարակությունը, որը պետք է լինի բոլորի մեջ, ինչպես և հայրենասիրությունը՝ հիմնված ազգային գաղափարախոսության վրա: Դա շատ կարևոր հանգամանք է մեզ համար:

Կարծում եմ և ուզում եմ հավատալ, որ.

Ա.-2021 թվականին 3-րդ Հանրապետության փլատակների վրա և դժվարին պայմաններում կսկսի ձևավորվել 4-րդ Հանրապետությունը:

Բ.-Նրա ամենակարևոր հենասյունը կլինի ազգային գաղափարախոսությունը: Այն կդառնա հասարակական-քաղաքական մտքի գերակշռող ուղղությունը:

Գ.-Կուսակցական համակարգը կազմված կլինի 3 հիմնական ուժերից.

1. Կենտրոնամետ աջակողմյան՝ քրիստոնյա-դեմոկրատական կամ պահպանողական կուսակցություն: Այն դեռ պետք է ստեղծվի:

2. Կենտրոնամետ ձախակողմյան: Կարծում եմ, ՀՅԴ-ն կարող է այդ տեղը զբաղեցնել:

3. Կենտրոնամետ: Այդ տեղը կզբաղեցի դեռ ստեղծվելիք ազգային-ազատական կուսակցությունը:

Դ. 4-րդ Հանրապետության հիմնադիրները կլինեն հիմնականում 1970-1980-ական թթ. ծնվածները: Նրանք էլ կկազմեն նոր քաղաքական էլիտայի հիմնական հատվածը...

Ես կարծումեմ՝ դա՛ պետք է լինի մեր ճանապարհը մոտ տարիներին:

Հարցազրույցը վարեց Մարիամ Հովսեփյանը:



Թուրքիայի զինված ուժերը արտերկրում

Մեր գործելու ժամանակը

Տիգրան Զանդոյան
ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ, քաղաքագետ

Ինչին ականատես եղանք վերջին ժամանակներս, կարելի է որակել որպես մեր պատմության բոլոր ժամանակների մեծագույն խայտառակություն:

Ականատես եղանք մարտնչող և հաղթող, հայրենիքը պաշտպանող բանակի, սակայն պարտված և ծնկի եկած իշխանությունների՝ անկարող ազգային շահը պաշտպանելու՝ ի դեմս վարչապետ Նիկոլ Փաշինյանի:

Ականատես եղանք միասնական թիկունքի, որն իր վերջին խնայողություններն էր ուղղում հայոց բանակի հզորացմանը, միաժամանակ՝ «թասիբի» հարց բարձրացնող իշխանությունների՝ ի դեմս վարչապետ Նիկոլ Փաշինյանի:

Ականատես եղանք ողջ պատերազմի ընթացքում զօրուգիշեր հայրենիքի համար ջանք ու եռանդ չխնայած Սփյուռքի, որը թե՛ հանրային դիվանագիտության ասպարեզում հասավ ակնառու հաջողությունների, թե՛ նյութական ու ֆինանսական հարցերով հայրենիքի կողքին գտնվեց անտրտունջ՝ ողջ պատերազմի ընթացքում ՉԽՆԱՅԵԼՈՎ ՈՉԻՆՉ, սակայն դավաճանվեց, և անտեսվեցին նաև նրա տասնամյակների ջանքն ու միջոցները՝ ծախսված Արցախի շենացման վրա, ձեռամբ հայրենի իշխանությունների և վերջիններիս իրականացրած ազգամերժ քաղաքականության պատճառով՝ ի դեմս Նիկոլ Փաշինյանի:

Կարճ ասած՝ ականատես եղանք վատթարագույնին, որ կարող էինք սպասել, պատկերացնել…

Հայաստանի Հանրապետության գործող (սակայն արդյո՞ք գործող) իշխանությունների ապազգային ուղենիշն ակնհայտ դարձավ դեռևս վերջիններիս՝ իշխանության գալուց շատ կարճ ժամանակ անց:

Ընդհանրապես յուրաքանչյուր երկրի ապագան պլանավորվում է տվյալ երկրի կրթության և գիտության ոլորտում որդեգրված քաղաքականության միջոցով: Սա հայտնի բան է: Եվ այս մոտեցումը եթե պրոյեկտենք մեր իրականության վրա, կտեսնենք, որ օրվա իշխանություններն իրենց առաջ դրել էին Հայաստանի ապագան աղճատելու, անորոշ դարձնելու, եթե ոչ առհասարակ մեզ ապագայազրկելու օրակարգ, և այդ օրակարգի տեսանելի մասում ապազգային քաղաքականության ամենացայտուն օրինակը բուհերում հայոց լեզվի դասավանդման հարցի բարձրացումն էր: Հայ երիտասարդը բնականաբար չէր կարող հանդուրժել սա, քանզի վտանգված էր հենց իր ապագան: Չհանդուրժեց և, ըստ այդմ, դուրս եկավ ապազգային իշխանությունների դեմ:

Ծայր առած բողոքի գործողություններում երիտասարդությունը հիմնական ուժն էր ու լոկոմոտիվը. երիտասարդությունն էր այն նյարդը, որը զգաց և արձագանքեց սեփական երկրին ու ապագային սպառնացող վտանգին: Այդ նյարդը չի

թմրում, չի թուլանում և երբեք չի պարալիզացվում, և այդ նյարդը արթուն է նաև այսօր, երբ վտանգի առաջ է կանգնած ողջ երկիրը, կորսված է հայրենիքի մեկ երրորդը, հարցականի տակ է դրված պետականության և ազգի ապագան: Այդ նյարդը, որ կոչվում է ազգային երիտասարդություն, այսօր առավել, քան երբևէ անելիք ունի, ունի գործ, գործ, որի անունն է հայրենիքի փրկություն: Եվ այսօր այսօրինակ ծանր ճգնաժամի պայմաններում մեր ապագայի միակ գրավականն է դա:

Չնայած իշխանական տարբեր մակարդակների պնդումներին՝ այսօրվա իշխանությունները չեն կարող արտահայտել Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամքը, իղձերն ու ցանկությունները և այս ամենի հանրագումարը՝ ապագան: Այո՛, նման իշխանությունների գոյության պայմաններում ապագա լինել չի կարող: Կհասկանան դա շատերը, թե քչերը՝ էական չէ. սա փաստ է: Փաստ է նաև այն, որ երիտասարդները սա ընդունում են որպես իրողություն, և դրա վառ դրսևորումը գործող իշխանություններին ներկայացված հրաժարականի պահանջ-հայտարարություններն են տարբեր համալսարանների ուսանողական խորհուրդների կողմից:

Սա մի նոր պայքար է մեր վաղվա օրվա համար, մեր հայրենի հողի վրա ապրելու իրավունքի համար: Կկանգնենք այս պայքարի գծի վրա, կապրենք որպես մեր հարատև ինքնության կրողներ, չենք կանգնի, կկորցնենք թե՛ մեր գալիքի հնարավորությունը և թե՛ այդ գալիքն ունենալու բարոյական իրավունքը: Կտանենք այդ պայքարը մինչև վերջ, կստանանք ևս մեկ հնարավորություն՝ կերտելու մեր վաղվա Հայաստանը, չենք տանի, ստիպված կլինենք պատմությանը տալու նոր Իսրայել Օրիներ ու Հովսեփ Էմիններ: Իսկ մուրացածո պետություն ոչ ոք ոչ ոքի դեռ չի ժառանգել ու չի ժառանգում նաև այսօր՝ շահերի բախման այս նենգ 21-րդ դարում… ■

Արցախի ամբողջականության վերականգնումը ռազմավարական խնդիր է

Խաչատուր Ստեփանյան
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արցախը պատմականորեն, աշխարհագրորեն, քաղաքակրթական ընդգրկմամբ հնագույն ժամանակներից ի վեր եղել է Հայաստանի անբաժանելի մասը: Արցախում պահպանված տարբեր դարերի մշակութային հուշարձանները փաստում են, որ հայն է եղել այս հողի իրական և մշտական տերը:

Արցախի պատմությունը հայոց պատմության մի մասն է: Առանց Արցախի պատմության՝ հայոց ամբողջական պատմությունը թերի է:

Վանի թագավորության շրջանում (Ք. ա. 9-6-րդ դդ.), ըստ մեզ հասած տեղեկությունների, Արցախը ներառված է եղել հայկական միասնական պետության կազմում: Երվանդունիների գահակալման տարիներին (Ք. ա. 6-3-րդ դդ.) Հայոց Արևելից նահանգները կարևոր մասնակցություն են ունեցել պետականության կայացման ու հզորացման գործում: Ք. ա. 6-րդ դ. կեսերին Մարաստանի Աժդահակ թագավորի դեմ ապստամբած հայոց Երվանդ Սակավակյացի զորքի մեջ զգալի թիվ են կազմել արցախցի զորականները:

Ք. ա. 2-րդ դ. Արտաշես Ի-ի առաջնահերթ խնդիրներից էր վերամիավորել Մեծ Հայքից բռնի առանձնացված հողերը: Հույն պատմիչ և աշխարհագիր Ստրաբոնի վկայությամբ՝ արևելքում Արտաշեսը հասավ մինչև Կասպից ծով և վերադարձրեց Փայտակարանն ու Պարսպատունիքը: Այս երկրամասերը հեշտությամբ Մեծ Հայքի թագավորությանը միավորելը փաստում է այն մասին, որ դրանք գերազանցապես բնակեցված են եղել հայերով և լուրջ դիմադրություն ցույց չեն տվել Արտաշեսին: Իսկ Արտաշեսի այս նվաճումներն ունեցել են վերամիավորման նշանակություն: Նկարագրելով Ք. ա. 1-ին դարավերջի Հայաստանը՝ Ստրաբոնը Արցախը և Ուտիքը ներկայացնում է որպես Մեծ Հայքի բուն նահանգներ: Արտաշեսյան ամենահզոր արքա Տիգրան Մեծի (Ք. ա. 95-55 թթ.) կառուցած Տիգրանակերտ անունով չորս քաղաքներից մեկը գտնվում է Արցախում: Սա ևս փաստում է Արցախի՝ համահայկական պետության կազմում լինելու մասին:

Հայաստանի դեմ պատերազմ մղած հռոմեական Ներոն կայսրը 64 թ. ճանաչեց Տրդատ Ա Արշակունու գահակալությունը: Ներոնի ժամանակներից Հռոմում պահպանված՝ պատի վրա փորագրված աշխարհի քարտեզում Արցախն ընդգրկված է Հայաստանի կազմում: Արշակունիների գահակալման ողջ ընթացքում (1-5-րդ դդ.) Արցախը ոչ միայն շարունակում էր մնալ հայկական թագավորության կազմում, այլև երկրում քրիստոնեության, ապա նաև հայ գրերի տարածման գլխավոր կենտրոններից մեկն էր (Ամարասի վանքը):

Արցախն իր ծանրակշիռ մասնակցությունն է ունեցել 5-րդ դարում հայ ժողովրդի մղած ազատագրական պատերազմներում: Ավելին՝ 5-րդ դ. երկրորդ կեսին և 6-րդ դ. առաջին կեսին Արցախում բացարձակ իշխանության հասած Առանշահիկները ստեղծեցին ինքնուրույն հայկական թագավորություն: Թագավորության տարածքն ընդգրկում էր Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգները: Որոշ ժամանակ Առանշահիկների իշխանությունը տարածվել է նաև հարևան Աղվանքի վրա:

Հայաստանում արաբական տիրապետության հաստատումից հետո Արցախում ևս կազմակերպված պայքար սկսվեց օտարի լուծը թոթափելու համար: Իսկ 9-րդ դարից սկիզբ առած Բագրատունիների թագավորության գոյության շրջանում Արցախում ձևավորվեցին ինքնուրույն իշխանություններ և մանր թագավորություններ (Խաչենի իշխանությունը, Փառիսոսի թագավորությունը, Դիզակի իշխանությունը), որոնք, ընդունելով Բագրատունիների գերակայությունը, Արցախում պահպանում էին հայկական իշխանական ավանդույթները:

13-15-րդ դարերում օտարների արշավանքների պատճառով Հայաստանում մեծ չափերի էր հասել հայ բնակչության արտագաղթը: Արցախն այն եզակի երկրամասերից էր, որոնք տեղի իշխանական տների՝ մելիքությունների շնորհիվ զերծ մնացին այդ վտանգավոր երևույթից:

Ավելի ուշ՝ 18-րդ դ. սկզբին, Արցախի մելիքական տները ղեկավարեցին հայոց պատմության ամենահայտնի ազգային-ազատագրական շարժումներից մեկը: 1722-1730 թթ. հատկապես Արցախում կազմակերպված ազգային-ազատագրական պայքարը ցույց տվեց, որ հայերը կարող են առանց արտաքին օգնության երկարատև դիմադրություն ցույց տալ այնպիսի հզոր պետությունների, ինչպիսիք էին Իրանն ու Թուրքիան:

Ցավոք, այս ազատագրական շարժման ավարտից հետո ի հայտ եկան նաև բացասական երևույթներ: Արցախցի բազմաթիվ զորականներ հեռացան երկրից և անցան Ռուսաստան, Վրաստան, Կուրի ձախափնյակ: Սկսվեց անասելի չափերի հասնող արտագաղթը Արցախից: Հատկապես ցավալի էր Ծար գավառի (Քարվաճառ) հայաթափումը: Այդ պայմաններում

թուրքերին հաջողվեց գրավել Արցախի մի մասը:

Այդուհանդերձ, 1740-ական թվականներից Արցախի մելիքությունների ինքնիշխանությունը բավական բարձր էր Իրանի կազմում: Հայկական պետության բացակայության պայմաններում, փաստորեն, մելիքությունները հայոց պետականության տարրերի կրողներ էին:

Արցախը՝ որպես հայկական ինքնության կրող, իր գոյությունը պահպանեց նաև Ռուսաստանին միանալուց հետո (1813 թ. Գյուլիստանի պայմանագրով): Այս ընթացքում հատկապես գնահատելի է Շուշիի դերը: Այն դարձավ Արևելյան Հայաստանի հոգևոր-մշակութային կարևոր կենտրոններից մեկը:

1918 թ. արդեն Շուշին Հայաստանի համար ուներ ոչ միայն կրթամշակութային, այլև ռազմավարական դեր: Նոր ձևավորվող հայկական անկախ պետականության համար Արցախը և հատկապես Շուշին կարևոր հիմնասյուն էին: Պատահական չէ, որ 1918-1920 թթ. հայ-ադրբեջանական չընդհատվող պատերազմի ժամանակ թշնամու գլխավոր նպատակը Շուշին զավթելն էր: Թերևս տեղին է ասել հայ նշանավոր զորական Դրոն, որ ով տիրում է Շուշիին, նա տիրում է Արցախին:

Շուշին Արցախից կտրելու, Արցախը Հայաստանից կտրելու թշնամու միտումն առավել ակնհայտ դարձավ խորհրդային շրջանում: Բավական չէ, որ 1921 թ. Արցախը տնտեսական անհիմն պատճառաբանություններով վարչականորեն պոկվեց հայրենիքից և բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին, այլև ամեն ինչ արվեց՝ վարչատարածքային առումով միմյանցից հեռացնելու Խորհրդային Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը:

1923 թ. հուլիսի 7-ին ԼՂԻՄ-ի կազմավորումից հետո մարզից անջատեցին նրա հարթավայրային շրջանը և Աղդամ ավանը: Աղդամը դարձրին ադրբեջանական շրջկենտրոն: Ղարաբաղի լեռնային շրջանի արևմտյան հատվածը՝ Արաքսի ափից մինչև Մռավի լեռնաշղթա, կտրեցին և ստեղծեցին «Քուրդիստանի գավառ»՝ դրանով իսկ Արցախն անջատելով մայր Հայաստանից: Իր դիվային ծրագրերն իրականացնելուց հետո Ադրբեջանը վերացրեց Քուրդիստանի գավառը և ստեղծեց Քելբաջարի, Լաչինի, Կուբաթլիի և Զանգելանի շրջանները: Դեռ ավելին՝ կարճ ժամանակահատվածում թրքացվեց վերոհիշյալ շրջանների գրեթե ողջ քուրդ ազգաբնակչությունը: Մարզից անջատեցին ամբողջ Հյուսիսային Արցախը, Դիզակի, Վարանդայի և Զրաբերդի արևելյան հատվածների մի շարք գյուղեր:

Փաստորեն, շուրջ 12 հազար քառ. կմ տարածք ունեցող պատմական Արցախին թողնվեց միայն 4,4 հազարը, որտեղ ընդգրկված էին Շուշի քաղաքը և շուրջ 250 բնակավայր:

Շուշիի փոխարեն այն ժամանակ փոքրիկ Ստեփանակերտը մարզի կենտրոն դարձնելը նույնպես պատահական չէր: Դրանով, ըստ էության, ոչնչացվեց 1920 թ. ջարդերից հետո իր հայրենի քաղաքը թողած հայության՝ ծննդավայր վերադառնալու փափագը: Խորհրդային շրջանում Շուշին վերածվեց գերազանցապես թուրք-թաթար-ադրբեջանցիներով բնակեցված քաղաքի: Շուշիի բարձունքից թշնամին հսկում էր բզկտված Արցախը:

Խորհրդային տարիներին Ադրբեջանի իշխանություններն ամեն ինչ արեցին Արցախը հայաթափելու, թուրքացնելու ուղղությամբ: Միայն արցախցիների համառ կամքի շնորհիվ հնարավոր եղավ կանխել հայկական այս կարևոր բնօրրանի վերջնական հայաթափումը: Խորհրդային իշխանության տարիներին արցախահայությունը բազմիցս փորձեց վերամիավորվել մայր հայրենիքին, բայց ապարդյուն: Այնուամենայնիվ, վերելքներով ու վայրէջքներով ընթացող պայքարը 1988 թ. փետրվարին սկսված համաժողովրդական ու համազգային ազատագրական շարժման հիմքը դարձավ:

Արցախյան ազատագրական շարժման նոր փուլը պսակվեց փայլուն հաջողությամբ: 1991 թ. հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: 1991-1994 թթ. տեղի ունեցած պատերազմական գործողությունների շնորհիվ հնարավոր եղավ ոչ միայն վերջ դնել նորանկախ ԼՂՀ-ն զավթելու Ադրբեջանի փորձերին, այլև ազատագրել դեռևս 1920-ականներին Արցախից արհեստականորեն պոկված շրջանների մեծ մասը: Ռազմավարական, բարոյահոգեբանական առումներով անչափ կարևոր էր Շուշիի ազատագրումը,



որը թեև պաշտոնապես ԼՂԻՄ-ի, ապա նաև ԼՂՀ կազմում էր, բայց գտնվում էր ադրբեջանցիների վերահսկողության ներքո: Շուշիի ազատագրումով ոչ միայն վերջ դրվեց Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի և շրջակա հայկական բազմաթիվ այլ բնակավայրերի հրետակոծմանը բարձունքից, այլև ճանապարհ բացվեց մայր հայրենիքի հետ ցամաքային կապ հաստատելու համար: Շուշիի ազատագրումը բարոյական մեծ լիցքեր հաղորդեց հայկական բանակին և հաղթանակի սպասող հայ ժողովրդին:

Ռազմավարական տեսանկյունից անհրաժեշտություն էր նաև Քարվաճառի և Քաշաթաղի ազատագրումը: Քարվաճառի շրջանը, որն արհեստականորեն առանձնացվել էր ԼՂԻՄ-ից, բնակեցված լինելով ադրբեջանցիներով, սեպի նման խրված էր ԼՂՀ-ի և ՀՀ-ի միջև: Օգտագործելով Քարվաճառի բարձր դիրքը՝ ադրբեջանցիները պարբերաբար հրետակոծում էին ՀՀ Գեղարքունիքի, Վայոց ձորի ու Սյունիքի մարզերի սահմանամերձ բնակավայրերը՝ կյանքը դարձնելով անտանելի: Քարվաճառի ազատագրումը, սակայն, միայն սահմանային խաղաղ կյանք ապահովելու մղումով չէր պայմանավորված: Այս շրջանից են սկիզբ առնում Արցախի ամենամեծ գետը՝ Թարթառը, Սյունիքով հոսող ամենամեծ գետը՝ Որոտանը, Վայոց ձորով հոսող ամենամեծ գետը՝ Արփան, Սևանա լիճ թափվող մի քանի գետեր: Փաստորեն, ՀՀ և ԼՂՀ ջրային ռեսուրսների մի կարևոր մասի անվտանգությունն անմիջական կապ ուներ և ունի Քարվաճառի հետ:

Գրեթե նույն խնդիրն էր Քաշաթաղի (նախկին Ադրբեջանական ԽՍՀ Լաչինի, Կուբաթլիի և Զանգելանի շրջանները) պարագայում: ՀՀ Սյունիքի մարզի ամբողջ արևելյան սահմանը՝ իր սահմանամերձ բնակավայրերով, ԼՂՀ արևմտյան և հարավ արևմտյան սահմանը գտնվում էին հրետակոծման սպառնալիքի տակ: Բերձորի (Լաչին) ազատագրումով նախ ցամաքային կապը վերահաստատվեց, իսկ Քաշաթաղի ամբողջական ազատագրումը խաղաղ ապրելու հնարավորություն ընձեռեց թե՛ սյունեցիներին, թե՛ Արցախի Շուշիի ու Հադրութի շրջանների բնակչությանը:

Արցախի ամբողջական ազատագրումը լրջորեն ամրապնդեց Հայաստանի անվտանգությունը արևելքում և հարավում: Փաստենք, որ մի բան է Հայաստանի անվտանգությունը ամբողջական Արցախով, բոլորովին այլ բան էր և է Հայաստանից առանձնացված Արցախով: Սակայն Արցախի ազատագրումը հանգիստ չէր տալու ոչ Ադրբեջանին, ոչ էլ Թուրքիային: Պանթուրքիզմի իրականացման ճանապարհին գլխավոր սեպ համարվող Սյունիքի և Արցախի զավթումը առաջնային նպատակ է Ադրբեջանի և Թուրքիայի համար: Արցախի կարևոր շրջանները՝ Շուշին, Քարվաճառը և Քաշաթաղը կորցնելը նշանակում է վտանգել թե՛ Արցախը, թե՛ Սյունիքը: Իսկ առանց Արցախի և Սյունիքի՝ Հայաստանի Հանրապետության գոյությունն իսկ կդրվի կասկածի տակ:

Վերջին պատերազմից հետո վերոնշյալ շրջանների կորուստը, ինչպես նաև Մեղրիի շուրջ հեղհեղուկ պայմանավորվածությունները ասվածի ապացույցն են: Եվ որպեսզի վաղը չկանգնենք առավել դաժան իրողության առջև, պետք է չհամակերպվել այդ կորուստների հետ և ուժերի գերագույն լարումով աշխատել կորցրածը ետ բերելու ուղղությամբ:

Շուշիի, Քաշաթաղի և Քարվաճառի վերադարձն ու Արցախի ամբողջականության վերականգնումը ոչ միայն մեր սասանված հեղինակության վերականգնման խնդիր է, պատվի հարց, այլև ուղղակիորեն բխում է հայոց պետականության անվտանգության շահերից, եթե կուզեք՝ նաև որպես պետականություն ունեցող ժողովրդ՝ մեր գոյության հրամայականից:

Արցախյան հիմնախնդրի հանգուցալուծում. իրավունք, թե ուժ

Արմեն Ասրյան
Պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

Տարիներ շարունակ, այդ թվում՝ և 2020 թ. աշնան պատերազմից առաջ «Դրօշակ»-ի 9-րդ համարում, ի տարբերություն տիրապետող կարծիքի, թե արցախյան հիմնախնդիրը չունի ռազմական լուծում, բարձրաձայնել ենք և այժմ էլ պնդում ենք, որ **արցախյան հիմնախնդիրն ունի միայն ուժային լուծում, ներառյալ ռազմական բաղադրիչը** (դա չի նշանակում, թե պատերազմի կողմնակից ենք): Այդ տեսակետը հիմնավորելու համար կներկայացնենք արցախյան հիմնախնդրի առաջացման պատմությունն ու ընթացքը, Արցախի Հանրապետության ստեղծումը, նրա իրավաքաղաքական դրությունն ու օրինականության աստիճանը, հիմնախնդրի շուրջ ծավալված բանակցային գործընթացում միջազգային կառույցների, գերտերությունների, հայկական և ադրբեջանական կողմերի դիրքորոշումները: Որպեսզի առավելագույնս պարզ լինեն Արցախի[*] նկատմամբ Ադրբեջանի հավակնությունների անհեթեթությունն ու ապօրինությունը, կանդրադառնանք նաև Ադրբեջան պետության ստեղծմանը:

Արցախյան հիմնախնդիրն առաջացել է Ադրբեջան անունով պետության ստեղծումից (1918 թ. մայիսի 27-28) անմիջապես հետո՝ 1918 թ. հունիս-հուլիս ամիսներին, երբ այն հիմնադրող Մահմեդական ազգային խորհուրդը, ապա նրա կողմից ձևավորված Ադրբեջանի կառավարությունը, առանց պատմական և իրավաքաղաքական որևէ հիմքի, պարզապես ելնելով իրենց ցանկություններից, այդ պետության տարածք համարեցին ոչ ավել, ոչ պակաս Արևելյան և Հարավային Այսրկովկասը՝ ագրեսիվ հավակնություններ դրսևորելով հայկական պատմական մի շարք երկրամասերի, այդ թվում՝ և Արցախի նկատմամբ: Որքան էլ անհեթեթ է, իր զավթողական ձգտումները հիմնավորելու համար Ադրբեջանը հիմք էր դարձնում այն հանգամանքը, որ այդ երկրամասը նախկինում ընդգրկված էր եղել մի մասով թաթարաբնակ Ռուսական կայսրության Ելիզավետպոլի նահանգի կազմում (ստեղծվել է ռուսական կառավարության կողմից 1868 թ.), որի տարածքը Մահմեդական ազգային խորհուրդը ցանկանում էր ընդգրկել ստեղծվող Ադրբեջան անունով պետության մեջ:

Նախքան հիմնական շարադրանքին անցնելը արձանագրենք, որ հազարամյակների վաղեմություն ունեցող սեպագիր արձանագրությունները, պատմական հեռավոր անցյալի հարյուրավոր հայ և օտար վավերագրերը, աշխարհի ու տարածաշրջանի տասնյակ քաղաքական քարտեզները, անհիշելի ժամանակներից ի վեր Արցախում գտնվող հազարավոր հուշարձանները, կենցաղային իրերը,

գերեզմանները միանշանակորեն փաստում են, որ Արցախը հայոց պատմական հայրենիքի բաղկացուցիչ մասն է. եղել է մերթ հայկական թագավորությունների կազմում, մերթ որպես ինքնուրույն թագավորություն կամ իշխանություն, երբեմն կարճ ժամանակով Հայաստանի մի շարք այլ շրջանների հետ նվաճվել օտար տիրակալների կողմից: Ուշ միջնադարում Արցախը նվաճվել է թյուրքմենական ցեղերի, ապա՝ պարսից պետության կողմից, բայց պահպանել է որոշակի ինքնուրույնություն: 1805-1813 թթ. մինչև 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունը Արցախը եղել է Ռուսական կայսրության կազմում: Ադրբեջանի կազմում այն պարզապես չէր կարող լինել, քանի որ այդպիսի պետություն մինչև 1918 թ. մայիսի 27-28-ը գոյություն չի ունեցել: Արցախը չէր կարող լինել նաև Ադրբեջանի հիմնական մասը կազմող կովկասյան թաթարների (միայն 1930-ական թթ. նրանք պետության անունով սկսեցին կոչվել ադրբեջանցիներ) ենթակայության տակ, քանզի նրանք մինչև 1918 թ. այլ պետություն չեն ունեցել:

1918 թ. հուլիսին Ղարաբաղի (Արցախն այդպես անվանվեց օտարների կողմից ուշ միջնադարում, և այդ անվանումն աստիճանաբար դարձավ տիրապետող) հայության առաջին համագումարը Ղարաբաղը հռչակեց անկախ վարչաքաղաքական միավոր և կազմեց Ղարաբաղի անկախ կառավարություն: Ղարաբաղի հայության գումարած հաջորդ մի քանի համագումարները, անտեսելով սպառնալիքները, բողոքեցին Ղարաբաղն իր տարածք համարելու Ադրբեջանի մտադրության դեմ և հրաժարվեցին նրա իշխանությունը ճանաչելուց[1]:

Որպեսզի արցախյան հիմնախնդրի պատմության մեջ թերի բան չմնա, փոքր-ինչ անդրադառնանք Ղարաբաղի հայության 7-րդ համագումարին: 1919 թ. ամռանն Ադրբեջանի և նրան ուղղակիորեն աջակցող Անգլիայի ռազմաքաղաքական աննախադեպ

ճնշման պայմաններում, երբ առավել, քան երբևէ դրված էր երկրամասի հայության ֆիզիկական գոյության հարցը, Ղարաբաղի հայության 7-րդ համագումարը 1919 թ. օգոստոսի 22-ին Ադրբեջանի ներկայացուցիչ Սուլթանովի հետ կնքեց 26 կետանոց համաձայնագիր: Այդ համաձայնագրով, Ադրբեջանի կողմից մի շարք պարտավորությունների ստանձնման պայմանով, Ղարաբաղի լեռնային մասի՝ Շուշիի, Ձեբրայիլի և Ձևանշիրի գավառների նկատմամբ ժամանակավորապես՝ մինչև հարցի վերջնական լուծումը Փարիզի խաղաղության խորհրդաժողովի կողմից, ճանաչվեց Ադրբեջանի իշխանությունը[2]: Բայց, ինչպես սպասելի էր, Ադրբեջանը չկատարեց իր ստանձնած պարտավորությունները և չբավարարվեց կնքված համաձայնագրով, ամենից առաջ՝ նրա ժամանակավոր բնույթով և Ղարաբաղից պահանջեց ամբողջությամբ ընդունել իր իշխանությունը:

1920 թ. փետրվարի 22-ին գումարված՝ Ղարաբաղի հայության 8-րդ համագումարից ստանալով մերժողական պատասխան՝[3] Ադրբեջանն իր գրեթե ամբողջ բանակը կենտրոնացրեց Ղարաբաղի սահմաններին և սկսեց հարձակողական գործողություններ հայերի դեմ: Ակնհայտ էր, որ Ադրբեջանը մտադիր չէ սպասել հարցի կարգավորմանը Փարիզի խաղաղության խորհրդաժողովի կողմից: Ադրբեջանական ագրեսիայի դեմ անհավասար պայքարի դուրս եկած Ղարաբաղի հայությանն օգնության հասան ՀՀ կանոնավոր բանակի զորամասերը, Դրոյի և Զանգեզուրի զինված ուժերը՝ Գարեգին Նժդեհի գլխավորությամբ, և կանխեցին աղետը: Կարծում ենք՝ չափազանց կարևոր է իմանալ, որ Ղարաբաղի նկատմամբ շուրջ 2 տարի Ադրբեջանի դրսևորած ոտնձգությունների ընթացքում ՀՀ-ն չէր միջամտել՝ ջանալով հարցը կարգավորել խաղաղ ճանապարհով, բայց 1920 թ. ապրիլին ակնհայտ դարձավ, որ դա կարող է կործանարար լինել Ղարաբաղի համար:

1920 թ. ապրիլի 25-ին Ղարաբաղի հայության 9-րդ համագումարը մեկ անգամ ևս մերժեց ճանաչել Ադրբեջանի իշխանությունը և Ղարաբաղը համարեց Հայաստանի մաս[4]:

Ադրբեջանի ազգային խորհուրդը

Խոսելով ներկայումս Արցախի նկատմամբ Ադրբեջանի հավակնությունների մասին՝ հարկ ենք համարում ընդգծել, որ 1919-1920 թթ. Ազգերի լիգան չճանաչեց Ադրբեջանի Հանրապետությունը՝ պատճառների թվում մատնանշելով նրա սահմանները հստակորեն որոշելու անհնարինությունը՝ պայմանավորված հարևանների հետ նրա տարածքային վեճերով: Խոսքը, անշուշտ, առաջին հերթին վերաբերում է Ղարաբաղին:

1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը խորհրդայնացվեց և դադարեց գոյություն ունենալուց, ստեղծվեց նոր պետություն՝ Խորհրդային Ադրբեջանը:

Այսպիսով՝ Ղարաբաղը երբևէ չի եղել այսպես կոչված Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության (1918 թ. մայիսի 27 – 1920 թ. ապրիլի 28) կազմում:

Խորհրդային Ռուսաստանը, որը, փաստորեն, խորհրդայնացրեց Ադրբեջանը, ելնելով իր դեմ Արևմուտքի կողմից ձևավորվող հակախորհրդային դաշինքից Թուրքիային հեռու պահելու ձգտումից, սատար կանգնեց իր հովանավորությունը վայելող և իր միջամտությամբ կամավոր խորհրդայնացած Ադրբեջանին: Չունենալով որևէ իրավասություն և պատմական, իրավական ու ժողովրդագրական հիմք և անտեսելով Ղարաբաղի բնակչության 95 %-ը կազմող հայության կամքը՝ Խորհրդային Ռուսաստանը նախ Լեռնային Ղարաբաղը ճանաչեց Խորհրդային Ադրբեջանի մաս և օկուպացրեց իր զորքերով, ապա ընդամենը կուսակցական մարմին հանդիսացող ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի միջոցով 1921 թ. հուլիսի 5-ին որոշեց Լեռնային Ղարաբաղը «թողնել» Խորհրդային Ադրբեջանի կազմում[5], իսկ իրականում բռնակցեց Ադրբեջանին: Բնականաբար, այդ որոշումը չունի իրավական ուժ, քանի որ ընդունվել է կուսակցական մարմնի կողմից: Բայց օգտվելով ռազմական գերակայությունից՝ Խորհրդային Ռուսաստանը և Ադրբեջանը շարունակեցին Ղարաբաղի անեքսիան: Նույն որոշումով ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոն Ադրբեջանին հանձնարարեց իր կազմում Լեռնային Ղարաբաղին տալ լայն ինքնավարություն և որոշել նրա սահմանները: Երկար ձգձգումներից հետո՝ 1923 թ. հուլիսի 7-ին, ստեղծվեց ԼՂԻՄ-ը[6]: Բայց հատկանշականն այն է, հատկապես մեր օրերում զիջումների դիմաց «խաղաղության» ջատագովներին բացատրելու առումով, որ նշանակալիորեն կրճատվեց Ղարաբաղի տարածքը, և այն կտրվեց արդեն խորհրդայնացած Հայաստանից: Դա ձևակերպվեց այնպես, թե իբր ինքնավար մարզի կազմում է ընդգրկվում Ղարաբաղի միայն հայկական մասը: Դա, իհարկե, 1921 թ. հուլիսի 5-ի ապօրինի որոշման

շարունակությունն էր նույն ոգով: Հետագա տասնամյակներում Ղարաբաղի հայությունը բազմիցս փորձեց միավորվել մայր հայրենիքին, բայց ամեն անգամ լռեցվեց:

Այսպիսով՝ արցախյան հիմնախնդիրը ստեղծվեց անօրինականության ու բռնության ճանապարհով, հակառակ Ղարաբաղի հայության կամքի:

Ադրբեջանի տիրապետության տակ գտնվելու տարիներին Ղարաբաղի հայությունը ենթարկվեց տարատեսակ բռնությունների, ճնշումների ու հալածանքների, ինչի խոսուն ապացույցներից է այն փաստը, որ 70 տարվա ընթացքում տեղի հայության թվաքանակը չավելացավ, այնինչ բնականոն աճի պայմաններում այն պետք է առնվազն քառապատկվեր:

1980-ական թթ. վերջերից սկսվեց արցախյան հիմնախնդրի նոր փուլը: Օգտվելով ԽՍՀՄ հասարակական-քաղաքական համակարգի ազատականացումից՝ 1987-1988 թթ. արցախահայությունը ոտքի կանգնեց իր բռնադատված իրավունքները պաշտպանելու և մայր հայրենիքին վերամիավորվելու համար:

Ներկայումս Արցախի իրավաքաղաքական դրության, նրա նկատմամբ Ադրբեջանի հավակնությունների անհիմն լինելն առավել ակնառու դարձնելու համար զուգահեռ կանդրադառնանք նաև ներկայիս Ադրբեջանի Հանրապետության անկախության հռչակմանը:

1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզային խորհրդի ժողովրդական պատգամավորների արտահերթ նստաշրջանն ընդունեց որոշում, որով Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհուրդներին խնդրեց հանդես բերել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության սպասումների խոր ըմբռնում և լուծել ԼՂԻՄ-ը Խորհրդային Ադրբեջանից Խորհրդային Հայաստանի կազմ տեղափոխելու հարցը: Խորհրդային Ադրբեջանը Ղարաբաղի հայության ազատ կամքի արտահայտման այս իրավական քայլին պատասխանեց համատարած բռնարարքներով, որոնցից մեկը 1988 թ. փետրվարի 27-29-ը հայերի կոտորածն էր Բաքվի մերձակայքում գտնվող Սումգայիթ քաղաքում:

ԽՍՀՄ ղեկավարությունը, Հայաստանի հետ վերամիավորվելու արցախահայության ձգտումը դիտարկելով սոցիալ-տնտեսական տեսանկյունից, 1988 թ. մարտի 24-ին 400 մլն ռուբլի հատկացրեց ԼՂԻՄ-ում սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար: Սակայն Ադրբեջանն այդ միջոցներն օգտագործեց բացառապես մարզի ադրբեջանցիների սոցիալ-տնտեսական կարիքների համար և միաժամանակ շարունակեց բռնությունները արցախահայության նկատմամբ:

1988 թ. հունիսին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը հավանություն տվեց ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի կազմ ընդգրկելու դիմումին, իսկ Խորհրդային Ադրբեջանի Գերագույն խորհուրդը

1988 թ. Ստեփանակերտ

մերժեց այն:

1988 թ. հուլիսի 12-ին ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի 20-րդ գումարման 8-րդ նստաշրջանը հայտարարեց ԼՂԻՄ-ի՝ Խորհրդային Ադրբեջանի կազմից դուրս գալու մասին: Սակայն հաջորդ օրը Խորհրդային Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունը ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի այդ որոշումը ճանաչեց անօրինական:

1988 թ. հուլիսի 18-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը, անտեսելով արցախահայության կամքը, որոշեց ԼՂԻՄ-ը թողնել Ադրբեջանի կազմում: Արցախահայությունը շարունակեց խաղաղ պայքարը՝ իր ինքնորոշման համար:

1989 թ. հունվարի 12-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը կասեցրեց ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի լիազորությունները և ստեղծեց ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտե, որը ենթարկվում էր Մոսկվային: Այս որոշումը, սակայն, չբավարարեց ո՛չ արցախահայությանը, քանի որ Լեռնային Ղարաբաղը շարունակում էր մնալ Ադրբեջանի կազմում, իսկ արցախահայության նպատակը Հայաստանի հետ վերամիավորվելն էր, ո՛չ էլ Ադրբեջանին, որը ձգտում էր վերացնելու նույնիսկ նախկին ինքնավարությունը:

Փաստացի անիշխանության մատնված արցախահայությունը 1989 թ. օգոստոսին ստեղծեց իշխանության ազգային մարմին՝ ի դեմս Ղարաբաղի Ազգային խորհրդի: Ադրբեջանը շարունակեց բռնությունները:

1989 թ. նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը ցրեց ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեն՝ Խորհրդային Ադրբեջանին առաջարկելով ստեղծել կազմկոմիտե և վերականգնել ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների խորհրդի գործունեությունը: Ինչպես և սպասելի էր, Ադրբեջանը կազմկոմիտեի մեջ չընդգրկեց ԼՂԻՄ-ի ներկայացուցիչներին և չվերականգնեց ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի գործունեությունը: Ի պատասխան արցախահայության իրավունքները բացարձակապես

անտեսող ԽՍՀՄ Գերագույն խորհրդի և Խորհրդային Ադրբեջանի քաղաքականության՝ 1989 թ. դեկտեմբերի 1-ին Երևանում գումարված՝ Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ նստաշրջանում ընդունվեց որոշում «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին»: 1990 թ. հունվարի 10-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունն անվավեր ճանաչեց 1989 թ. դեկտեմբերի 1-ի որոշումը՝ այն որակելով հակասահմանադրական:

Խորհրդային Ադրբեջանը, ինչպես միշտ, այս անգամ էլ արցախահայության ազատ կամքի խաղաղ դրսևորումներին պատասխանեց բռնություններով, որոնց բարձրակետը 1990 թ. հունվարի 13-20-ը Բաքվում իրականացված հայերի ջարդերն էին:

Սա մի ժամանակաշրջանն էր, երբ ամբողջ ԽՍՀՄ-ում խորանում էին միութենական հանրապետությունների՝ անկախանալու ձգտումները: ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները փորձեցին խնդրին տալ իրավական լուծում: 1990 թ. ապրիլի 3-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն ընդունեց օրենք «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետությունների դուրս գալուն վերաբերող հարցերի լուծման կարգի մասին»[7]: Բանն այն է, որ ԽՍՀՄ Սահմանադրության 72-րդ հոդվածն ամրագրում էր միութենական հանրապետության՝ ԽՍՀՄ-ից դուրս գալու իրավունքը, սակայն չէր սահմանում դուրս գալու կարգը և մեխանիզմները, ինչի հետևանքով գործնականում անհնար էր դառնում այդ իրավունքից օգտվելը: 1990 թ. ապրիլի 3-ի օրենքը սահմանեց, որ ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետությունը կարող է դուրս գալ հանրաքվեի միջոցով: Օրենքի 3-րդ հոդվածը սահմանում էր. «Միութենական հանրապետությունում, որն իր կազմում ունի ինքնավար հանրապետություն, ինքնավար մարզ և ինքնավար օկրուգ, հանրաքվեն անցկացվում է յուրաքանչյուր ինքնավարությունում առանձին: Ինքնավար հանրապետությունների և ինքնավար կազմավորումների ժողովուրդներին վերապահվում է իրավունք՝ ինքնուրույն որոշելու ԽՍՀՄ-ում կամ նրա կազմից դուրս եկող միութենական հանրապետության կազմում մնալու հարցը, ինչպես նաև իր պետական իրավական կարգավիճակի հարցադրման սահմանումը»: Այս օրենքն առանցքային նշանակություն ունի թե՛ Ղարաբաղի, թե՛ Ադրբեջանի իրավաքաղաքական կարգավիճակի և դրա օրինականության մասին ճիշտ պատկերացում կազմելու առումով:

Այս օրենքը սկզբից ևեթ խախտվեց Ադրբեջանի կողմից: 1991 թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանի հանրապետության Գերագույն խորհուրդն ընդունեց հռչակագիր «Ադրբեջանական հանրապետության պետական անկախության վերականգնման մասին»: Որևէ կերպ ԼՂԻՄ-ի բնակչության կարծիքը հաշվի չառնվեց:

1990 թ. ապրիլի 3-ի օրենքի խախտմամբ ընդունված Ադրբեջանի անկախության հռչակագիրը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և Շահումյանի շրջանում բնակվող հայությանը լիակատար իրավունք տվեց ինքնուրույն տնօրինելու իր հետագա ճակատագիրը: 1991 թ. սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ-ի մարզային խորհուրդը և Շահումյանի շրջանի շրջանային խորհուրդը համատեղ նիստում հռչակեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումը՝ որպես ԽՍՀՄ դաշնային սուբյեկտի: Նոր կազմավորումն ընդգրկելու էր ԼՂԻՄ-ի և Շահումյանի շրջանի տարածքները, իսկ այնտեղ շարունակելու էին գործել ԽՍՀՄ Սահմանադրությունը և օրենսդրությունը, ինչպես նաև անկախության հռչակագրի նպատակներին, սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին չհակասող մյուս օրենքները:

1991 թ. հոկտեմբերի 18-ին Ադրբեջանի Գերագույն խորհուրդը, առանց հանրաքվե անցկացնելու և ԼՂԻՄ-ի ու Շահումյանի շրջանի, ինչպես նաև Խորհրդային Ադրբեջանի կազմում ընդգրկված այլ տարածքներում հավաքաբար ապրող ազգային փոքրամասնությունների կարծիքը հաշվի առնելու, ընդունեց «Ադրբեջանական հանրապետության պետական անկախության վերականգնման մասին» սահմանադրական ակտը: Այդ փաստաթղթով դրվեցին անկախ Ադրբեջանի պետական, քաղաքական և տնտեսական հիմքերը: ԽՍՀՄ գործող օրենքի խախտմամբ ընդունված այս փաստաթղթով փաստացիորեն և իրավական առումով Ադրբեջանը ոչ միայն հրաժարվում էր ճանաչել իր ճակատագիրն ինքնուրույն որոշելու Լեռնային Ղարաբաղի հայության իրավունքը, այլև վերջակետ էր դնում Լեռնային Ղարաբաղի հետագա կարգավիճակի հարցը իր հետ համաձայնեցնելու հնարավորությանը: Լեռնային Ղարաբաղի և Շահումյանի շրջանի հայությունը լիակատար իրավունք էր ստանում ազատորեն որոշելու իր ճակատագիրը:

Սահմանադրական կոչված այդ ակտն ունի մի շարք հիշատակելի կողմեր: Դրա առաջին հոդվածը 1920 թ. ապրիլի 27-28-ին Խորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակի ներխուժումը Ադրբեջանի Հանրապետություն և Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության տապալումը որակում էր ագրեսիա: Երկրորդ հոդվածն ազդարարում էր, որ «Ադրբեջանի Հանրապետությունը հանդիսանում է 1918 թ. մայիսի 28-ից 1920 թ. ապրիլի 28-ը գոյություն ունեցած Ադրբեջանի Հանրապետության իրավահաջորդը»: Երրորդ հոդվածը ԽՍՀՄ ստեղծման վերաբերյալ 1922 թ. դեկտեմբերի 30-ին ստորագրված պայմանագիրը Ադրբեջանի առումով ճանաչում էր անվավեր: Չորրորդ հոդվածը սահմանում էր, որ Ադրբեջանական հանրապետության 1978 թ. սահմանադրությունը գործում է այնքանով, որքանով չի հակասում ընդունվող սահմանադրական ակտի դրույթներին,

ուժի մեջ էր թողնում մինչև Ադրբեջանի անկախության հռչակումը գործող իրավական բոլոր ակտերը, որոնք չէին հակասում Ադրբեջանի Հանրապետության ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը և ուղղված չէին նրա ազգային-պետական կառուցվածքի փոփոխմանը:

Այս հոդվածներն ունեն չափազանց մեծ կարևորություն: 1991 թ. հոկտեմբերի 18-ի սահմանադրական ակտով իր պետական անկախությունն ազդարարող Ադրբեջանը, իրեն հռչակելով Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդ, ինքն իրեն զրկեց Լեռնային Ղարաբաղն իր կազմում ընդգրկելու իրավունքից այն պարզ պատճառով, որ Ղարաբաղը, ինչպես տեսանք, չի եղել 1918-1920 թթ. գոյություն ունեցած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կազմում: Այդ ակտի առաջին երեք հոդվածներով Ադրբեջանն իրեն զրկեց Լեռնային Ղարաբաղի նկատմամբ որևէ հավակնության իրավունքից: Կարծում ենք՝ մեկնաբանություններն ու մանրամասներն ավելորդ են: Չորրորդ հոդվածը, որով փորձ էր արվում փրկելու Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղն իր կազմում պահելու առումով, չի կարող օգտակար լինել նրան, քանզի լիովին հակասում է վերոհիշյալ երեք հոդվածներին:

Հետագա գործողություններով Ադրբեջանն ավելի խորացրեց արցախյան հիմնախնդրի խաղաղ, իրավական կարգավորման անջրպետը: 1991 թ. նոյեմբերի 26-ին Ադրբեջանի Գերագույն խորհուրդը որոշեց լուծարել ԼՂԻՄ-ը: Այս որոշումը հակասում էր ԽՍՀՄ Սահմանադրության մի շարք հոդվածների, ըստ որոնց՝ միութենական հանրապետության վարչական սահմանների փոփոխության իրավասությունը պատկանում էր ԽՍՀՄ բարձրագույն օրենսդիր մարմնին: Այն խախտում էր նաև 1990 թ. ապրիլի 26-ին ընդունված «ԽՍՀՄ-ի և դաշնության սուբյեկտների միջև լիազորությունների սահմանափակման մասին» ԽՍՀՄ օրենքը, ըստ որի՝ ինքնավար կազմավորման կարգավիճակի մասին ցանկացած որոշում կարող է դառնալ իրավաբանորեն պարտադիր միայն ԽՍՀՄ իշխանության բարձրագույն մարմինների կողմից հավանություն ստանալուց հետո: Դա է պատճառը, որ ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության կոմիտեն Ադրբեջանի Գերագույն խորհրդի այդ որոշումը ճանաչեց հակասահմանադրական:

Ադրբեջանի անօրինական նկրտումներին ի պատասխան, բայց «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքին համապատասխան, միջազգային դիտորդների հսկողությամբ 1991 թ. դեկտեմբերի 10-ին ԼՂՀ-ում անցկացվեց անկախության հանրաքվե[8], որի արդյունքներով 1992 թ. հունվարի 6-ին ԼՂՀ Գերագույն խորհուրդը հաստատեց ԼՂՀ պետական

Շուշիի ազատագրումը 1992 թ.

անկախությունը[9]:

2006 թ. ընդունվեց ԼՂՀ առաջին Սահմանադրությունը, իսկ 2017 թ.՝ երկրորդը, որում այն սկսեց կոչվել Արցախի Հանրապետություն: ԼՂՀ անկախության հանրաքվեն համապատասխանում է նաև միջազգայնորեն, այդ թվում՝ և ՄԱԿ-ի կանոնադրությամբ ճանաչված ազգերի ինքնորոշման իրավունքին:

Ադրբեջանը, որը մշտապես անտեսել է բոլոր իրավական նորմերը, պնդում է, թե իբր ԼՂՀ անկախության հանրաքվեն օրինական չէ, քանի որ անկախացման ժամկետների առումով չեն պահպանվել 1990 թ. ապրիլի 3-ի օրենքի 2-րդ հոդվածի պահանջները: Դա ոչ այլ ինչ է, քան փաստերը ակնհայտորեն գլխիվայր շրջելու փորձ: 1991 թ. դեկտեմբերի 29-ին Ադրբեջանում նախատեսվող, այսպես կոչված, անկախության հանրաքվեի վերաբերյալ նոյեմբերի կեսերին իր ընդունած որոշմամբ Ադրբեջանն արդեն խախտել էր օրենքը: Բանն այն է, որ նախատեսվող հանրաքվեն անցկացվելու էր ամբողջ Ադրբեջանի տարածքում միասնական կարգով, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղի և Շահումյանի շրջանի բնակչության ձայներն առանձին չէին հաշվվելու: Մյուս կողմից էլ՝ Ադրբեջանի հակահայ քաղաքականությունը՝ ԼՂԻՄ-ը լուծարելու որոշումը, հայ բնակչության էթնիկ զտումները, չդադարող կոտորածները, Ղարաբաղի շրջափակումը, անհնար էր դարձրել ժամկետների պահպանումը: Արցախահայությունը գտնվում էր ֆորսմաժորային իրավիճակում և Գետաշենի ենթաշրջանի հայերի ճակատագրից (ադրբեջանական զորքերի և խորհրդային ՕՄՕՆ-ականների կողմից 1991 թ. ապրիլի վերջին–մայիսի սկզբին իրականացված «Օղակ» գործողության հետևանքով այն հայաթափվել էր, զոհվել ու գերեվարվել էին հարյուրավոր հայեր) խուսափելու նպատակով ստիպված էր արագ գործել:

Արցախահայությունը միանգամայն օրինական՝ միջազգային ու խորհրդային իրավական նորմերին համապատասխան, ձեռք բերեց իր անկախությունը: Իսկ Ադրբեջանը, որը միջազգային և խորհրդային օրենքների խախտումներով էր սկսել իր անկախացման գործընթացը, այդպես էլ եզրափակեց: 1991 թ. դեկտեմբերի 29-ին անցկացվեց հանրաքվե, որի ժամանակ քվեարկության դրվեց ոչ թե ԽՍՀՄ կազմից դուրս գալու հարցը, ինչպես պահանջում էր ԽՍՀՄ օրենսդրությունը, այլ 1991 թ. հոկտեմբերի 18-ի «Ադրբեջանական հանրապետության պետական անկախության վերականգնման մասին» սահմանադրական ակտին համաձայնության հարցը: Անտեսվեց նաև ինքնավար կազմավորումների մասին 1990 թ. ապրիլի 3-ի օրենքի 3-րդ հոդվածը:

Քաղաքակիրթ աշխարհի քար անտարբերության պայմաններում Ադրբեջանը բացահայտորեն պատերազմ սանձազերծեց ԼՂՀ-ի դեմ՝ այն կործանելու, արցախահայությանն իր հայրենիքից քշելու կամ ոչնչացնելու անթաքույց նպատակով: Պարտադրված պատերազմում, ինչպես գիտենք, արցախահայությունը և նրան ՀՀ-ից ու աշխարհի տարբեր կողմերից օգնության հասած հազարավոր հայորդիներ ադրբեջանական զորքերի և նրանց օգնող թուրքական, աֆղանական, չեչենական հազարավոր վարձկանների դեմ տարան փառավոր հաղթանակ: Թշնամուն հասցվեցին ծանր հարվածներ, ազատագրվեցին հինավուրց Շուշին և տասնյակ այլ բնակավայրեր, որոնք թշնամին վերածել էր արցախահայության դեմ պատերազմական հենակետերի: Անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ազատագրվեցին նաև Ղարաբաղից 1920-ական թթ. անջատված և Ադրբեջանի սովորական վարչական շրջանների վերածված հայկական մի շարք տարածքներ: Թշնամին ստիպված էր զինադադար խնդրել, որը կնքվեց 1994 թ. մայիսի 12-ին: Այնուհետև ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո սկսվեց ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթաց, որն այդպես էլ արդյունք չտվեց:

Ի՞նչն է պատճառը, արդյոք հայկական կողմն արե՞լ է ամեն ինչ՝ հիմնախնդրի խաղաղ կարգավորման համար, արդյոք մենք պատրաստ ենք եղել փոխզիջումների, թե՞ դրսևորել ենք խիստ անհաշտ կեցվածք, հնարավո՞ր էր արդյոք հասնել Ադրբեջանի հետ փոխհամաձայնության, արդյոք միջազգային հանրությունն ամեն ինչ արե՞լ է հիմնախնդրի կարգավորման համար:

Բանակցային գործընթացի տարիներին համանախագահող երկրների արտգործնախարարների և նախագահների հայտարարությունների, նրանց կողմից արված առաջարկությունների, ձեռք բերված պայմանավորվածությունների, կազմված աշխատանքային տարբերակների վերաբերյալ ՀՀ-ի և Ադրբեջանի պատասխանատուների կատարած հայտարարությունների համեմատական վերլուծությունը վկայում է, որ ՀՀ-ն մշտապես դրսևորել է կառուցողական մոտեցում, հանուն հիմնահարցի խաղաղ կարգավորման փոխզիջումների գնալու պատրաստակամության[10]: Որպես փոխզիջում ՀՀ-ն սկզբունքորեն համաձայնել էր նույնիսկ ազատագրված 7 շրջանների փուլային վերադարձին Ադրբեջանին պայմանով, որ վերջինս ազգերի ինքնորոշումը ևս ճանաչի հիմնախնդրի կարգավորման սկզբունք և համաձայնի հստակ սահմանված ժամկետում Արցախում կարգավիճակի վերաբերյալ հանրաքվեի անցկացմանը՝ որևէ կերպ չսահմանափակված հարցադրմամբ:

Իհարկե, նորմալ հակառակորդի հետ հնարավոր է փոխզիջումային տարբերակով լուծել շատ ու շատ հարցեր: Բայց դա հնարավո՞ր էր արդյոք մեզ թշնամի, ոչ թե հակառակորդ Ադրբեջանի և նրան ուղղակիորեն ու անուղղակիորեն սատարող Թուրքիայի հետ: Պարզվում է, որ հնարավոր չէ: 1994 թ. մայիսից մինչև 2020 թ. սեպտեմբեր Ադրբեջանը հայկական կողմի առավելագույն զիջումներին նույնիսկ աննշան չի ընդառաջել: Ի տարբերություն Հայաստանի՝ Ադրբեջանը հրաժարվեց ճանաչել ազգերի ինքնորոշման սկզբունքը, թեև մի պահ (2009 թ.) ընդունել էր՝ անտեսելով հայկական կողմի պատրաստակամությունը՝ վերադարձնելու 7 շրջանները: Նա հրաժարվեց նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի հետևյալ առաջարկություններից՝ դիպուկահարների դուրսբերում շփման գոտուց և սահմաններից, միջադեպերի հետաքննության մեխանիզմների ստեղծում, ԵԱՀԿ գործող նախագահի ներկայացուցչի թիմի լիազորությունների ընդլայնում, զինադադարի պահպանման վերաբերյալ 1994-1995 թթ. եռակողմ անժամկետ համաձայնություններին հավատարմության վերահաստատում և այլն: Ավելին՝ Ադրբեջանի 102-ամյա և նրա ավագ եղբայր Թուրքիայի մոտ յոթհարյուրամյա պատմությունը ցույց է տալիս, որ նրանք ունակ չեն նույնիսկ փոխզիջման գնալու: Մեր թշնամիները բարի կամքի դրսևորումը, փոխզիջումների գնալու պատրաստակամությունն ընդունել են իբրև թուլություն և շարունակ նոր զիջումներ ակնկալել:

Դիտարկենք նաև վերջին ամիսների զարգացումները: 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի լայնամասշտաբ հարձակմամբ սկսված պատերազմն ավարտվեց նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ: Այն խիստ ձեռնտու է Ադրբեջանին, քանզի դրանով Ադրբեջանին են հանձնվում նույնիսկ այնպիսի տարածքներ, որոնց մասին նա չէր էլ երազել վերջին 26 տարվա ընթացքում: Թվում է, թե թշնամին պետք է ցնծա ու բավարարվի: Բայց արդյոք նա բավարարվա՞ծ է և դրսևորո՞ւմ է փոխզիջման, գոնե փոխըմբռնման որևէ նշույլ: Միանշանակ ո՛չ, չի դրսևորում: Նոյեմբերի 9-ի հայտարարությունից հետո թշնամին խիստ ագրեսիվ և անհարգալից վերաբերմունք

է դրսևորում մեր նկատմամբ, ոտնձգություններ կատարում ոչ միայն Արցախի Հանրապետության տարածքի, այլև ՀՀ-ի նկատմամբ: Բոլորս ենք տեղյակ Ղարաբաղն Ադրբեջանի բաղկացուցիչ մաս համարելու մասին Ադրբեջանի նախագահի՝ օրերս արած հայտարարության, ՀՀ-ին ֆինանսական պահանջներ ներկայացնելու նրա մտադրության մասին և այլն: Այդ պահանջները, որոնք հավանաբար կշարունակվեն, ավելորդ անգամ հաստատում են, որ թշնամու ախորժակը սահման չունի: Այդպես է եղել միշտ: Ադրբեջանի հետ ոչ միայն փոխադարձ, այլև միակողմանի հստակ սահմանված զիջումների գնով էլ հնարավոր չէ հասնել անկեղծ ու մշտական խաղաղության:

Միջազգային կառույցների և առանձին երկրների գործելակերպի առումով պետք է ասենք, որ նրանք գործնական քայլերի չդիմեցին արցախյան հիմնախնդիրը կարգավորելու, իրավունքի շրջանակում դրան լուծում տալու համար, չճանաչեցին արցախահայության ինքնորոշման իրավունքը և միանգամայն օրինական ճանապարհով ձեռք բերված անկախությունը:

Տարիներ շարունակ անտեսվեցին Ադրբեջանի մեծ ու փոքր ագրեսիվ գործողությունները, ԼՂՀ և ՀՀ սահմանամերձ շրջանների հրետակոծումները, դիպուկահարների կողմից սահմանամերձ տարածքներում հայ զինվորականների և խաղաղ բնակչության սպանությունները, գերեվարությունները: Տարիներ շարունակ հավասարության նժար դրվեց զոհի և ագրեսորի միջև: Ակնհայտ էր, որ քաղաքակիրթ կոչված աշխարհի ներկայացուցիչները հակված չեն լուծելու արցախյան հիմնախնդիրը, ընդհակառակը՝ ամեն ինչ անելու են հիմնախնդիրը բարդացնելու և իրենց շահերին ծառայեցնելու, թեկուզև արցախահայության արյան հաշվին իրենց ազդեցությունը տարածաշրջանում ամրապնդելու համար: Նույնիսկ 2016 թ. ապրիլին, երբ Ադրբեջանը բացահայտորեն պատերազմ սկսեց Արցախի դեմ՝ ռազմական ճանապարհով հիմնախնդիրը լուծելու համար, աշխարհը հանդես եկավ վերացական, հակամարտության երկու կողմերի միջև հավասարության նժար դնող՝ խաղաղության հերթապահ կոչերով և ոչ ավելին:

Հիմնախնդրի կարգավորման ձգձգումը կարծես թե հուշում էր, որ հակամարտող կողմերն իրենք պետք է լուծեն հիմնախնդիրը, ինչպես կարող են: Իհարկե, չպետք է մոռանանք, որ այս դեպքում ևս նրանք փորձելու էին միջամտել հարցին՝ դրանով իսկ բարդացնելով դրա լուծումը, միայն թե որևէ օգուտ կորզեին: Առավելագույնը, որ միջազգային կառույցներն ու գերտերություններն արեցին, այն է, որ բանակցային գործընթացում փաստաթղթային տեսքով Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման դրույթի կողքին 2009 թ. առաջադրեցին ազգերի ինքնորոշման իրավունքը: Կարծում ենք՝ ավելին չէր էլ կարելի ակնկալել:

Մեզանում կա տեսակետ, որը հարցի լուծման հնարավոր ուղի է համարվել և շարունակում է համարվել, այն է՝ Արցախին սահմանակից ազատագրված յոթ շրջանների մեծ մասի վերադարձ Ադրբեջանին՝ խաղաղության դիմաց, սակայն կարգավիճակի որոշման հարցի հետաձգմամբ: Այդ տեսակետի կողմնակիցները բացասաբար են գնահատում 1998-2018 թթ. հայկական վարչակազմերի կողմից որդեգրված այն դիրքորոշումը, որը այս կամ այն չափով պաշտպանում էր զիջումների չգնալու, ժամանակ շահելու, ազատագրված շրջանները միայն Ղարաբաղի անկախությունը ճանաչելու կամ դրան տանող հանրաքվեի պարագայում վերադարձնելու մոտեցումը[11]:

1998-2018 թթ. ընթացքում արցախյան հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ ՀՀ իշխանությունների դիրքորոշումն անընդունելի որակող գնահատականից տպավորություն է ստեղծվում, թե ադրբեջանական կողմը փափագում էր խաղաղության հասնել, սակայն մեր ագրեսիվ կեցվածքը խանգարեց դրան: Բայց, ինչպես նշվեց, ինչպես բոլորս ենք տեսել ու զգացել, Ադրբեջանը վարում էր խիստ ագրեսիվ քաղաքականություն, շարունակ միջադեպեր էր հրահրում սահմանի տարբեր հատվածներում, գերեվարում մարդկանց ու նրանց հասցնում մահվան կամ մահամերձ վիճակի: Գիտենք նաև, որ տարիների ընթացքում Ադրբեջանն այդպես էլ չհամաձայնեց միջազգային դիտորդների կողմից սահմաններին հակառակորդ կողմերի գործողությունների արձանագրումն ապահովող մեխանիզմների ներդրմանը:

Այն տեսակետը, թե տարածքներ հանձնելու դիմաց հնարավոր էր հասնել խաղաղության, այն էլ՝ առանց միջազգային երաշխիքով Արցախի իրավաքաղաքական կարգավիճակի հարցի շուրջ կոնկրետ պայմանավորվածության առկայության, համոզված ենք, առնվազն պետք է դիտարկել խիստ վերապահումով: Այդ տեսանկյունից հարցի հայանպաստ լուծման մասին հուսալն ընդունելի չէ, որովհետև այդ տեսակետը հենվում է ոչ թե կողմերի իրական ձգտումների ու գործողությունների, պատմության տարբեր շրջափուլերում, ներառյալ վերջին 32 տարիները, Ադրբեջանի և նրա ավագ եղբոր՝ Թուրքիայի դիրքորոշման ու փաստական կեցվածքի վերլուծության վրա, այլ լավագույն դեպքում այն արտահայտողների խաղաղասիրության, բարեկրթության, պարկեշտության, հիմնահարցը քաղաքակիրթ եղանակով լուծելու հայկական կողմի պատրաստակամության վրա: Որպեսզի հարցը լուծվի փոխզիջումային եղանակով, անհրաժեշտ է երկու կողմերի պատրաստակամությունը: Բայց մենք շատ լավ գիտենք, որ ինչպես այժմ, այնպես էլ նախկինում Ադրբեջանը հանդես է եկել հարցը բացառապես իր շահերից լուծելու դիրքերից: Դրա վկայություններն են նրա անթիվ-անհամար ագրեսիվ հայտարարություններն ու գործողությունները, այդ թվում՝ և 2016 թ. ապրիլին լայնամասշտաբ

պատերազմական գործողությունների սանձազերծումը: Ի վերջո, դա է վկայում 2020 թ. աշնանային պատերազմը, դրա ընթացքում և դրանից հետո Ադրբեջանի՝ սահմաններ չճանաչող ագրեսիվ կեցվածքը:

Կարծում ենք՝ մեր խնդիրն այլ հարթության մեջ է: 1994 թ. զինադադարին հաջորդած տարիների ու տասնամյակների ընթացքում հայկական կողմը, առաջին հերթին՝ Արցախի անվտանգության երաշխավոր ՀՀ-ն, որքանո՞վ է վարել իրատեսական քաղաքականություն, որքանո՞վ է ճիշտ գնահատել մեր և թշնամու ուժերի հարաբերակցությունը, դրա փոփոխության միտումներն ու հավանականությունը: Ի՞նչ ենք արել հարցը մեր օգտին լուծելու, ավելի ճիշտ՝ թշնամուն խաղաղություն պարտադրելու համար:

Կարելի է ասել, որ մինչև 2016-2018 թթ. ՀՀ-ն ընդհանուր առմամբ կարողացավ արտաքին ճիշտ քաղաքականության, ամենից առաջ իր ռազմավարական դաշնակցի հետ հարաբերությունների խորացման, ինչպես նաև իր զինված ուժերի մարտունակությունը թշնամու զինված ուժերի մարտունակությունից բարձր պահելու շնորհիվ արցախյան հիմնախնդրի շուրջ պահպանել ստատուս քվոն: Այնուամենայնիվ, չի կարելի պնդել, թե մեզ մոտ ամեն ինչ կարգին էր: Ամեն ինչ կարգին լինելու դեպքում թշնամին 2016 թ. ապրիլին չէր համարձակվի պատերազմ սանձազերծել: Ճիշտ է, հայոց բանակն այդ ժամանակ թշնամուն հակահարված տվեց, բայց բախվեց մի շարք դժվարությունների, բացահայտվեցին լուրջ բացթողումներ:

Դրությունը կտրուկ բարդացավ 2018 թ., երբ ՀՀ-ում իշխանության եկավ Ն. Փաշինյանը: Վերջինս, որը հայոց պատմության մեջ կմնա որպես Ավերող, աչքի ընկավ ՀՀ ներքին կյանքի և արտաքին հարաբերությունների լիակատար խարխլմամբ: Անմասն չմնաց նաև արցախյան հիմնախնդիրը: Նրա չմտածված, գուցե և վնասելու նպատակով լավ մտածված խոսքերը, որ Արցախը Հայաստան է և վերջ, որ ինքը Արցախի խնդրի շուրջ բանակցությունները սկսում է զրոյից՝ իր կետից, որ նախ պետք է պայմանավորվել կարգավիճակի շուրջ, և եթե դրա համար անհրաժեշտ լինի պատերազմել, կպատերազմենք ու կհաղթենք, խիստ բացասական ազդեցություն ունեցան միջազգային կառույցների և տերությունների վրա: Ըստ էության, ՀՀ-ն ընկալվեց իբրև բանակցային անպատասխանատու, անվստահելի, անհուսալի կողմ, քանզի նա չէր պահպանում անգամ դիվանագիտական վարվեցողությունը բանակցությանը մասնակից կողմերի նկատմամբ: Ռուսաստանի հետ հարաբերությունների վատթարացումը, Իրանի հետ հարաբերությունների սառեցումը, ըստ էության, ՀՀ-ն դարձրին խոցելի ու դրանով իսկ ադրբեջանա-թուրքական ագրեսորներին, որոնք տենդագին կերպով պատրաստվում էին պատերազմի և հարմար պահի էին սպասում, հնարավորություն և առիթ

Արցախյան պատերազմ 2020 թ.

տվեցին պատերազմ սկսելու ՀՀ-ի և Արցախի դեմ: Հատկապես, որ վարչապետի պաշտոնը զբաղեցնող Ն. Փաշինյանն իր թիմով գործնական էական քայլեր չարեց ՀՀ ռազմական ներուժը հզորացնելու, առհասարակ անվտանգության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Հետևանքը եղավ այն, որ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց Արցախի դեմ: Պատերազմից առաջ մեծ-մեծ խոսող Ն. Փաշինյանը, որի գործունեությունը պատերազմի ընթացքում կարելի է որակել որպես ձախող, վնասակար, նոյեմբերի 9-ին ստորագրեց մի կապիտուլյացիոն ակտ, որով թշնամուն հանձնվեցին ոչ միայն ազատագրված տարածքները, այլև նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքի զգալի մասը, ինչպես նաև տրվեց ՀՀ տարածքով հաղորդակցության իրավունք Նախիջևանի և Ադրբեջանի միջև: Նա անտեսեց նույնիսկ հայ գերիների, անհետ կորածների, զոհված հայորդիների դիերի վերադարձի հարցը: Այժմ անտեր են թողնված ՀՀ-ի և մեր ձեռքում գտնվող Արցախի Հանրապետության տարածքի սահմաններն ու սահմանային բնակավայրերը: Արցախյան հիմնախնդրի կարգավորման ընթացքի և լուծման հնարավոր ուղիների մասին մեր պատկերացումներն ամբողջացնելու նպատակով կատարենք մի կարևոր արձանագրում. Ադրբեջանի հաղթանակը 2020 թ. աշնանային պատերազմում գլխավորաբար նրա ռազմական գերակշռության արդյունք չէր, թեև նա ՀՀ-ի նկատմամբ ուներ ռազմատեխնիկական լուրջ առավելություն: Առանց չափազանցության, հայկական բանակը չպարտվեց, նա կռվեց հերոսաբար և դրսևորեց փառահեղ ինքնապաշտպանություն: ՀՀ պարտությունը պատերազմում հետևանք էր «վարչապետի» ու նրա թիմի ապաշնորհության,

անգործության ու չարագործության, հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ ցուցաբերած հանցավոր անպատասխանատվության, դավաճանության, արտաքին սխալ քաղաքականության:

Ինչևէ, Ադրբեջանը, որը մշտապես անզիջում, մաքսիմալիստական դիրքորոշում էր որդեգրել արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում, 2020 թ. սկսած լայնամասշտաբ պատերազմով փորձեց Արցախի Հանրապետությունը գրավելով հասնել արցախյան հիմնախնդրի ադրբեջանանպաստ լուծմանը և «արձանագրեց» շոշափելի ձեռքբերումներ: Նոյեմբերի 9-ի ակտում առհասարակ բացակայում է Ղարաբաղի կարգավիճակի հարցը: Այժմ վտանգված է նույնիսկ Արցախի Հանրապետության և արցախահայության գոյությունը, ինչը պետք է սթափեցնող ներգործություն ունենա արցախյան հիմնախնդրի լուծման ուղիների վերաբերյալ մեր դիրքորոշման վրա:

Մեր կարծիքով՝ 2020 թ. աշնանային պատերազմով Ադրբեջանն անդառնալի հարված հասցրեց արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գաղափարին ու դրա հեռանկարներին, սառը ցնցուղի ազդեցություն գործեց բոլոր նրանց վրա, ովքեր կարծում էին, թե արցախյան հիմնախնդիրը չունի ռազմական լուծում:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրվածը, կարող ենք ասել, որ արցախյան հիմնախնդիրն ունի միայն ուժային լուծում, նույնիսկ փոխզիջումների կարելի է հասնել ռազմաքաղաքական ու տնտեսական բավարար ուժի առկայության պարագայում: Իհարկե, սա չի նշանակում, թե մենք պետք է մերժենք բանակցային գործընթացները, իհարկե պետք է բանակցել: Պարզապես միամտություն կլինի հույսեր կապել միայն արդարամտության, պատմականորեն հիմնավորված իրավունքների կամ միջազգայնորեն «երաշխավորված» բանակցությունների հետ: Բոլոր դեպքերում ուժը միշտ պետք է օգնի բանակցություններին, անգամ երբ հայկական կողմն ապահովված է ամուր իրավական հիմքով:

Չթաքցնենք՝ մեր առջև մշտապես ծառացած է եղել և այսուհետ էլ ծառանալու է պատերազմի վտանգը: Դա մեր կամքից ու ցանկություններից անկախ իրողություն է, որը հաշվի չառնելու իրավունք չունենք, որովհետև հաջորդ անգամ կարող ենք կրել մահացու հարված: Այլ տարբերակ չունենք. Հայաստանի Հանրապետությունը միշտ պետք է լինի թշնամուց անհամեմատ հզոր, որպեսզի կարողանա հայ ժողովրդին, այդ թվում՝ և արցախահայությանը զերծ պահել նոր ողբերգություններից և հօգուտ իրեն լուծել արցախյան հիմնախնդիրը, այն է՝ Արցախը վերամիավորել մայր հայրենիքին: ՀՀ-ն պարտավոր է ուժեղ լինել, որպեսզի խուսափի պատերազմից, իսկ պատերազմի դեպքում խորտակիչ հարված հասցնի թշնամուն: Դրա համար Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է մշտապես, երբևէ չընդհատվող և չթուլացող ռեժիմով հզորանալ՝ իրական ժամանակում ձևավորել արդիական սպառազինությամբ բանակ, ազգային անվտանգության անխոցելի համակարգ, դինամիկ զարգացող տնտեսություն, բարձր զարգացած գիտություն, ստեղծել գիտության ամենահամարձակ ու անհավանական նվաճումների վրա հիմնված ռազմարդյունաբերություն՝ մարդկային գործոնը ռազմադաշտում հնարավորինս նվազեցնելու ուղղվածությամբ, ազգային կրթական համակարգ, ազգային արժեհամակարգն առաջնային համարող հասարակություն: Միաժամանակ հայ ժողովրդի հարատևումն ու զարգացումն ապահովելու, արտաքին ցնցումներից պաշտպանելու նպատակով պետք է կայուն արտաքին հարաբերություններ հաստատել մեր ռազմավարական դաշնակցի՝ տարածաշրջանի անվտանգության երաշխավոր Ռուսաստանի հետ և թշնամու համար անհեռանկարային դարձնել պատերազմական ճանապարհով որևէ, այդ թվում՝ և արցախյան հիմնախնդրի լուծման հավանականությունը: ■

Օգտագործված Աղբյուրներ

[*] Տեքստում գործածել ենք երկրամասի՝ և՛ Արցախ, և՛ Ղարաբաղ անվանումները՝ ելնելով տվյալ ժամանակաշրջանում դրանց հրապարակային կիրառման հանգամանքից:

1) Տես Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ. 1917-1920 թթ., Եր., 1999, էջ 202, Нагорнûй Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов /Отв. ред. В. А. Микаелян, Ер., 1992, էջ 79-80, Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 67:

2) Տես Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 339-341:

3) Տես նույն տեղում, էջ 395:

4) Տես Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Եր., 1996, էջ 233-234:

5) Տես Нагорнûй Карабах в 1918-1923 гг., Сборник документов и материалов, էջ 649-650:

6) Տես «Бакинский рабочий», 9 июля 1923, № 151:

7) https://ru.wikisource.org/wiki/Закон_СССР_от_03.04.1990_№_1409-I.

8) Տես http://www.nkr.am/ru/referendum/42/):

9) Տես http://president.nkr.am/ru/nkr/nkr2:

10) Տես https://bit.ly/3qDiCr9:

11) Տես https://bit.ly/36URiwE:

Ո՞վ ի՞նչ շահեց և ի՞նչ կորցրեց արցախյան պատերազմի հետևանքով

Վարդան Հակոբյան

Հրադադարի վերաբերյալ հոկտեմբերի 9-ին ստորագրված եռակողմ համաձայնագիրը դարձավ վերջնագիր ՀՀ-ի համար և ռազմական առաջին հաղթանակը 1918 թ. քեմալա-բոլշևիկյան դավադիր ծրագրի հետևանքով ծնված Ադրբեջան արհեստածին պետության և ադրբեջանցի կոչված ցեղախմբի համար: Թուրքերի ռազմուժի աջակցությամբ, Ն. Փաշինյանի դավաճանության հետևանքով ազերիների տարած հաղթանակը, տասնամյակների հայատյացության գաղափարախոսությունը հենք կդառնան ազերիների մոտ ազգային ինքնագիտակցության ձևավորման համար: Հաղթանակ է տոնում նաև Թուրքիան, որը 100 տարվա բացակայությունից հետո վերահաստատեց իր ռազմաքաղաքական ներկայությունը Հարավային Կովկասում: Ռազմավարական տեսանկյունից Թուրքիան մանրակրկտորեն էր ծրագրել պատերազմը: Մեկ տասնամյակ առաջ սկսելով՝ վերջին 2-3 տարիներին նա ինտենսիվորեն վարժեցնում և զինում էր ադրբեջանական բանակը, օր օրի գրանցում էին նրա դիրքային հաջողությունները սահմանների երկայնքով, ապահովում էր ապագա հարձակման դիվանագիտական քողարկումը: Սա նաև Ռ. Էրդողանի դիվանագիտական հերթական հաղթանակն է թե՛ Արևմուտքի և թե՛ Ռուսաստանի նկատմամբ:

Ինչ վերաբերում է Իրանին, որի գլխին կախված է իսրայելա-ամերիկյան ռազմական հարվածի սպառնալիքը, ապա նա ստիպված է համակերպվել կատարվածի հետ և հուսալ, որ ռուսների հետ կկարողանա կանխել Թուրքիայի ազդեցության շեշտակի աճը տարածաշրջանում: Ունենալով Ռուսաստանի և Թուրքիայի հետ համագործակցության փորձ Սիրիայում՝ Իրանը փորձում է այս դեպքում էլ լինել երրորդ կողմ և, հիմնվելով Արևմուտքի ու երկու գործակիցների հակասությունների վրա, թույլ չտալ Ադրբեջանը դարձնել ռազմավարական պլացդարմ՝ իր վրա հարձակվելու համար:

Արցախյան պատերազմի հետևանքները բավարարեցին նաև ԱՄՆ-ին: Վերջին հաշվով՝ տարածաշրջանում նրա աշխարհաքաղաքական ծրագրերի մի մասն իրականացավ: Օրինակ՝ ՆԱՏՕ-ն՝ ի դեմս Թուրքիայի, գրանցեց իր ներկայությունը Ադրբեջանում, ապահովվեց Իսրայելի ռազմական մասնագետների և հետախույզների «դիտորդական» ներկայությունը Իրանի հյուսիսում: Մնում է օգտագործել ստեղծված իրադրությունը և, քաղաքական, տնտեսական ու դիվանագիտական ճնշում գործադրելով, պարտադրել Ադրբեջանին կատարել հաջորդ քայլերը. Վրաստանի օրինակով ինտեգրվել ՆԱՏՕ-ին և դուրս մղել Ռուսաստանին Հարավային Կովկասից, ավարտին հասցնել Իրանի շրջափակումը և մասնակցել այդ պետության հնազանդեցմանը և այլն: Նրանք բավարարված

են նաև Հայաստանում գունավոր հեղափոխության միջոցով իշխանության եկած դրածոյի կողմից իրենց հանձնարարականների՝ հաջողությամբ կատարված լինելու առումով:

Նոյեմբերի 9-ին ստորագրված եռակողմ փաստաթուղթն անակնկալի բերեց եվրոպացիներին: ՄԽ համանախագահող երկիր Ֆրանսիային չէին էլ տեղեկացրել այդ փաստաթղթի ստորագրման մասին: Փաստորեն, Ռուսաստանը և Թուրքիան խաղից դուրս թողեցին Ֆրանսիային և, ի դեմս այդ երկրի, Եվրամիությանը: Իհարկե, վերջիններիս համար դա դիվանագիտական ակնհայտ պարտություն էր: Եվ այդ պարտությանը նրանց հասցրեց Էրդողանը՝ վրեժխնդիր լինելով Էմանուել Մակրոնից իր հասցեին ասված քննադատական արտահայտությունների համար: Էրդողանը հայտնի է իր քինախնդրությամբ: Վստահաբար նա է համոզել ռուսներին նախօրոք չտեղեկացնել եվրոպացիներին փաստաթղթի ստորագրման մասին, իսկ Փաշինյանին պետք էլ չէր համոզել, որ նա իր դավաճանության մասին աշխարհով մեկ չհայտարարի:

Եվ վերջապես անդրադառնանք Ռուսաստանին, որը երկու դար իշխել է Հարավային Կովկասում և այսօր էլ բացառիկ դերակատարություն ունի տարածաշրջանում: Ինչի՞ հասավ և ի՞նչ ձեռք բերեց այս պետությունը Արցախյան պատերազմի հետևանքով:

Ռուսական պաշտոնական ԶԼՄ-ները, քաղաքագետներն ու վերլուծաբանները հրադադարի ստորագրումը համարում են Ռուսաստանի դիվանագիտական հաղթանակը: Նրանք նշում են, որ այն ժամանակ, երբ ՄԽ համանախագահող երկիր ԱՄՆ-ն զբաղված էր ընտրություններով և Թրամփ-Բայդեն մենամարտով, իսկ նախագահ Է. Մակրոնը՝ Ռ. Էրդողանի հետ լեզվակռիվ տալով կամ բելառուսցի ընդդիմադիր Տիխոնովսկայային ոգևորելով՝ շարունակելու իշխանության համար պայքարը, ռուս դիվանագետները հետևողական աշխատանք էին տանում պատերազմը կանգնեցնելու և կողմերին բանակցային սեղանի շուրջ նստեցնելու ուղղությամբ: Եվ նրանց դա հաջողվեց:

Նշվում է նաև, որ Ռուսաստանը ռազմաքաղաքական հաղթանակ տարավ՝ տեղակայելով իր զինվորական

կոնտինգենտը զինադադարի պահին ձևավորված շփման գծի ողջ երկայնքով: Իհարկե, սա ևս հաղթանակ էր: Մինչ Արևմուտքում քննարկում էին հայ-ադրբեջանական բախման գծում ՄԱԿ-ի դրոշի ներքո տեղակայվելիք խաղաղապահների կոնտինգենտի ազգային կազմի հարցը, ՌԴ զորախումբը նոյեմբերի 10-ին մտավ Արցախ: Ըստ համաձայնագրի՝ նորագույն տեխնիկայով զինված 2 հազարանոց զորախումբը կտեղակայվի Արցախի սահմաններին 5 տարով, հետագայում անհրաժեշտության դեպքում այդ ժամկետը կարող է երկարացվել ևս 5 տարով և այդպես շարունակ: Այսպիսով՝ հայ-թուրքական և հայ-ադրբեջանական սահմաններն ամբողջությամբ կլինեն ռուսական բանակի հսկողության ներքո, որը կերաշխավորի հայ ժողովրդի անվտանգությունը: Հայկական տարածքներում ՌԴ-ն, բացի Գյումրիի ռազմաբազայից, կստեղծի ևս մեկը և, օգտագործելով նաև Ստեփանակերտի օդանավակայանը, կունենա երկրորդ հզոր զորախումբը Հարավային Կովկասում: Ռուսները հպարտությամբ են նշում, որ ՌԴ-ն կատարեց խաղաղարարի իր առաքելությունը և դադարեցրեց արյունալի պատերազմը: Մի՞թե սա հաղթանակ չէ: Իհարկե, սա Ռուսաստանի և անձամբ Պուտինի հերթական հաղթանակն է: Այդ շարքում նշենք միայն Հարավային Օսեթիան, Աբխազիան, Ղրիմը և Սիրիան: Բայց կա մի հանգամանք, որը ռուս քաղաքագետները չեն կարող անտեսել. դա նշված հաղթանակների ոչ լիարժեք լինելն է: Այս հանգամանքը անլիարժեքության բարդույթ է առաջացնում նրանց մոտ և դառնացնում է այդ հաղթանակի քաղցր զգացումը: Օրինակ՝ 2008 թ. պատերազմում ռուսները հաղթեցին վրացիներին, հռչակեցին Աբխազիայի և Հարավային Օսեթիայի անկախությունը, բայց կորցրին Վրաստանը: 2015 թ. վերադարձրին Ղրիմը, Դոնեցկն ու Լուգանսկը հռչակեցին իրենց անկախությունը: Բայց դրա հետ մեկտեղ, ի դեմս Վրաստանի և Ուկրաինայի, ձեռք բերեցին ՆԱՏՕ-ի կամակատար, գրեթե թշնամի հարևաններ: Հիշեցնենք նաև տնտեսական պատժամիջոցների տարեցտարի ընդլայնվող ցանկը:

Արցախյան հակամարտության կարգավորման այս փուլում լիարժեք չէ նաև ռուսական քաղաքականության հաղթանակը: Դա հասկանալու համար անդրադառնանք այն մաքսիմում ծրագրին, որ ՌԴ-ն նպատակ ուներ իրականացնելու Հարավային Կովկասում: Ինչպես նշեցինք, ձեռքից բաց թողնելով Վրաստանը, Ռուսաստանը պետք է աներ ամեն ինչ՝ իր ազդեցության ոլորտում պահելու Ադրբեջանն ու Հայաստանը: Դրա համար մեծ հնարավորություն էր ընձեռում ղարաբաղյան հակամարտությունը՝ քաղաքական և դիվանագիտական միջոցներով շահարկելով այդ հակամարտությունը, հավասարակշռելով կողմերի ռազմական, քաղաքական և դիվանագիտական կախվածությունը Ռուսաստանից՝ պահելու նրանց իր շահերի դաշտում: Մինչև 2016-17 թթ. այդ քաղաքականությունն ընդհանուր առմամբ արդյունավետ էր: Սակայն աննախադեպ

Թուրք և ադրբեջանցի զինվորներ

ճնշման ենթարկվելով ԱՄՆ-ի և ԵՄ-ի կողմից Ղրիմի վերամիավորման և Սիրիայում ռազմական ներգրավվածության պատճառով՝ Ռուսաստանը թուլացրեց իր վերահսկողությունը այն գործընթացների նկատմամբ, որոնք արդեն ընթանում էին Հարավային Կովկասում: ԱՄՆ-ն և ԵՄ-ը քաջատեղյակ էին, թե ինչպես է Թուրքիան, օգտագործելով իր հեղինակությունը, որպես ՆԱՏՕ-ի ավանգարդ երկիր, բոլոր ուղղություններով իր ազդեցության տակ վերցնում Վրաստանը, ինչպես է ներքաշում իր ռազմավարական ծրագրերի մեջ՝ դարձնելով այն միջանցք դեպի Կասպից ծով: Գաղտնիք չէր նաև, որ Թուրքիան իր ձեռքն էր վերցրել Ադրբեջանի բանակի վերազինման, վերապատրաստման և վարժեցման գործը, հաճախակի զորավարժություններ էր անցկացնում Արցախի ու Հայաստանի սահմանների մոտ, օժանդակում էր Ադրբեջանին դիվանագիտական ճակատում: Ստիպված լինելով հաշվի նստել և համագործակցել Թուրքիայի հետ սիրիական հարցում՝ այդ գնով հեռու պահելու նրան հակամարտության կարգավորման գործընթացը խաթարելու սպառնալիքներից՝ Ռուսաստանն արդեն ստիպված էր հաշվի նստել Էրդողանի համառ նպատակասլացության հետ նաև հարավկովկասյան հարցերում: Ստիպված էր, որովհետև ավելին անելու համար ուժերը չէին բավարարում: Որքան էլ ցավալի է Ռուսաստանի համար, և որքան էլ այդ դառնությունը քաղաքագետները քողարկեն «հաղթանակ» բառով, փաստն այն է, որ Թուրքիան այլևս Ադրբեջանում է և գնալով խորացնելու ու ընդլայնելու է իր ներկայությունը այնտեղ: Իսկ դա նշանակում է, որ Ադրբեջանը քայլ առ քայլ դուրս է գալու Ռուսաստանի ազդեցության ոլորտից՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Ռուսաստանում նաև տեղյակ էին, թե ինչ է կատարվում Հայաստանում: Չնայած ռուսական քաղաքական էլիտայի շրջանում ամրագրված ստերիոտիպին, թե «հայերը փախչելու տեղ չունեն»՝ նկատի ունենալով թուրքական վտանգը, ՌԴ քաղաքական ղեկավարությունը տեսնում էր, որ

Ռուս խաղաղապահները Արցախում

հայ-ռուսական հարաբերություններին սպառնացող վտանգը աստիճանաբար մեծանում է: Արդեն 2010-ական թվականների սկզբներից Հայաստանի զարգացումը դանդաղում է, տնտեսությունը լճանում է, պետական պարտքը սրընթաց ավելանում է, կրճատվում են ապրանքափոխանակության ծավալները, բանակը չի ապահովվում ժամանակակից տեխնիկայով, աճում է սոցիալական լարվածությունը հասարակության մեջ և այլն: Ռուսաստանում տեսնում էին, որ այս պայմաններում խորանում էին արևմտամետ տրամադրությունները, ՀՀ-ն պատրաստվում էր ստորագրելու Համապարփակ և ընդլայնված գործընկերության պայմանագիրը ԵՄ-ի հետ, ներքաղաքական կյանքում գնալով ակտիվանում էին արևմտամետ ուժերը, արևմտյան տարբեր դրամաշնորհներից օգտվող բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, սկսում էր թափ հավաքել հակառուսական քարոզչությունը և այլն: Նրանք տեսնում էին, որ Վրաստանից և Ուկրաինայից հետո Արևմուտքը գունավոր հեղափոխություն է նախապատրաստում Հայաստանում: Այդ հեղափոխությունը կատարվեց 2018 թ. մայիսին և իշխանության բերեց արևմտյան դրածոյին ու նրա հետ հայտնի կենտրոններում պատրաստված թիմակիցներին: Կասկած չկար, որ Ն. Փաշինյանի կառավարության հենց առաջին քայլերը՝ ռուսամետ քաղաքական գործիչների ու զինվորականների վարկաբեկումը, նեոլիբերալ բարեփոխումների իրականացումը և այդ գործում Եվրամիության ֆինանսա-տեխնիկական օժանդակությունը, արտաքին քաղաքականության միանշանակ կողմնորոշումը դեպի Եվրոպա և ԱՄՆ, ուղղված են Ռուսաստանի հետ հարաբերությունների նսեմացմանը: ՌԴ ղեկավարությունը շատ լավ էր հասկանում, որ Ղարաբաղի հարցում Փաշինյանի վարած քաղաքականությունը նպատակ ուներ ի կատար ածելով Ջ. Բոլթոնի կողմից տրված հրահանգը նաև նսեմացնելու ռուսական կողմի դերակատարությունը հակամարտության կարգավորման գործընթացում: Եվ վերջապես՝ նրանց համար պարզ էր, որ, չնայած ռուսական կողմի և մասնավորապես Ս. Լավրովի հաճախակի և համառ նախազգուշացումներին ու կոչերին՝ բաց չթողնելու բանակցությունների միջոցով հարցի կարգավորման հնարավորությունները, Ն. Փաշինյանն իր անպատասխանատու հայտարարություններով քանդում է բանակցային դաշտը և տանում է պատերազմի: Ի՞նչ կարող էին անել ռուսները այս պարագայում: Թերևս միայն այն, ինչ որ արեցին: Մեր բանակի «փայլուն վերակազմավորման, խորհրդային հնացած տեխնիկայի կատարելագործման և նոր, հզոր ու ժամանակակից զենքերի ձեռքբերման» մասին ճոռոմախոսությամբ իր ժողովրդին խաբող Ն. Փաշինյանի փոխարեն Վ. Պուտինն էր ջանքեր գործադրում, որպեսզի հնարավորինս սահմանափակի Թուրքիայի մասնակցությունն այդ պատերազմում, հստակ հայտարարում էր, որ ՌԴ-ն պատրաստ է իր դաշնակցային պարտքը կատարելու Հայաստանի հանդեպ, եթե վերջինս դիմի իր օգնությանը: Միջազգային հարթակներում իրեն եվրոպացիներից ավելի եվրոպացի ու անմնացորդ ժողովրդավար ներկայացնող ՀՀ ԱԳ նախարարի փոխարեն Ս. Լավրովն էր բանակցություններ վարում և դիվանագիտական ուղիներ փնտրում իր եվրոպացի գործընկերների հետ պատերազմը կանխելու, իսկ հետո արդեն դադարեցնելու համար: Բայց նրանք արեցին այնքան, որքան կարողացան: Ավելին կանեին, եթե դա ցանկանար դաշնակից Հայաստանը:

Արդար լինելու համար նշենք, որ արցախյան այս պատերազմում ռուսական կողմի ռազմաքաղաքական հաղթանակի անլիարժեքությունը պայմանավորված է ոչ միայն և ոչ այնքան հակադիր ուժային կենտրոնների կողմից կաշկանդված լինելու հանգամանքով: Պատճառներից էր նաև այն, որ դաշնակից Հայաստանի ղեկավարը, չնայած իրավական, քաղաքական պայմանագրային առկա հիմքերին, հնարավորություն չէր ընձեռում Ռուսաստանին օգտվելու դրանցից: Մինչև պատերազմի վերջին օրերը խաղից դուրս թողնելով Ռուսաստանին՝ նա հասցրեց Արցախը աղետի: Մի՞թե կարելի է չհամաձայնել ռուս քաղաքագետների այն գնահատականի հետ, որ Ն. Փաշինյանը ոչ միայն դավաճանեց իր ժողովրդին, այլև դավաճանաբար վարվեց իր միակ դաշնակցի հետ: ■

Տնտեսական ճգնաժամի հիմնապատճառները անցած երկուսուկես տարում

Թադևոս Ավետիսյան
ՀՅԴ Բյուրոյի տնտեսական հետազոտությունների գրասենյակի ծրագրերի համակարգող

Առանց գաղափարական հենքի իշխանության եկած քաղաքական ուժը հանրային կյանքի բոլոր ոլորտներում գործադրեց իր ողորմելի բանաձևերը. «Զենք խանգարում, աղքատությունը գլխներիցդ հանեք, գնացեք աշխատեք և գոյատևեք, հակառակ դեպքում ինքներդ ձեզ մեղադրեք», «Մենք ունենք աստվածային շնորհ՝ ամեն ինչ գիտենք և երբեք չենք սխալվում», «Հարկերն էլ անպայման պիտի վճարեք, իշխանավորին պիտի լավ պահեք, թե չէ տեսեք՝ կաշառք կվերցնի»:

Գործող վարչակարգը պարտվողական առաջնորդությամբ, անպատասխանատու կեցվածքով, հանրային ներուժը ջլատելով, համատարած պոպուլիզմով և կեղծ օրակարգեր առաջ մղելով, երկուսուկես տարում մեր երկիրը հասցրեց կործանման եզրին:

Փաստացի արձանագրումներն ու հետևանքները անդառնալի և կործանարար եղան մեր երկրի տնտեսական կայուն զարգացման առումով.

1. տնտեսական հեղափոխության կեղծ խոստումներ, իրականության աղճատում, անսահման պոպուլիզմ, իսկ իրականում՝ տնտեսության մեջ պետության կարգավորիչ դերի, անհրաժեշտ մասնակցության և պատասխանատվության աստիճանի հետևողական նվազեցում, փոշիացում,
2. հանրային կառավարողների տոտալ անպատասխանատվության, ապազգային կերպի, մասնագիտական անբավարար մակարդակի համատարած դրսևորումներ,
3. զարգացման համազգային ներուժի հետևողական ջլատում, համերաշխության հետևողական քայքայում,
4. իշխողների ռոմակային, նեղ կուսակցական և անձնական շահերի գերակայություն երկրի կայուն զարգացման շահերի նկատմամբ,
5. ոլորտային ընթացիկ ձախողումներ և դրանց համար մեղավորներ գտնելու ձգտում, իրական պատասխանատուների անվերջ խուսանավում և թերարժեքություն,
6. հարկային համակարգի ապախթանիչ և հակասոցիալական փոփոխություններ՝ եկամտահարկի համահարթեցում, անուղղակի հարկերի և գույքահարկի բեռի ավելացում,
7. բարձրաստիճան պաշտոնատար անձանց անաշխատ պարգևատրումներ և թաքնված կոռուպցիայի այլ դրսևորումներ՝ մեկ անձից պետական գնումների աննախադեպ փաստեր, ապաշնորհ յուրայինների հովանավորչություն, պետական կառավարման հետևողական այլասերում և այլն,
8. Սփյուռքում Հայաստանի իշխանությունների

քայքայիչ նախաձեռնություններ, Սփյուռքի տնտեսական իրական ներուժի միտումնավոր անտեսում,
9. ԵԱՏՄ անդամակցությունից բխող՝ GSP+ համակարգի, Իրանի հետ արտաքին առևտրային արտոնյալ ռեժիմների գործադրման անկարողություն և անտեսում, ինչի հետևանքը եղավ արտահանման աճի տեմպի 2,5 անգամ նվազումը, իսկ արդեն 2020 թ.՝ երկնիշի հասնող անկումը,
10. COVID-19 համավարակի դեմ պայքարի լիարժեք տապալում, ինչը հանգեցրեց տնտեսական անարդյունավետ սահմանափակումների և հյուծման, չթիրախավորված և դրված նպատակի հետ աղերս չունեցող պետական ծրագրերի իրագործման և պետական միջոցների փոշիացման, աննպատակ տուգանքների սահմանման և դրանց չափերի բարձրացման, տնտեսվարողների վարչական բեռի չհիմնավորված ավելացման, օբյեկտիվ իրավիճակին և մարտահրավերներին արձագանքման անհամարժեքության և այլն,
11. պարտվողական առաջնորդությամբ Արցախյան պատերազմի խայտառակ կապիտուլյացիա և որպես տնտեսական կործանարար հետևանքներ՝

- հայկական տարածքների 25 տոկոսի, համապատասխանաբար՝ սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների, տնտեսական օբյեկտների և դրանց զարգացման իրական ներուժի դավաճանական հանձնում թշնամուն,
- կորցրած ռազմական ներուժի վերականգնման համար պետական լրացուցիչ ծախսերի երկարաժամկետ իրականացման անհրաժեշտություն,
- պատերազմի վերսկսման հնարավորությամբ պայմանավորված՝ հայկական երկու հանրապետություններում ներդրումային ռիսկերի աննախադեպ աճ՝ տնտեսության երկարաժամկետ անկման

իրական հեռանկարով,

• էական հարված ՀՀ իրավասուբյեկտությանը, տարածաշրջանում մեր երկրի աշխարհագրական հիմնական առավելության զրոյացում՝ Մեղրու սահմանով թշնամուն ճանապարհ տալու նենգ պայմանավորվածությամբ,

• պատերազմի 44 օրերի ընթացքում տնտեսության պետական կարգավորման քաղաքական պատասխանատուների հանցագործ անգործություն՝ հնարավոր բոլոր հետևանքներով,

12. խայտառակ պարտությունից հետո ամեն գնով իշխանությունը պահելու անթաքույց մոլուցք ու թուլամորթություն, հանրային կյանքի բոլոր ոլորտներում կառավարման համակողմանի ճգնաժամ, ժողովրդավարական կեղծ բարբաջանքով բռնապետության վերջնական հաստատման իշխանական ծրագիր և երկրի վերջնական կործանման ճանապարհային քարտեզի առաջադրում,

13. ներքաղաքական և աշխարհաքաղաքական նոր ու խորացող անկայունություն, տնտեսական անկառավարելի ռիսկեր, որոնց հետևանքով ի հայտ են գալիս բացասական նոր երևույթներ՝

• նախորդ 10 տարվա կտրվածքով ներդրումների և տնտեսական կայուն զարգացման ներուժի կրճատում, երկնիշի հասնող տնտեսական աննախադեպ անկում և արտաքին առևտրի շրջանառության ու արտահանման կրճատում, ազգային արժույթի արժեզրկում և արժութային ճգնաժամի իրական ռիսկեր, առաջին անհրաժեշտության ապրանքների գնաճ,

14. շարքը կարելի է շարունակել:

Սոցիալական բազմագործոն ճգնաժամի հիմնապատճառ դարձած արձանագրումները նախորդ երկուսուկես տարում

Օրվա իշխանությունները, չունենալով գաղափարախոսական և ծրագրային հենք, ընտրություններից առաջ սոցիալիստ էին՝ պոպուլիստական անսահման և կեղծ խոստումներով, իսկ դրանցից հետո որդեգրեցին շուկայական վայրենի մրցակցության սկզբունքը, զուգահեռաբար ծրագրված ու համատարած ձևով հարձակվեցին ազգային արժեքների վրա:

Օր օրի էլ ավելի հեռացանք սոցիալական պետության մոդելից. հետևողականորեն կրճատվեցին պետության սոցիալական պարտավորությունները, նվազեցվեց սոցիալական պաշտպանության ոլորտում պետական անհրաժեշտ մասնակցության աստիճանը: Սոցիալական պաշտպանության ոլորտում որդեգրվեցին տոտալ անպատասխանատվությունը, կեղծ խոստումներն ու անսահման պոպուլիզմը:

Հետևանքները սպասեցնել չտվեցին: Սոցիալական ծրագրերն ու բարեփոխումները հետևողականորեն ձախողվել են զբաղվածության աջակցությունից և աշխատողների իրավունքների պաշտպանությունից մինչև կենսաթոշակի և սոցիալական նպաստների

ոլորտներ: Փոխարենը տեսել ենք իրենցից դուրս մեղավորներ գտնելու թերարժեքություն, քաղաքական պատասխանատուների անաշխատ պարգևատրումներ և թաքնված կոռուպցիայի այլ դրսևորումներ, կառավարողների մասնագիտական անկարողություն, չպատճառաբանված ինքնավստահություն և մեծամտություն:

COVID-19 համավարակի դեմ պայքարը տապալվեց հնարավոր վատթարագույն սցենարով: Հետևանքը եղավ առողջապահական համակարգի կոլապսը. մահվան արդեն արձանագրված շուրջ 2000 և ամեն օր ավելացող 30-40 դեպք, առանց բժշկական օգնության մնացած հազարավոր քաղաքացիներ, համավարակի տարածման կայուն բարձր տեմպ, սոցիալ-տնտեսական անդառնալի հետևանքներ՝ տնտեսական երկնիշ անկում, պետական բյուջեի հարկային մուտքերի աննախադեպ նվազում, աշխատատեղերի և մարդկանց կայուն եկամուտների կրճատում, աղքատության մակարդակի աճի էական նախադրյալներ: Համավարակով պայմանավորված՝ պետական աջակցության անարդյունավետ ծրագրերով մսխվում է պետական բյուջեն, ինչն անամոթաբար շարունակվեց նաև պատերազմի օրերին: Ավելին՝ 2021 թ. պետական բյուջեի նախագծով իշխանավորների պարգևատրումների ֆոնդի համար նախատեսված է 22 տոկոս աճ, իսկ սոցիալական պաշտպանության ոլորտի համար՝ 2 տոկոս:

Գործնականում հետևողականորեն տարվում է պետական կարգավորման հակասոցիալական գիծը՝ դրան միտված իշխանական վարքագծով և փոփոխություններով: Այս իմաստով հատկանշական են հետևյալ արձանագրումները՝

1. հայի տեսակին և սոցիալական հանրահայտ սկզբունքներին հակադրվող վարչապետի «ցնցող գյուտը»՝ «մեղավո՛ր են աղքատները, քանի որ աղքատությունը նրանց գլխում է»,

2. հարուստների եկամտահարկի աննախադեպ նվազեցում, աշխատող աղքատների համար եկամտահարկի բեռի անփոփոխ պահպանում, անուղղակի հարկերի և գույքահարկի բեռի ավելացումը, վերջին հաշվով՝ բարձր եկամուտ ունեցողների ընդհանուր հարկային բեռը դրվեց ողջ հանրության, այդ թվում՝ բնակչության 25 տոկոսը

կազմող աղքատների ուսերին,

3. աղքատության մակարդակի կրճատման տեմպի նվազում՝ շուրջ 40 տոկոսով, գործազրկության պահպանվող բարձր մակարդակ, աշխատանքային ռեսուրսների կրճատում արտագաղթի հետևանքով,

4. կուտակային կենսաթոշակային խնդրահարույց համակարգի խոստացված չեղարկման փոխարեն վերջնականապես և անդառնալիորեն դրա ամրագրում,

5. 2018 թ. 75 տոկոսի, իսկ 2019 թ. 50 տոկոսի չափով զբաղվածության պետական ծրագրերի թերակատարում (տարեկան 3000-4000 գործազուրկ զրկվեց օրենքով հասանելի աջակցությունից),

6. աշխատողների իրավունքների պաշտպանության ոլորտի լիարժեք անտեսում և մեկնարկած բարեփոխումների կասեցում,

սոցիալական պաշտպանության ոլորտի պետական ծրագրերի հասցեականության, տեղեկատվության ապահովման և անապահովության մակարդակի գնահատման համակարգի բարեփոխումների նպատակի ձախողում,

ժողովրդագրական անարդյունք ծրագրերով պետական միջոցների փոշիացում, դրա հետևանքով բնակչության թվաքանակի և ծնունդների նվազում:

Իսկ արդեն Արցախի պատերազմում պարտվողական նենգ առաջնորդության հետևանքները առաջ են բերել նաև աննախադեպ ծավալի սոցիալական նոր հիմնախնդիրներ, որոնք վերաբերում են ՆԱՀԱՏԱԿՎԱԾ և հաշմանդամ դարձած հազարավոր հերոս հայորդիների ընտանիքների, հայրենիքի՝ հաշմանդամ դարձած տասնյակ հազարավոր ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ, Արցախի տասնյակ հազարավոր փախստականների սոցիալական, առողջապահական աջակցությանը:

Համալիր ճգնաժամից երկիրը դուրս բերելուն ուղղված սկզբունքային մոտեցումներ

Գործող իշխանության անցնցում հեռացումից հետո ձևավորվելիք անցումային կառավարությունը պետք է անհապաղ հաստատի և իրագործի ԵՐԿՐԻ սոցիալ-տնտեսական հակաճգնաժամային կառավարման ԾՐԱԳԻՐԸ՝ հետևյալ հիմնական սկզբունքների համաձայն.

1. Տնտեսական արդյունքը և աճը պետք է առաջնահերթորեն ապահովեն նյութական բավարար հիմք՝ հայ ժողովրդի և պետականության գոյությունը պահպանելու, անվտանգ, արժանապատիվ, ազատ ապրելու ձգտումները կյանքի կոչելու համար:

2. Պետության դերն ու մասնակցությունը պետք է դառնան առանցքային, այլևս ոչ երբեք՝ կրավորական, անտարբեր ու անպատասխանատու:

3. Պոպուլիզմը, կեղծ խոստումները պետք է իսպառ բացառվեն պետական կառավարման ողջ համակարգից:

4. Պետական ծրագրային աջակցությունը պետք է պայմանավորվի իրավիճակից բխող առարկայական

առաջնահերթություններով, լինի օբյեկտիվորեն գնահատված հիմնախնդիրներին համարժեք, թափանցիկ և ամբողջապես վերահսկելի, իսկ գործող և նոր կյանքի կոչվող պետական աջակցության ցանկացած ծրագիր պետք է ունենա՝

- սահմանված նոր առաջնահերթություններին համապատասխանության և ծախս-արդյունավետության համալիր գնահատում՝ առկա օբյեկտիվ տեղեկատվության հիման վրա,
- հիշյալ ծրագրի շարունակականության նպատակահարմարության վերաբերյալ ոլորտի լիազոր մարմնի եզրակացություն:

5. Հակաճգնաժամային ծրագրերը պետք է հաստատվեն հանրային շահագրգիռ լայն շրջանակների համաձայնությամբ, իրավիճակից բխող օպերատիվ քննարկումների արդյունքում, ինչպես նաև պետք է ունենան՝

- իրավիճակի վրա ազդող և թելադրող տեսանելի արդյունքներ,
- ծախս-արդյունավետության օբյեկտիվ գնահատական,
- ակտիվ տնտեսական աջակցության բնույթ՝ սոցիալ-տնտեսական հատկորոշված խնդիրը կանխարգելող, կամ պասիվ սոցիալական՝ ըստ կարիքի և առաջնահերթությունների դրամական վճարներ և այլ օգնություն,
- կոնկրետ շահառու խմբի՝ կոնկրետ թվաքանակով շահառուներ, սահմանված ժամկետներ, լուծման ենթակա սոցիալական կամ տնտեսական կոնկրետ խնդիր,
- շահառուի հետ հետադարձ կապ և ընթացիկ մշտադիտարկում,
- նախանշված և ստացված արդյունքների շեղումների պարբերական գնահատում և համապատասխան հետևություններ՝ հետագա ընթացքի վերաբերյալ:

6. Յուրաքանչյուր ոլորտի պետական ներքին կառավարումը պետք է իրականացվի զինվորական բարձր կարգապահության սկզբունքներով,

անցումային կառավարության յուրաքանչյուր անդամ պետք է ստանձնի ոլորտային չափելի և անձնական պատասխանատվություն՝ կոնկրետ ժամանակացույցով նախանշված չափելի արդյունքներն ապահովելու համար, ցանկացած ձախողմանը պետք է անմիջապես հաջորդի համարժեք պատասխանատվություն, իսկ պարգևատրումները պետք է վաստակել քրտնաջան աշխատանքով և դրա արդյունքների օբյեկտիվ գնահատման հիման վրա:

Սոցիալ-տնտեսական ոլորտային քաղաքականության մեջ անհապաղ անհրաժեշտ փոփոխությունները

Հարկային քաղաքականության հիմքում պետք է դրվեն հետևյալ հավաքական մոտեցումները՝

- տնտեսական աճի և ներդրումների խթանմանն ուղղված ամբողջական մեխանիզմների գործադրում՝ թշնամի երկրների հետ սահմանամերձ բնակավայրերում շահութահարկի և եկամտահարկի դրույքաչափերի առնվազն կրկնակի նվազեցում, փոքր բիզնեսի՝ հարկերից ազատում, սփյուռքահայերի կողմից իրականացվող ներդրումների համար արտոնյալ հատուկ ռեժիմի սահմանում,
- ուղղակի հարկերի սոցիալական բաղադրիչի վերականգնում, «շատից շատ, քչից քիչ» եկամուտների արդար բաշխման սկզբունքի արդյունավետ ապահովում. սոցիալապես առավել ապահով և բարձր եկամուտ ունեցողների հարաբերականորեն առավել մեծ մասնակցությունը պետք է ուղղված լինի հանրության խնդիրների լուծմանը:

Ներդրումներ ապահովելու նպատակով պետք է ձևավորվի մասնագիտացված պետական հատուկ մարմին՝ անհրաժեշտ լայն լիազորություններով՝

- տեղական և օտարերկրյա հավանական ներդրողներին ներդրումային ծրագրային առաջարկների ներկայացում,
- ներդրողների հետ նախաձեռնողական ու ակտիվ բանակցությունների վարում և անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում,
- ներդրումային կոնկրետ ծրագրի իրականացման համար պետական երաշխիքների վերաբերյալ եզրակացությունների տրամադրում,
- գործնականում անհրաժեշտ և բավարար այլ լիազորություններ:

Պետական բյուջեով նախատեսված ծախսային բոլոր ծրագրերը պետք է վերանայվեն հակաճգնաժամային կառավարման ծրագրային ապահովման սկզբունքներին համապատասխան: Պետական մարմինների պահպանման ծախսերը պետք է հասցվեն նվազագույնի՝ համապատասխանաբար կրճատելով ապօրինի պարգևատրումները, սպասարկող մեքենաները, անսպատակ գործուղումների ծախսերը, տեղական-խորհրդական-օգնական-քարտուղարուհի ինստիտուտը և այլն: Այս կերպ պետք է ձևավորվի նաև 2021 թ. պետական բյուջեի ծախսային մասը:

Առավելագույնս պետք է գործադրվեն մեր

երկրի արտաքին տնտեսական համեմատական առավելություններն ու չիրացված հսկայական ներուժը՝

- Հայկական սփյուռքը՝ տնտեսական կապեր, մասնագիտական և ներդրումային կարողություններ և այլն,
- ԵԱՏՄ, GSP+, Իրանի հետ առևտրային արտոնությունները,
- հանրության ջլատված ներուժի համախմբումը, համերաշխության և հավաքական խնդիրների լուծման շուրջ կայուն միասնականության հաստատումը:

Ժողովրդագրական այս աննախադեպ մարտահրավերների պարագայում հակաճգնաժամային քաղաքականության առաջնային ուղղություն պետք է դառնան հնարավոր բոլոր ձևերով՝

- սպասվող արտագաղթի մեծ ալիքի կանխումը,
- աննախադեպ չափերի հասած և օր օրի աճող մահացության ցուցանիշի՝ հարվածային տեմպերով նվազեցումը:

Որպես ամփոփում

Եզրակացությունը մեկն է՝ այս իշխանությունը պետք է անհապաղ փոխարինվի ազգային արժեքներով առաջնորդվող նոր որակի իշխանությամբ: Միայն այդ դեպքում է հնարավոր մեր երկրի վերակառուցումը՝ սոցիալ-տնտեսական խորացող ճգնաժամի կասեցումը, գոյատևման խնդիրների առաջանցիկ լուծումները և քաղաքացիների կյանքի որակի հետևողական բարձրացումը:

Հայաստանի խորհրդայնացումը

Անի Մելքոնյան
Պատմաբան, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

Ինչպես արդեն ասել ենք, Բաքվում Սարգիս Կասյանի նախագահությամբ ստեղծված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն 1920թ. նոյեմբերի 29-ին Իջևանի կողմից մտավ Հայաստան՝ այն հռչակելով խորհրդային: Այդ նույն օրերին երկրի անկախ գոյությունը երկարաձգելու համար ՀՀ կառավարությունը մի կողմից Ալեքսանդրապոլում թուրքերի հետ բանակցություններ էր վարում՝ հայրենիքի վերջին փշրանքները փրկելու համար, մյուս կողմից փորձում էր ստանալ Ռուսաստանի աջակցությունը: Բոլորի համար պարզ էր, որ Հայաստանը կամ պետք է Ռուսաստանի հետ լիներ, կամ Թուրքիայի ոտքի կոխան դառնար, հայ ժողովրդի գլխին դարձյալ կախվել էր ֆիզիկական բնաջնջման վտանգը:

Բանակցություններում թե՛ թուրքերը և թե՛ ռուս բոլշևիկները, համաձայն Հայաստանը բաժանելու իրենց ծրագրի, որդեգրել էին անզիջում կեցվածք, և նոյեմբերի 29-ին Բ. Լեգրանը Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերջնագիր ներկայացրեց:

«ՀՀ հետագա ճակատագրի հարցը վերջնականորեն վճռելու համար նոյեմբերի 30-ի լույս դեկտեմբերի 1-ի գիշերը կառավարության շենքում տեղի ունեցավ խորհրդակցություն՝ ՀՅԴ Բյուրոյի, ՀՅԴ Հայաստանի ԿԿ-ի, խորհրդարանի ՀՅԴ խմբակցության և մի քանի հանրաճանաչ գործիչների մասնակցությամբ: Խորհրդակցությունում պետք է Բ. Լեգրանի ներկայացրած վերջնագրին պատասխան տրվեր:

Ս. Վրացյանի, Դրոյի և Հ. Քաջազնունու ելույթներից հետո խորհրդակցության մասնակիցները հիմնականում հանգում են այն հետևության, որ վիճակն անհույս է»[1]:

Դեկտեմբերի 1-ին, երբ Հայաստանը դեռևս խորհրդայնացած չէր, Երևանում տեղի է ունենում խորհուրդների հանդիսավոր նիստը, որտեղ Գ. Օրջոնիկիձեն խոսում է Արցախը, Զանգեզուրն ու Նախիջևանը Հայաստանին թողնելու մասին:

Ադրբեջանա-բոլշևիկյան այս ներկայացումը նպատակ ուներ արագացնելու Հայաստանի խորհրդայնացումը՝ վստահեցնելով, որ Հայաստանը տարածքային կորուստներ չի ունենա: Եվ ահա դեկտեմբերի 2-ին կնքվում է Հայաստանի խորհրդայնացման համաձայնագիրը, որով Հայաստանը հռչակվում է «խորհրդային սոցիալիստական հանրապետություն»:

Երևանի հայ-ռուսական համաձայնագիրը բաղկացած էր ութ հոդվածից: Ըստ այդ համաձայնագրի.

«1.- Հայաստանը յայտարարում է անկախ



սոցիալիստական խորհրդային հանրապետություն:

2.-Մինչև Հայաստանի խորհուրդների համագումարի հրաւիրումը կազմում է ժամանակաւոր Ռազմա-Յեղափոխական Կոմիտէ, որին կանցնի բովանդակ իշխանութիւնը Հայաստանում:

3.- Ռուսաստանի խորհրդային կառավարութիւնը ընդունում է, որ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան հողերի մէջ անվիճելի կերպով մտնում են Երևանի նահանգը՝ իր բոլոր գաւառներով, Կարսի նահանգի մի մասը, որ զինուորական տեսակէտից կ'ապահովէ երկաթուղու տիրապետութիւնը՝ Ձաջուռ կայարանից Արաքս կայարանը, Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառը և Ղազախ գաւառի մի մասը օգոստոսի 10ի համաձայնութեան սահմաններում և Թիֆլիս նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետութեան տակ էին գտնւում մինչև 1920թ. սեպտ. 28:

4.-Հայկական բանակի հրամանատարական կազմը չի ենթարկւում պատասխանատուութեան այն գործերի համար, որ կատարել է բանակի շարքերում մինչև Հայաստանում խորհրդային իշխանութեան յայտարարումը:

5.- Դաշնակցութեան և ուրիշ սոցիալիստական կուսակցութիւնների (Ս.Յ., Ս.Դ.) անդամները ոչ մի հալածանքի չպիտի ենթարկուեն կուսակցութեան պատկանելու և Կոմունիստական Կուսակցութեան դէմ մղուած կռիւներին մասնակցելու ու Խորհրդային Հայաստանի յայտարարութիւնից առաջ կատարած գործերի համար:

6.- Ռազմա-Յեղափոխական Կոմիտէի մէջ մտնում են հինգ անդամներ՝ Կոմունիստական Կուսակցութեան կողմից նշանակուած, և երկու անդամ ձախ դաշնակցականների խմբակից՝ համաձայնելով Կոմունիստական Կուսակցութեան

հետ:

7.- Ռուսաստանի խորհրդային կառավարությունը միջոցներ է ձեռք առնում անմիջապէս կենտրոնացնելու Հայաստանի Սոցիալիստական Խորհրդ. Հանրապետութեան պաշտպանութեան համար անհրաժեշտ զինուորական ուժեր:

8.- Սոյն համաձայնագիրը ստորագրելուց յետոյ Հայաստանի Հանրապետութեան կառավարությունը քաշւում է իշխանութիւնից: Իշխանութիւնը ժամանակաւոր կերպով, մինչև Յեղափոխական Կոմիտէի գալը անցնում է զորահրամանատարութեան, որի գլուխ է կանգնում Դրօն, Ռ.Ս.Ֆ.Ս.Հ. կողմից Հայաստանի զորահրամանատարութեան կին կոմիսար է նշանակւում ընկ. Սիլինը»[2]:

Համաձայնագիրը ստորագրվել է ՌԽՖՍՀ ներկայացուցիչ Բ. Լեգրանի և Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչներ Դրոյի ու Համբարձում Տերտերյանի կողմից:

Ս. Վրացյանի վկայությամբ՝ Երևանի համաձայնագիրը կնքվեց դեկտեմբերի 2-ին՝ գիշերվա ժամը 12:00-ին, որից ութ ժամ անց ստորագրվեց մեկ այլ փաստաթուղթ, որը մինչ օրս էլ մի շարք շահարկումների տեղիք է տալիս, հատկապես ՀՅԴ-ի կամ Առաջին հանրապետության դեմ քարոզչության շրջանակներում. խոսքը Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին է: Այս պայմանագիրը, որը բավականին ծանր պայմաններ էր պարտադրում Հայաստանին, իրականում իրավական ուժ ունենալ չէր կարող, և ՀՀ արդեն հրաժարական տված կառավարությունը շատ լավ գիտակցում էր դա: Այդ մասին վկայում է նաև Սիմոն Վրացյանը. «….Ձևականօրէն մենք ամէն իրաւունք և հնարաւորութիւն ունէինք խուսափելու և այդ անախորժ պարտականութիւնը ձգելու բոլշևիկներին: Մեր կողմից այդ կը լինէր ճարպիկ մի խաղ, որ ծանր դրութեան մէջ պիտի դնէր հայ բոլշևիկներին…. Դրանով մենք անհատապէս կամ կուսակցականօրէն թերևս ազատ կը լինէինք հակառակորդների ամբաստանութիւններից, եթէ ի հարկէ, այս անգամ էլ մեզ չամբաստանէին, թէ քաղաքացիական քաջութիւն չունեցանք պատասխանատուութիւն ստանձնելու և դաշնագիրը չստորագրելով՝ նոր աղետների պատճառ եղանք,- բայց ազգային տեսակէտով Ալեքսանդրապոլի դաշնագիրը պատմական անհրաժեշտութիւն էր»[3]:

Հաշվի առնելով, որ Ալեքսանդրապոլի դաշնագիրը կնքման պահից իսկ առոչինչ էր, և, ինչպես սպասվում էր, խորհրդային կառավարությունն էլ փաստորեն հրաժարվեց դրանից, կարող ենք ասել, որ դա մարտավարական քայլ էր, մինչև Հայհեղկոմի ժամանումը ժամանակ շահելու համար էր, հետևաբար Ալեքսանդրապոլի՝ մեզ համար որևէ պարտավորություն չնախատեսող պայմանագրի փոխարեն ճիշտ կլինի զբաղվել Մոսկվայի և Կարսի պայմանագրերի իրավա-քաղաքական քննարկումներով, որովհետև ի սկզբանե



Բոլշևիկյան կարմիր բանակը Երևանի Սուրբ Նիկոլայի մայր փաճարի մոտ, 1920 թ. դեկտեմբերի 2-ին

անվավեր այդ պայմանագրերը այսօր փաստացի իրենց ազդեցությունն են ունենում Հայաստանի տարածքային, տնտեսական դրության վրա:

Երևանի համաձայնագրի ստորագրումից անմիջապես հետո Ս. Վրացյանի կառավարությունը հրաժարվեց իշխանությունից և խաղաղ ճանապարհով այն փոխանցեց բոլշևիկներին:

Դեկտեմբերի 4-ին՝ Հայաստան ժամանելուց հետո, Հայհեղկոմը սկսեց հերթով խախտել Դրո-Լեգրան համաձայնագրի կետերը. «Կասեանը և Նուրիջանեանը բուռն վէճի են բռնւում Լեգրանի հետ, որ դաշնակների ներկայացուցիչներին իշխանութեան մէջ էր առել ու նրանց հետ համաձայնութիւն կնքելով՝ պատճառ էր դարձել իշխանութեան խաղաղ, առանց կռուի փոխանցման: Կասեանն ու Նուրիջանեանը արհամարհում են համաձայնագիրը, մերժում են տեսակցել տապալուած իշխանութեան ներկայացուցիչների հետ և նրանց հեռացնում են Յեղկոմի կազմից»[4]:

Ուշագրավ մի դիտարկում անենք կառավարության կազմում դաշնակցականներին ընդգրկելու Բ. Լեգրանի որոշման նկատմամբ բոլշևիկների բացասական վերաբերմունքի վերաբերյալ: Պատճառը ատելությունն էր Դաշնակցության նկատմամբ, զարմանալիորեն Դաշնակցությունը հավասարապես ատելի էր թե՛ թուրքերի և թե՛ բոլշևիկների համար.«Եվ թուրքերի համար, և՛ բոլշևիկների համար,- գրում է ռուս պատմաբան Ա. Իգոլկինը,- «դաշնակ» բառը հնչում էր որպես սարսափելի, մահացու թշնամու հոմանիշ: Թուրքերի համար դա հասկանալի էր, այլ կերպ չէր կարող լինել»[5]:

Սկսվեցին հալածանքները բոլոր նրանց նկատմամբ, ովքեր բոլշևիկ չէին, դեկտեմբերի 6-ին կազմվեց ու գործի անցավ Չեկան, և սկսվեցին ձերբակալությունները: Հաջորդաբար ձերբակալվեցին նախկին վարչապետ Հ. Օհանջանյանը,

նախկին նախարար Ռ. Չիլինգարյանը, Երևանի քաղաքային խորհրդի անդամ Ա. Աստվածատրյանը, խմբապետ Համազասպը, Հայաստանի խորհրդարանի մի շարք անդամներ.«Դեկտեմբերի վերջերը արձանագրութեան ենթարկուեցին հայկական բանակի բոլոր սպաները, և 70 ընտիր զինուորականներ անմիջապէս աքսորուեցին Բագու»[6]:

Հայհեղկոմի համար անընդունելի էր Դրոյի ներկայությունը Երևանում, ով ժողովրդի շրջանում ունեցած իր հեղինակության շնորհիվ կաշկանդող գործիչ էր Հեղկոմի համար: 1921թ. հունվարի 10-ին Դրոն իր զինակիցների հետ աքսորվեց Ռուսաստան: «Բաքուում, Դրոյի անունը օգտագործելով, իբրև թէ նրա և 11-րդ բանակի հրամանատարութեան կողմից մի պատգամաւորութիւն է գնում Գորիս և պահանջում է Նժդեհից ընդունել խորհրդային կարգերը և զէնքերը վայր դնել: Յեղկոմը Երևանում յայտարարում է, թէ Դրոն որոշ ժամանակ Մոսկուա պիտի մնայ՝ «քաղաքագիտական դասընթաց անցնելու համար»: Իրականութեան մէջ, Հայաստանի Չեկայի պահանջով աքսորուել էր Դրոն: Պարզ էր, որ Մոսկուան էլ գիտէր Հայաստանի դէպքերի մասին և առարկութիւն չունէր»[7]: Դրոյին հեռացնելուց հետո Ավիսն ու Աթարբեկյանը սկսեցին սանձարձակ վայրագությունները բնակչության և բանակի սպայակազմի նկատմամբ, ավելի քան 1500 սպա ձմռան ցրտին ոտաբոբիկ աքսորվեց Ռյազանի համակենտրոնացման ճամբարներ: Հունվարի 24-ին աքսորված սպաների թվում էին սպարապետ Թ. Նազարբեկյանը, զորավարներ Մ. Սիլիկյանը, Հ. Հախվերդյանը, Ղամազյանը, Շելկովնիկյանը և ուրիշներ: Բանտարկվեցին Լ. Շանթը, Ն. Աղբալյանը, Հ. Քաջազնունին, Ն. Ղորղանյանը և մտավորական ու ռազմական մի շարք այլ գործիչներ:

«1921 թ. հունվարին Դրոյին և հին սպաներին աքսորելուց զատ՝ Ադրբեջանին և քեմալականներին դուր գալու համար Հայհեղկոմի անդամ և միաժամանակ Հայաստանի արդարադատության կոմիսար է նշանակվում Քեմալի գործակալ Սուլեյման Նուրին՝ այդ պաշտոնում փոխարինելով Ս. Բաղդասյանին»[8]:

Դրան զուգահեռ՝ երկրում իրականացվում էր, այսպես կոչված, «ռազմական կոմունիզմի» քաղաքականություն, որի հետևանքով «Երևանում և ամբողջ երկրում կատարւում էին անկանոն և անհաշիւ բռնագրաւումներ: Գրաւում էին ամէն ինչ- բնակարան, կարասիներ, հագուստ, ուտելիք….

Ժողովուրդը Ռուսաստանից էր սպասում օգնութիւն, այժմ իրենից էր խլում հացի վերջին պատառը և ուղարկում Ռուսաստան: Հայաստանից բեռնակիր ինքնաշարժերով «ընկեր Լենինին» կամ «կարմիր բանակին» նուէր էր ուղարկում պետական պահեստների և ժողովրդից բռնագրաւուած պաշարը- սպիտակ ալիւր, խտացուած կաթ, կակաո, շաքար, կօշիկի կաշի, հագուստեղէն և այլն»[9]:

Կասյան, Նուրիջանյան, Աթարբեկյան. Հայհեղկոմի ղեկավար կազմը

Կասյան-Նուրիջանյան-Աթարբեկյան եռյակի սանձարձակ բռնությունների և թալանից ոչնչով չտարբերվող բռնագրավումների հետևանքով ծնվեց Փետրվարյան ապստամբությունը, որը, սակայն, քննարկման առանձին թեմա է:

Խորհրդայնացման դասերը

Հայաստանի Հանրապետության անկման գլխավոր պատճառը արտաքին ուժերն էին՝ բոլշևիկյան Ռուսաստանը և քեմալական Թուրքիան: 1920 թ. գարնանը մութ ամպեր կախվեցին հանրապետության գլխին: Հարևան Ադրբեջանի խորհրդայնացումից հետո հերթը հասավ Հայաստանին: Միաժամանակ տեղի ունեցավ քեմալա-բոլշևիկյան ռազմաքաղաքական մերձեցում, և կնքվեց դաշինք, որի հետևանքով աշխարհի մի քանի տասնյակ պետությունների կողմից իրավապես ու փաստացի ճանաչված Հայաստանի Հանրապետությունը դարձավ այդ գործարքի զոհը: Չենք կարող չասել, որ հայ-թուրքական պատերազմում կրած ռազմական պարտության հետևանքով Հայաստանը կորցրեց իր անկախությունը, աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում հայտնված Հայաստանի Հանրապետության համար թիկունքին հասցված դաշույնի հարված էին հայ բոլշևիկների հակապետական գործունեությունը, Խորհրդային Ռուսաստանի հետ ՀՀ կառավարության բանակցություններն ամեն գնով տապալելու ուղղությամբ կատարված

Խորհրդային կարմիր բանակի ներխուժումը Երևան, 1920 նոյեմբեր

քայլերը, Կարսի ճակատում դասալքության քարոզը և այլն: Փոխանակ ծանր պայմաններում սատար կանգնելու Հայաստանի Հանրապետությանը՝ հայ բոլշևիկները ամեն ինչ արեցին այն կործանելու համար, ինչի հետևանքով հանրապետության տարածքները ծվատվեցին: Դրանք հետագայում պայմանագրային-իրավական ձևակերպում ստացան Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերում: 1920 թ. Հայաստանի Հանրապետության իրավասության տակ գտնվող շուրջ 70 հազար քառ. կմ տարածքից Խորհրդային Հայաստանին թողնվեց մոտ 30 հազար քառ. կմ, մնացած մասը, Խորհրդային Ռուսաստանի համաձայնությամբ, հանձնվեց հիմնականում Թուրքիային ու Ադրբեջանին:

Եթե չլիներ Հայաստանի առաջին հանրապետությունը, չէր լինի ո՛չ Խորհրդային Հայաստանը, ո՛չ էլ ներկայիս Հայաստանի Հանրապետությունը:

Ցավոք սրտի, այսօր ՀՀ-ն կանգնած է գրեթե նույն մարտահրավերների առաջ, ինչ Առաջին հանրապետությունը, մի տարբերությամբ՝ Առաջին հանրապետության ղեկավարությունը կոիվ տվեց ամեն թիզ հողի համար և իշխանությունը զիջեց գոնե ՀՀ 70 հազ. քառ. կմ տարածքը պահպանելու և Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի դիմում-ուղերձի ու Գ. Օրջոնիկիձեի հայտարարության համաձայն՝ Ղարաբաղը, Նախիջևանն ու Զանգեզուրը Հայաստանին միավորելու հույսով, մինչդեռ այսօր ականատես ենք լինում միանգամայն հակառակ պատկերին, երբ Հայաստանի կառավարությունը հեշտությամբ զիջեց Արցախը՝ Մեղրիի (Զանգեզուրի) ռազմավարական ուղղությամբ ճանապարհ տալով Ադրբեջանին և կամա թե ակամա նպաստելով Հայաստանի համար չափազանց վտանգավոր պանթյուրքիզմի իրագործման առաջին փուլին:

Առաջին հանրապետության բյուրո-կառավարությունը՝ Հ. Օհանջանյանի գլխավորությամբ, պատերազմում Հայաստանի պարտությունից հետո հրաժարական ներկայացրեց՝ հաջորդ կառավարության համար բանակցությունների նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով, մինչդեռ Հայաստանի ներկայիս կառավարությունը երկիրը պարտության տանելուց և կապիտուլյացիոն (անձնատվության) համաձայնագիր ստորագրելուց հետո չի էլ մտածում հրաժարականի մասին, ինչը կարող է ոչ միայն վտանգել Հայաստանի՝ որպես անկախ պետության գոյությունը, այլ նաև պատճառ դառնալ հետագա տարածքային և մարդկային կորուստների: Սպասվող աղետից խուսափելու համար անհրաժեշտ է, որ փոխվի բանակցությունների ներկայացողը, և ստեղծվի ներազգային համերաշխության, հանդուրժողականության մթնոլորտ: Հարկ է նշել, որ այս իրավիճակում չափազանց վտանգավոր են հակառուսական տրամադրությունները, որոնք կարող են հանգեցնել մեր հաշվին ռուս-թուրքական մեկ այլ գործարքի, որը կարող է վերջնական և ջախջախիչ հարված հասցնել հայ ժողովրդին: ■

Օգտագործված Աղբյուրներ

Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 50:

Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի և թրքական սալի միջև, Պէյրութ, 1953, էջ 129-130:

Նույն տեղում, էջ 133-134:

https://digilib.aua.am.

Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 126:

Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 143:

https://digilib.aua.am.

Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 126:

Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 144:

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

ա) Գրականություն

1.Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010:

2.Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի և թրքական սալի արանքում, Պէյրութ, 1953:

բ) Համացանցային նյութեր

https://digilib.aua.am

ՀՅ Դաշնակցութիւնը եւ Պարսկաստանի Սահմանադրական շարժումը (1-ին մաս)

Դերենիկ Մելիքեան
«Ալիք» օրաթերթի գլխաւոր խմբագիր

20-րդ դարասկզբի Կովկասի յեղափոխական և մտաւոր առաջընթացի մթնոլորտը, Իրանում՝ հայ հասարակայնութեան կրթա-դաստիարակչական ու մշակութային ամուր հիմքը և ռազմավարական նշանակութեամբ կարևոր դիրք զբաղեցնող Ատրպատականում՝ հայ քաղաքական կուսակցութիւնների յեղափոխական գործունէութիւնը, պարզորոշ է դարձնում կովկասահայութեան ներկայութիւնն ու զօրաւոր դերակատարութիւնը՝ Իրանի Սահմանադրական յեղափոխութեան մէջ: Սակայն, նրանով հանդերձ, որ կովկասահայերը Սահմանադրական շարժման մէջ առաջատար դիրք էին գրաւում, բայց փաստ է նաև, որ միմիայն իրանահայ համայնքում առկայ երկսեռ դպրոցներով, եկեղեցիներով, ընթերցարան-գրադարաններով, մամուլով և նրա հասարակական ու քաղաքական կազմակերպութիւններով էր, որ հնարաւոր դարձաւ վերոգրեալ դիրքի ապահովումն ու քաղաքական գործունէութիւնը[1]:

Յատկանշելի է, որ 1908 թ.-ի Ստոլիպինեան բռնութիւնները գործնապէս անհնարին էին դարձրել Կովկասում քաղաքական գործունէութիւնը, ուստի հայ քաղաքական գործիչները պայքարի մի այլ ճակատում՝ Իրանում շարունակեցին իրենց յեղափոխական գործունէութիւնը: Սրան պէտք է գումարել նաև նոյն 1908թ.-ի Երիտթուրքերի յեղաշրջումը՝ վերականգնելու նպատակով 1876 թ.-ի Օսմանական սահմանադրութիւնը, որով հնարաւորութիւն էր ստեղծւում հայ ազգային երկու ուժերի՝ Հնչակեան և Դաշնակցութիւն կուսակցութիւնների համար Օսմանական կայսրութիւնից դուրս յեղափոխական գործունէութեան ծաւալման խնդրում: Արդիւնքում՝ երկու հայ ազգային կուսակցութիւնները Օսմանական նոր իշխանութեան հանդէպ ռազմավարական նորովի մօտեցումներ որդեգրելով՝ դադարեցրին զինված ապստամբութիւնը Թուրքիայում[2]:

Անշուշտ, գոյութիւն են ունեցել հիմնարար պատճառներ, թէ ինչու սոյն երկու կուսակցութիւնները, և մասնաւորապէս Դաշնակցութիւնը, 1907-ին միացան Իրանի Սահմանադրական յեղափոխութեանը և իրենց աջակցութիւնը ցուցաբերեցին այդ շարժման տարբեր փուլերում: Պատճառներից թարկելի են հետևեալները.-

« ա - Օսմանցիների ոտնձգութիւնը Իրան և *օսմանցի զինուորների ներխուժումը՝ Իրանի Հիւս.-արևմտեան շրջան, որն սկսել էր դեռևս 1905 թ.-ից, և որը խիստ բացասական ազդեցութիւն էր թողել Իրանա-օսմանական սահմանամերձ շրջաններում բնակւող հայերի և իրանցիների վրայ.*

բ - Հայկական երկու կուսակցութիւնների մօտ արմատացած այն համոզումը, ըստ որի՝ յեղափոխութեանը մասնակցելը՝ պայքար էր Ռուսաստանի տիրակալութեան և շահագործման դէմ, որը նպատակ էր հետապնդում խորտակել Սահմանադրական շարժումը.

գ - ՀՅԴ օրգան «Դրօշակ»-ի արգելափակումը՝ 1906 թ.–ի յուլիսին, Իրանի նախայեղափոխական շրջանի իշխանութիւնների կողմից, որն ինքնին պատճառ հանդիսացաւ կառավարութեան նկատմամբ կասկածանքի առաջացման և հետագայում՝ նոյն կառավարութեան հանդէպ ընդդիմադիր կեցուածք որդեգրելու:

դ – Սահմանադրական կարգերի նկատմամբ հասարակական խաւերի մօտ դրական մթնոլորտի ձևաւորումը, դրան զուգահեռ Թաւրիզի յեղափոխական իրադարձութիւնների առկայութիւնը ապացուցեցին Իրանում խմորւող քաղաքական նոր իրողութիւնների հեռանկարայնութիւնը, որոնք էլ հիմք հանդիսացան, որպէսզի կուսակցութիւնները վերատեսութեան ենթարկեն իրենց մինչ այդ որդեգրած՝ չէզոք ու վերապահ կեցուածքները:

ե – Եւ վերջապէս պատճառ էր թէ՛ ՀՅԴ-ի և թէ՛ հնչակեանների համար 1907թ.-ի ռուս-անգլիական ստրկացուցիչ և Իրանին երկու ազդեցութեան և շահագործման գօտիների վերածելու հանգամանքը, որն ըստ երկու հայկական կուսակցութիւնների համոզման՝ միտում էր Սահմանադրական յեղափոխութեան խորտակումն ու Իրանի անկախութեան ոտնահարումը»[3]:

Այսպիսով ակնյայտ էր դառնում, որ 1907 թի երկրորդ կէսից իւրատեսակ քաղաքական իրավիճակ էր ստեղծել պարսկահայերի համար:

Ուշագրաւ է այն հանգամանքը, որ Շահը յեղափոխական շարժումներին հայերի և մասնաւորապէս Եփրեմի մասնակցութիւնը ձախողելու համար դիմել է նոյնիսկ սադրիչ քայլերի: Շահը իր ռազմական կցորդ հայանուն Արշակ խան Գորոյեանի հետ Կովկաս(Բաքու) այցերից մէկի ընթացքում, ծրագրել է հանդիպում հայկական

կուսակցությունների ղեկավարների ինչպես և՝ ռուսների հետ, Սահմանադրական շարժմանը իբր հայերի չէզոքությունը ապահովելու մտոք, սակայն Բաքում Իրանի հիպատոսը, հայ ղեկավարներին նախազգուշացնում է Շահի և Արշակ խանի դաւադրության մասին: Արդիւնքում հայ քաղաքական ղեկավարությունը զգօնությամբ է կողմնորոշում և խոյս տալիս չէզոքություն որդեգրելուց[4]:

Դաշնակցությունը, մասնաւորապէս, համոզած էր, որ Ռուսաստանի պետությունը մտադիր է կասեցնելու Սահմանադրական շարժումը Իրանում: Անդրադառնալով 1908–ի Շահի թեհրանեան յեղաշրջմանը ու կոզակների բրիգադի օգտագործմամբ Մեջլիսի ռմբակոծմանը, *«Դրօշակ»*-ը պախարակում է Ռուսաստանին, գրելով, որ. *«Դարձեալ ցարական իշխանությունը իր ինքնահաւան մշտական վայրագությամբ Իրանում տխուր և արիւնալի իրադարձության մասնակիցը լինելով՝ ազատասիրության ջահը յանգչեցրեց»:* Նոյն *«Դրօշակ»*-ի խմբագրականը յատկապէս գնդապետ Լիախովին ու նոյնինքը Նիկոլայ Երկրորդին բուռն յարձակումների թիրախ էր դարձնում, քանզի ըստ նոյն թերթի՝ վերջիններս Սուլթան Աբդուլ Համիդի նման վատ համբաւ էին վաստակել:

«Դրօշակ»-ը նոյնպէս նախազգուշացնում էր Իրանին Ռուսաստանի յետին նպատակների մասին, այն է՝ Իրանի հիւսիսային շրջանի բռնակցումը, որն էլ աւելի իրական հեռանկարի տեսք ընդունեց, երբ 1909-ի ապրիլին ռուսական բանակը Թաւրիզ ներխուժեց:

Դաշնակցության նման կողմնորոշումը լոկ կուսակցությանը կամ հայությանը յատուկ չէր, այլև նոյն տեսակէտին է եղել ռուս յեղափոխական գործիչ նոյն ինքը Լենինը, երբ կարծիք էր յայտնում թէ *«Իրականության մէջ Ռուսաստանը դիմում է ամէն միջոցի կասեցնելու Իրանի յեղափոխական շարժումը: Այն, որ Ռուսաստանի քաղաքականությանը մաս է կազմում Ազարբէջանի գրաւումը, ոչ մի կասկած չի յարուցում»*[5]:

Ահաւասիկ, ՀՅԴ 1907թ.-ի 4-րդ Ընդհանուր ժողովը վճռում է կուսակցության դիրքորոշումը՝ Իրանի յեղափոխությանը մասնակցելու համար: Մինչ այդ, սակայն պարզ էր մի իրողություն, որ պարսկահայ դաշնակցականների մօտ ակներև էր երկուությունը՝ տեսակէտների միջև[6]: Այն դաշնակցականները, որոնք հակած չէին իրանական շարժմանը մասնակցելու տեսակէտին, հետևեալ հիմնաւորումներն էին դրել հէնց *«Վրէժ»*-ի շրջանային ժողովին, որը տեղի է ունենում Թաւրիզում, 1906 թի աշնանը: Այսպէս, ընդդիմախօսների կարծիքով՝ *«Պարսկական Սահմանադրական շարժմանը մենք չէինք կարող մասնակցել շատ հասկանալի պատճառներով: Հապրատ աղբիւրներից լսում էինք, որ թագաժառանգը և նրա մերձաւորները ուզում էին օրդուբաղցիների միջոցաւ ստեղծել հայ-թրքական կոտորած՝ դրանով ստիպելու անգլիական կոնսուլին՝ հեռացնելու շարժման պարագլուխներին և համոզելու նրան, որ այդ շարժումը քաղաքական բնոյթ չունի,*



ՀՅԴ Թաւրիզի «Վրէժ» կենտրոնական կոմիտէն

այլ լոկ Կովկասեան հայ-թրքական ընդհարման արձագանքն է: Մի թեթև առիթ բաւական կը լինէր այդ արիւնահեղության համար և մենք զոհ կարող էինք գնալ պրովակացիայի: Իբրև առանձին կուսակցություն՝ մենք չէինք կարող ասպարէզ գալ, որովհետև Դաշնակցությունը, պարսիկ մասսայի հասկացողությամբ, հասկացում է իսլամի թշնամի[7]: Այդ ուղղությամբ «Հաբլ-իլ-մաթինը» և Աղայևի օրգանը կատարել են իրենց դերը, և որովհետև այդ շարժումը ունէր միայն ազգայնական-կրօնական բնոյթ, մեր մասնակցությունը այդպիսի մի շարժման յեւրադիմական քայլ կը լինէր»[8]:

Իրանական շարժմանը մասնակցելուն հակած չէին մասնաւորապէս ՀՅԴ Թաւրիզի Կ.Կ.- ի անդամներ Յովսէփ Յովհաննիսեանը և Արմենակ Մկրտչեանը: Նրանք գտնում էին, որ այդ օրերին քաղաքական–տնտեսական պայմաններում Պարսկաստանում ծայր առած յեղափոխական շարժումը կանխահաս է ու չհիմնաւորուած, հետևապէս՝ դատապարտուած է վիժման: Ըստ նրանց Դաշնակցությունը որքան էլ ցանկանայ, չի կարող սրտաբաց ու անկեղծ միաբանություն կազմել թուրք[9] յեղափոխականների հետ և յոյս ունենալ, թէ նրանց հետ հնարաւոր կը լինի դժուարին կուի գնալ յեղափոխականին վայել անկեղծությամբ: Յ. Յովհաննիսեանը և Ա. Մկրտչեանը համոզած էին, որ ծանր պահերին թուրքերն անպայման հայերին միայնակ կը թողնեն և նրանք ամբողջ ծանրությունն ստիպած կը կրեն իրենց վտիտ ուսերի վրայ՝ անկանխատեսելի հետևանքներով: Մուսուլման ժողովրդի համեմատությամբ հայությունը Պարսկաստանում չնչին փոքրամասնություն է կազմում, ուստի հակաշահական պայքարին Դաշնակցության մասնակցության պատճառով անպայման կը վտանգի ողջ պարսկահայ ժողովուրդը, եթէ հակայեղափոխականները յաղթանակ տանեն[10]:

Ի վերջոյ, փոքրամասնականների կարծիքով *«Օսմանական, Ռուսական և Իրանական եռեակ ճակատներում յեղափոխական պայքար մղելը, սպառելու է Դաշնակցության կարողությունները»*[11]:

Շարժմանը չմասնակցելուն հակած ընդդիմախօսների մտավախությունը տեղին էր,

քանզի հետագային հայոց չէզոքութեան մասին հայոց թեմական առաջնորդի հաւաստիացումները միապետականներին, անշուշտ, յայտնի էին դարձել Թաւրիզի Սահմանադրական ղեկավարութեանը, ինչն էլ առաջ էր բերել նրա բացայայտ դժգոհութիւնը[12]: Աւելին, Սաթթար խանը 1908 թ. յուլիսի 20-ին յայտարարել էր, որ մտադիր է դիմելու վճռական գործողութիւնների, այն է՝ շարքից հանել բոլոր թնդանօթները և ուղղել հայկական թաղամասերի և բոլոր քրիստոնէական հիւպատոսութիւնների վրայ: Եթէ հայերը չմիանան յեղափոխական ուժերին, նրանց թաղերը կենթարկուեն սոսկալի ռմբակոծութեան,- սպառնացել էր նա: Նաև առկայ էին միապետականների սպառնալիքները, որոնք *«չնայած չէզոք մնալու մասին Ատրպատականի թեմական առաջնորդի և համայնքի միւս ղեկավարների հաւաստիացումներին ու երդումներին, Թաւրիզից դուրս արդէն լուրեր էին տարածուել, որ հայերը դաւաճանում են Շահին...»*[13]: Այս առնչութեամբ թէ օսմանական դեսպանութեան և թէ մասնաւորապէս տեղացի թրքախօսների կողմից շրջանառութեան մէջ էին դրուել հայերի դաւադրութեան մասին իրականութեանը չհամապատասխանող լուրեր, որոնք սակայն, հերքուել են Սահմանադրութեան շրջանի ազատախոհ մտաւորական և հետագայում ռուսների կողմից կախաղան բարձրացուած Սադեղ օլ Մոլքի միջոցով. աւելին, խիստ հրահանգ է իջեցուել Թաւրիզի, Ուրմիայի և Խոյի իշխանութիւններին, որպէսզի կանխուի հակահայ որևիցէ ոտնձգութիւն[14]:

Սակայն, աւելի զօրաւոր էր շարժմանը մասնակցելու տեսակէտը պաշտպանողների հիմնաւորումը, որոնց առաջնակարգ հովանաւորողներից էր նոյնինքն Եփրեմը: Վերջնիս համախոհները նոյն ժողովում մերժեցին փոքրամասնութեան դատողութիւնները, շեշտելով, որ պարսկական յեղափոխական շարժման յաղթանակն անխուսափելի է, դա վարակիչ ազդեցութիւն կունենայ Թուրքիայի և Ռուսաստանի վրայ, միաժամանակ կը բարձացնի հայ տարրի դերը Պարսկաստանում: Նրանք գտնում էին, որ պարսկահայ ժողովուրդը յեղափոխական գործին մասնակցելով, չպէտք վախենայ զոհաբերութիւնից:

Յատկանշելի է, որ ՀՅԴ Կովկասեան մարմինները ևս մի շարք ժողովներում զբաղուել էին Պարսկաստանի կնճիռով: Մասնակցելու կամ չմասնակցելու ծանրակշիռ և պատասխանատու խնդիրը դրուած էր Թիֆլիսում կայացած շրջանային ժողովում, որին մասնակցում էին Սիմոն Զաւարեանը, Բիւրոյի կողմից Հայր Աբրահամը (Աւետիք Սահակեան), Համօ Օհանջանեանը և Զաւախեանը: Խօսելով թուրք-պարսկական, հայ-պարսկական ընդհարումների և հայ- պարսիկ յարաբերութիւնների մասին, Հայր Աբրահամը իբրև եզրակացութիւն առաջադրում է վարիչ մարմնի տեսակէտը, ըստ որի. *«....Արել ենք մի շարք նախապատրաստական քայլեր ... Մէկ բան պարզ է. չենք կարող թողնել մեր ժողովուրդը անտէր, անզէն, անպաշտպան վիճակում ... »*[15]:

« Զաւարեան,- գրում է Մ. Վարանդեանը,- նոյնպէս յիշեցնելով, որ Բիւրօն կը սպասէ յատուկ նպատակով

Եփրեմ Դաւթեան (Եփրեմ խան)

Պարսկաստան ղրկուած ընկերոջ տեղեկագրին, և որ ազատական պարսիկները շարունակ կը դիմեն մեր ընկերներու խորհուրդներուն, պաշտպանեց հայ-պարսիկ յեղափոխական գործակցութեան թեզը, ըսելով.-«Եթէ մեծ բան էլ չկարենանք անել, գէթ կամրապնդենք մեր համերաշխութեան կապը պարսիկ յեղափոխական տարրերի հետ»»[16]:

Ի վերջոյ, Եփրեմի և նրա համախոհների տեսակէտն է, որ յաղթում է և որը հետագայում ձևակերպւում ու ամրագրւում է 1907թ.- ի փետրուարին, Վիեննայի ՀՅԴ Ընդհ. Ժողովում, իբրև գործադրելի որոշում, ըստ հետևեալի.-

«Նկատելով, որ պարսկական ներկայ շարժումը կարող է դառնալ ժողովրդական արթնացման բնոյթ ունեցող հասարակական խոշոր երևոյթ թէ՛ Պարսկաստանի, թէ՛ Արևելքի համար, և գտնելով դրա տարածուելն ու լայնանալը ցանկալի՝ թէ՛ համամարդկային, թէ՛ հայկական տեսակէտից, Ընդհանուր Ժողովը յանձնարարում է Պարսկաստանի դաշնակցական մարմիններին և անհատներին՝ բոլոր միջոցներով նպաստել այդ շարժման զարգացման, մտցնելով պարսկական արթնացման մէջ այն ազատական, ռամկավարական և աշխատաւորական ոգին, որ բխում է Դաշնակցութեան ծրագրից»[17]:

Ատրպատականում Սահմանադրական շարժումը սկսել է 1907 թականին: ՀՅ Դաշնակցութեան վարիչ մարմինը[18] (նկատի ունենալով այնտեղի հայ ժողովրդի ֆիզիկական գոյութեանը սպառնացող վտանգը, բոլոր հայաբնակ շրջաններում, նախօրօք ուղարկել էր զինուորական և քաղաքական կարող գործիչներ, տեղի վրայ կազմակերպելու համար ինքնապաշտպանութեան գործը[19]: Այսպէս, 1907-ի դեկտեմբերի վերջերին ՀՅԴ հիմնադիրներից Ռոստոմը (Ստ. Զօրեան)[20] պարսիկ յեղափոխականների հրաւէրով ժամանում է Թեհրան և որպէս ՀՅԴ լիազօր ներկայացուցիչ՝ բանակցութեան մէջ մտնում պարսիկ յեղափոխականների հետ: Ռոստոմը ևս ՀՅԴ շատ գործիչների նման հէնց սկզբից կողմնակից է եղել իրանական շարժմանը մասնակցելու տեսակէտին. ըստ նրա՝ Թուրքիայի հարևան պետութիւնները սահմանադրական կարգեր ունենալով՝ պիտի ազդէին նաև Թուրքիայի ռեժիմի վրայ: Յատկապէս, որ *«Համիդը օգտուելով Պարսկաստանի անիշխանական և անպաշտպան*

դրութենէն, կը մտադրէ շող մը տալ իր 30 տարեայ կորստաբեր և աղիողորմ թագաւորութեան, որ մահ կը հոտի, թոյլ Պարսկաստանէն հանելով այն անթիւ ու անհաշիւ կորուստները, որ այդ հէրիֆը հասցուց իր երկրի գլխին ...»[21]:

Պարսիկ յեղափոխականների հետ 1908թ.-ի յունուարին Ռոստոմը պարսկահայ դաշնակցական և հետագային՝ Մեջլիսի անդամ Յովսէփ Միրզայանի[22] ընկերակցութեամբ հինգ բանակցային նիստեր են գումարում, որոնց արդիւնքում կնքում է պայմանագիր, որի համաձայն՝ պարսիկ գործընկերները կը խոստանային.

1. Հայ ժողովրդի պաշտպանութեան ի խնդիր՝ ապահովել ՀՅԴ ուժերի փոխադրութիւնը Պարսկաստանի ներսում:
2. Դիւրացնել ՀՅԴ զէնքի ու զինամթերքի փոխադրութիւնը արտասահմանից Պարսկաստան:

Իսկ ՀՅԴ պատուիրակները կը խոստանային.

1.Դաշնակցութեան արևմտեան Բիւրօն կօգտագործի Պարսից դատի համար իր կապերը Եւրոպայի, մասնաւորապէս Ֆրանսիայի հայամէտ շրջանակների հետ[23]:

2. Հարկ եղած դէպքում՝ ՀՅ Դաշնակցութիւնը շարժմանը կը ցուցաբերի աջակցութիւն՝ ռազմական ու զինական ասպարէզներում [24]:

«Բանակցութիւնները տևում են վեց օր՝ մինչև 1908թ. յունուարի 4-ը,- գրում է Հ.Սիմոնեանը,- .... Վեցօրեայ բանակցութիւնների ամէն նիստից յետոյ Ռոստոմը և Միրզայեանը խորհրդակցում էին ուրիշ երեք ընկերների հետ, որոնք մինչև Ռոստոմի Թեհրան գալը Յովսէփի միջոցով հանդիպումներ էին ունեցել սահմանադրականների ներկայացուցիչների հետ, որոնք տեղական պայմաններին և պարսիկների հոգեբանութեանը լաւ ծանօթ էին: .... Բանակցութիւնների ընթացքում քննարկուեց հարցերի բաւական լայն շրջանակ.1) Շահի հետագայ դաւերի դէմ Սահմանադրական նորմալ զարգացման ապահովման ուղղութեամբ երկու կողմերի անելիքները, 2) Պարսկաստան ներխուժած թուրքական զօրքերին երկրի սահմաններից հեռացնելու խնդիրը, որի լուծման համար նախ ենթադրւում էր դիւանագիտական ճանապարհով թուլացնել թուրքերի դիրքերը, իսկ պատերազմի դէպքում՝ ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ անհրաժեշտ զինուորական ուժերի պատրաստման ուղղութեամբ, 3) Պարսկաստանի անկախութեանը սպառնացող 1907թ. անգլո-ռուսական համաձայնագրի դէմ միջոցառումները, 4) ՀՅ Դաշնակցութիւնը ինչպիսի աջակցութիւն կարող է ցոյց տալ սահմանադրականներին, 5) իրենք՝ պարսիկները ինչ օգնութիւն կամ դիւրութիւն կարող են ցոյց տալ Դաշնակցութեանը»[25]:

Պարսիկ սահմանադրականների ներկայացու-

Յովսէփ Միրզայեան

ցիչները խոստանում էին. 1) Յեղափոխութեան յաղթանակից յետոյ աւելի լայնացնել այն իրաւունքներն ու պարտականութիւնները, որ պարսկահայութիւնն ունէր իր ներքին, ազգային-մշակութային կեանքում, 2) Սալմաստի և շրջակայ վայրերի պետական հողամասերից (Խալիսէ) բաժիններ յատկացնել Օսմանեան կայսրութիւնից Պարսկաստան փախած հայ գաղթականներին և նպաստել նրանց բնակեցմանը, 3) ջերմ աջակցութիւն բերել զարկ տալու համերաշխ գործակցութեանը հայ և իսլամ տարրերի միջև թէ՛ Թուրքիայում և թէ՛ Կովկասում, 4) իրենց հաւատարիմներից մէկին ուղարկել Կ.Պոլիս, որպէսզի այնտեղ գտնուող պարսիկ յեղափոխականներին կապի Դաշնակցութեան տեղի անդամների հետ և նպաստի նրանց միջև համագործակցութեան հաստատմանը, 5) Պարսկաստանի ներսում ապահովել բոլոր պայմանները՝ Դաշնակցութեան զինուած ուժերի փոխադրութեան համար, 6) չխոչընդոտել արտասահմանից զէնքի ու զինամթերքի փոխադրմանը:

Իրենց հերթին, ՀՅ Դաշնակցութեան ներկայացուցիչները կուսակցութեան անունից յանձնառու դարձան. 1) Սահմանադրականների տրամադրութեան տակ ռազմական ղեկավարներ և հրահանգիչներ դնել, 2) Թուրքիայի հետ Պարսկաստանի պատերազմի դէպքում կուսակցութեան զինուորական ուժերով պարտիզանական կռիւներ մղել թուրքական բանակի թիկունքում, 3) Սահմանադրական Պարսկաստանի օգտին լայն քարոզչութիւն անել Եւրոպայում,[26]

4) ուժերը ներածին չափով նպաստել գլուխ բերելու Պարսկաստան – Բուլղարիա դաշինքն ընդհանուր թշնամու՝ Օսմանեան պետութեան դէմ, 5) ջանքեր գործադրել Պարսկաստանի կողմը գրաւելու Ֆրանսիական կառավարութեան համակրանքը, ինչպէս նաև այդ երկրի կառավարութիւնից ստանալու փոխառութիւն, 6) յեղափոխութեան նկատմամբ բացասաբար տրամադրուած Մելքոմ խանին և Արշակ խան Գորոյեանին մղել չէզոք դիրքի կամ, եթէ հնարաւոր է,

մօտեցնել Սահմանադրական շարժմանը, որի ջերմ ջատագովներից էր Պարսկաստանի ամենախոշոր հայ գործիչը՝ Յովհաննէս խան Մասեհեանը[27]:

***

Շահի դէմ ապստամբութեան դրօշ պարզած Թաւրիզում յեղափոխականների գլուխ էին կանգնած Սաթթար և Բաղեր խաները, որոնք հայ յեղափոխականների շնորհիւ և առաջնորդութեամբ թրծում էին պայքարի քուրայի մէջ: Սաթթար խանը գիտակ էր դաշնակցական կուռողների ներկայութեան կարևորութեանը իր կողքին, քանզի նրանք մեծ վաստակի ու փորձառութեան կրողն էին, որն յատուկ էր բոլոր այն յեղափոխականներին, որոնք Կովկասից եկել ու միացել էին սահմանադրականներին: Զորօրինակ՝ Քեռին (Կովկասից իր հետ բերած 25 ֆիդայիներով) ու Ռոստոմը սերտօրէն համագործակցում էին Սաթթար խանի հետ և Մարաղայի իշխանապետ Սամադ խան Շուջա օլ դոլէի դէմ Թաւրիզեան հակամարտութեանը ուղղակի դերակատարութիւն ունեցան: Կամ՝ 1908 թ.-ի աշնանից սկսեալ, Կովկասի դաշնակցականները Սաթթար խանի և Բաղեր խանի հրամանատարութեան տակ գտնուող ուժերի կողքին մինչև 1909թ.-ի գարնանը, երբ ռուս զինուորները մուտք էին գործում Թաւրիզ, մի քանի կռիւներում՝ Ալարում, Սուֆիանում, Մարանդում և հայաբնակ Մուժամբարում մասնակցութիւն ունեցան[28]:

Միւս կարևոր գաւառներից մէկում՝ Գիլանում (Ռաշտ), որը նաև սահմանակից էր Ատրպատականին, ապստամբութեան խմորումները ակներև դարձան, որտեղ ևս անտարբեր չէր նոյն շրջանի ՀՅ Դաշնակցութիւնը և նրա ամենաերևելի դէմքը՝ Եփրեմը[29]:

«.... Այսօր, աւելի քան երբևէ,- մէջբերում է պարսիկ մտաւորական-գրող Էմայիլ Ռայինը Եփրեմի նամակից գրած համախոհ ընկերներին,-պէտք է նախանձախնդրութիւնն ունենանք ակտիւանալու, պայքարի դաշտը ընդարձակ և յեղափոխական գործը Սրբազան է: Պէտք է ապացուցենք, որ յեղափոխական ոգով ենք տոգորուած... Անձնազոհութիւն և դարձեալ անձնազոհութիւն, սա այն իրողութիւնն է, որն ներկայ պայմաններում բոլոր ազդակներից առաւել անհրաժեշտ է ու արդիւնաւէտ ... Պահը շատ զգայուն է դարձել, իսկ Դաշնակցութիւն կուսակցութիւնը իր վրայ է կրում պատասխանատուութիւն. մենք որևէ սահման չենք ճանաչում, ուր որ յեղափոխական գործ պահանջի, մենք այնտեղ ենք լինելու...»[30]:

« .... Ու սկսան հաւաքոյթները: 1908-ի յուլիսն էր: Այդ օրերէն արդէն Պարսկաստանի ապագայ դիկտատորը կը ցուցանէր կազմակերպական իր տաղանդը: Կազմեց հապշտապ հայ-պարսիկ խառն կոմիտէ[31] և սկիզբ դրաւ Գիլանի շարժման: Ապա անցաւ Ռաշտ՝ խորհրդակցելու իր դաշնակցական ընկերներուն հետ, խրախուսեց, համոզեց, ծրագրեր յօրինեց...: Պարսկաստանի յեղափոխութիւնը ունեցաւ իր առաջին հերոսը՝ յանձին Սաթթար խանի՝ սպասելով, որ յայտնի պատմական վայրկեանին աւելի

Ռուս գնդապետ Լյախով

համապատասխան, ազատութեան ու արդարութեան մարմնացում՝ բուն գաղափարական իգիթը, պարսից Գարիբալդին, ի դէմս դաշնակցական Եփրեմի...»[32]:

Ինչպէս նախորդ էջերում ասուեց, թագաւորականները գրաւել էին Թեհրանը, երբ ռուս Լիախովի ուժերի գլխաւորութեամբ 1908-թ.ի յունիսի 23-ին ռմբակոծուեց սահմանադրականների ու յեղափոխականների կիզակէտը համարուող խորհրդարանը՝ Մեջլիսը: Ի հետևանս դրա, նոր խմորումներ են զարգանում երկրի գաւառներում և ծայրամասերում, ի մասնաւորի Ատրպատականի շրջանում և նրա կենտրոն Թաւրիզում, ծայր են առնում ապստամբական խմորումները, որոնք ղեկավարուում էին Սաթթար խանի և Բաղեր խանի միջոցով, անշուշտ՝ ՀՅ Դաշնակցութեան գործիչների խորհուրդներով:

1908-ի յուլիսին, Թեհրանում՝ Մոհամմադ Ալի Շահի յեղաշրջումից յետոյ, Թաւրիզի դիմադրական շարժումը մեծ խթան հանդիսացաւ Ատրպատականում դաշնակցական խմբերի ներգրաւմանն ու ակտիւութեանը: Դեռևս դրանից ուղիղ մէկ տարի առաջ, 1907–ի յուլիսին, Սալմաստի դաշնակցական միաւորները ցորենով էին ապահովում յեղափոխականներին: Սալմաստի Դաշնակցութեան կառոյցի ղեկավարն էր Սամսոնը (Ստեփան Թադէոսեան), որն որպէս զինագործ 1897-ին Կովկասից Ատրպատական էր փոխադրուել, որտեղ էլ մեծ աւանդ ունեցաւ իրանցիների և հայերի միջև բարեկամական յարաբերութիւնների կայացման գործում, երաշխաւորելով նրանց միջև անհրաժեշտ համերաշխութիւնն ու միասնականութիւնը՝ յօգուտ Սահմանադրական յեղափոխութեան: Ի հեճուկս Մակուի Սարդարի[33] սպառնալիքների, որոնցով նա պահանջում էր, որպէսզի հայերը հեռու մնան Սահմանադրական շարժումից, Սալմաստի կոմիտէն Սամսոնի գլխաւորութեամբ 1908 –ի հոկտեմբերին որոշում կայացրեց երկրի ազատականներին աջակցութիւն ցուցաբերել, միաժամանակ ապահովելով դաշնակցական ռազմիկների ու հայ գիւղացիութեան կարիքները՝ շարժմանը նախապատրաստելու համար[34]:

« .... Մինչ Թեհրանի ապստամբութիւնն

տապալում էր, միւս քաղաքներում նոր շարժումներ էին առաջանում: Թաւրիզում՝ Սաթթար խանի և Բաղեր խանի, Գիլանում՝ հայ Եփրեմ խանի և Սպահանում՝ բախտիարների... և նոյնիսկ Բաքուում՝ հայ և վրաց սոցիալիստ-նացիոնալիստների հովանաւորութեամբ... նպատակադրուեց վերագրաւել մայրաքաղաք Թեհրանը:

....Թաւրիզեցիների դիմադրութիւնը՝ դիկտատորայի դէմ, ինչպէս և՝ ռուս կոզակների կողմից քաղաքը շրջափակելու հանգամանքը, ստեղծել էր մի այնպիսի իրավիճակ, որը Սահմանադրութեան պատմագիրների բնութագրմամբ՝ «Սովեալները ներխուժում էին այգիներ, բոյսերով սնուելու...»: Նոյն օրերին էլ մի հայ «Մուջահիդ» (ռազմիկ) թուրքերէնով թաւրիզցիներին քաջալերում էր.«Ժողովո՛րդ, սոված է՛ք, բայց և՝ ազատ...»»[35]:

*«....Մեծ էր պարսիկ շարքերուն մէջ վստահութիւնն ու յարգանքը դէպի հայութիւնն ու անոր մարտական կազմակերպութիւնը: Թաւրիզի կուի տաք օրերուն հասաւ Օսմանեան յեղափոխութեան աւետաբեր լուրը: Նոր խրախոյս պարսկական շարժման համար: Յոյսերը թևաւորուեցան, տրամադրութիւնները բարձրացան նաև մեր շարքերուն մէջ: Ատրպատականի մեր մարմինները միշտ աւելի կը թեքէին դէպի գործուն մասնակցութիւն: Նմանապէս՝ կովկասեան մարմինները, Շրջ. Ժողովը, Արևելեան Բիւրօն: Կարգախօսն էր՝ **անպաշտօն կերպով նպաստել շարժման, ձգտելով տալ անոր ռազմավարական բնաւորութիւն»[36]:***

Նոյն ժամանակաշրջանում (1908թ.-ի յուլիս-օգոստոս) Թեհրանից Թաւրիզ է անցնում Ռոստոմը, որն անմիջականօրէն մասնակցում է ապստամբական երկարատև գործողութիւններին, կողք-կողքի Սաթթար խանի, թէ՛ իր խորհուրդներով, և թէ՛ պայթուցիկների ու զինամթերքի հայթայթումով:

Ռոստոմի և Սաթթար խանի գլխաւորութեամբ կայացած մի շարք հայ-պարսկական խորհրդակցութիւնների արդիւնքում կազմակերպւում են ըմբոստ խառնիճաղանճ զանգուածները, ներդաշնակութիւն է մտցուում մինչ այդ ինքնագլուխ գործող խմբապետ-հրամանատարների շարքերում: Այս հարցում իրենց կարևոր աւանդը բերեցին ՀՅ Դաշնակցութեան Արևելեան Բիւրոյի կողմից Թաւրիզ եկած գործիչները՝ Վահապը (Վռամեան) և Սեպուհը, որոնք մարտական կարգի բերեցին կուող անկազմակերպ պարսիկ զանգուածներին: *«....Այդ կուսակցութեան գործիչները սահմանադրականներին աջակցելու համար էին Թաւրիզ և Թեհրան եկել, որոնց ղեկավարների մէջ հոչակ էին վայելում Արշակ Վռամեանն և հայդուկապետ Սեպուհը»[37]:*

Սահմանադրական կռիւներին (1908-1912 թթ.), քառամեայ շրջանում Ատրպատականում մասնակցել են հետևեալ խմբերը.

Քեռու խումբը, կազմուած կռիւներում թրծուած շուրջ 40 ականաւոր մարտիկներից, **Մշեցի խմբապետ Սմբատի** շուրջ 3 տասնեակ մարտիկներից կազմուած խումբը, **Տիգրան Ստեփանեանի** խումբը, **Սամսոնի**

Բաղեր խան և Սաթթար խան

(Թադէոսեան) շուրջ 3 տասնեակ սալմաստեցի մարտիկների խումբը, **Մկրտիչ Աղամալեանի** (Սարհադ) խումբը՝ 50 ձիաւոր և հետևակ մարտիկներով, **Դումանի խումբը** և **Ս.Դ. Հնչակեան խումբը**, 21 հոգի, խմբապետութեամբ Պետրոս Մելիք Անդրէասեանի[38]:

Թաւրիզի (Վրէժ) շրջանի ՀՅ Դաշնակցութեան Կենտրոնական կոմիտէն ունենալով Արևելեան Բիւրոյի համաձայնութիւնը՝ հաղորդեց նաև Թեհրանի, Ռաշտի, Սալմաստի և այլ վայրերի կոմիտէներին, որ վերջիններս էլ յայտարարեն իրենց շրջանների ենթակոմիտէներին, որ պարսիկ ըմբոստների հետ համերաշխաբար արձագանգ տան Թաւրիզի կուին:

Մէկ կողմից՝ Թաւրիզում պայթուցիկների և ռումբերի *«սիրահար ու մասնագէտ»* Ռոստոմի ցուցմունքներով մի շարք գործողութիւններ մեծ իրարանցումների մատնեցին հակայեղափոխական ուժերին՝ Էյն օլ դոլէի, Ռահիմ խանի, Սամի խանի, Ջարղամի, Մակուի քրդերի՝ Իզօ խանի ղեկավարութեամբ, որոնց ուժերը պարբերաբար միջնաբերդ Թաւրիզում հակագրոհների ու հարուածների արժանանալով՝ կոտորուում ու յետ էին մղուում:

Միւս կողմից՝ *«Դիւրին բան չէր ՀՅԴ Կովկասեան մարմիններուն համար ռազմական օժանդակ խումբեր փոխադրել Արաքսի միւս կողմը այն օրերուն, երբ ցարական կայսրութեան մէջ սկսած էր ստոլիպինեան համապարած ռէակցիան, և երբ մասնաւոր կապաղութեամբ ծայր կուտար հալածանքը՝ ՀՅ Դաշնակցութեան դէմ: Ամենէն առաջ հարկ էր Թաւրիզ ճամբել մէկ անուանի ռազմիկ-հրամանատար, մեր հինաւուրց խմբապետներու երախտաւոր փաղանգէն, որ կարենար իր անձնական հմայքի ուժով համախմբել իր շուրջ հայոց կուող տարրերը Ատրպատականում»[39]:*

Թէև դա վիճակում է հայ յեղափոխական դէմքերից մէկին՝ Սնքարեցի Սաքոյին, բայց երբ նա պատրաստւում էր Երևանից Թաւրիզ մեկնել, անակնկալօրէն մատնւում է խոլերայի համաճարակին ու մահանում:

Սաքոյին փոխարինում է Քեռին *(Արշակ Գաւաֆեան)*, որը 1908-ի հոկտեմբերի սկզբներում 25 հոգանոց արշաւախմբով Երևանից Թաւրիզ

է անցնում: Ի տես դրա՝ մեծ ցնծութիւն է տիրում հայ ու պարսիկ կուող ուժերի մէջ: Քեռիի ձիաւոր խմբի մուտքը բարձրացնում է յեղափոխականների տրամադրութիւնը, որով ուժգին թափ է հաղորդւում յեղափոխականների գրոհին, որի արդիւնքում որոշում է ինքնապաշտպանութեան դիրքերից անցնել յարձակողականի և քաղաքից դուրս գալով՝ ճակատել թշնամու զօրքի դէմ: Յարձակողականի անցնելու այս տակտիկան փայլուն է արդիւնաւորւում յատկապէս հայաբնակ Մուժամբար գիւղի կռւում, որտեղ հայ կտրիճների փոքրաթիւ, բայց հմուտ հրացանաձիգ խմբերը ծունկի են բերում 500-ի հասնող ղարադաղցի ձիաւոր հրոսակներին, որոնք անընդհատ թալանի ու աւերումների էին ենթարկում շրջակայ գիւղերը՝ դառնալով նաև պատուհաս՝ յեղափոխական ուժերի նկատմամբ: Չէ՞ որ *«.... Հայերի և մուսուլմանների համագործակցութիւնն ու համերաշխութիւնը այնպիսին էր, որ իշխանական ուժերը հայաբնակ գիւղերի վրայ յարձակւելով՝ խուճապոտում էին Սահմանադրական կարգերի տարածմանը՝ այդ գիւղերում...»*[40]:

Այսպիսով՝ գաւառների մէջ ևս Դաշնակցութեան ուժերը հասնում էին իրենց կողմից առաջադրուած երկու նպատակների՝ 1. հայ գիւղացիներին պաշտպանում էին քրդական ալան-թալանից և 2. տեղական իշխանութիւններին ստիպում էին վերականգնել սահմանադրական կառոյցներն ու հաստատութիւնները: Եւ իրաւամբ՝ մէկը միւսի յետևից *«անջումանները» (սահմանադրական միութիւններ)* վերահաստատեցին Ուրմիայում, Սալմաստում, Խոյում և այլուր:

Ուշագրաւ երևոյթ էր նաև այն հանգամանքը, որ Ատրպատական և Գիլան նահանգներում, որտեղ ազատական մօտեցումները աւելի տիրական էին, ցեղային խտրութիւնները բացառւում էին: Աւելին, ոչ-մուսուլման փոքրամասնութիւնները ներգրաււում և խրախուսւում էին մասնակցելու *«անջումանների»* նիստերին: Թաւրիզի *«անջումանը»* գտնւում էր հայերի թաղամասում և հայերը շարունակաբար ելումուտ էին անում այնտեղ և շատ պարագաներում հովանաւորում էին այն: Ռաշտի *«անջուման»*-ը ևս լայն բացել էր իր դռները ոչ-մուսուլմանների առջև: Ռաշտի *«անջումանը»* ճանաչւած գաւառական միակ *«անջումանն»* էր, որի ղեկավարներից մէկն էր նշանակւել հայ սոցիալ-դեմոկրատ Յարութիւն Գալստեանը[41]:

Ատրպատականի գրեթէ բոլոր շրջաններում Քեռիի և տեղ-տեղ Սաթթար խանի համատեղ ուժերը անգամներ յետ մղեցին հակասահմանադրական, թաքնակով տասնապատիկ անգամ գերազանցող զօրքերին: Ամիսներ տևող ընդհարումների ընթացքում, սակայն, քիչ չեղան նաև հայ մարտիկներից կորուստներ, ինչպէս՝ Զուլումաթը, որը ժամանակին մասնակից է եղել Սերոբի ու Անդրանիկի կռիւներին, Բուլղարացի Գէորգը, Միսաքը, Խորէնը և այլ թանկագին ռազմիկներ: ■

Օգտագործված Աղբյուրներ

1- Բերբերեան Հ. «Պայման» պրսկ. Եռամսեայ հանդէս, թիւ 36, Թեհրան, էջ 12:

2- Նոյն տեղում, էջ 13:

3- Նոյն տեղում, էջ 27:

4- Իրանի ԱԳՆ փաստաթուղթ, համար 7, արկղ 12, զեկուցագիր 55, մէջբերւած «Կասպի» օրաթերթում տպագրւած Վ. Թումանեանցի հօդւածից:

5- Բերբերեան Հ., նոյն տեղում, էջ 29:

6- Ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնեանը իր «Ազատագրական պայքարի ուղիներում» աշխատութեան 4 –րդ հատորում մէջբերում է հետաքրքիր մի դրւագ.- « .... Վերյիշելով ՀՅԴ 4-րդ Ընդհ. ժողովի (1907թ., փետրու.- ապրիլ) օրերին Վիեննայում Ռոստոմի հետ ունեցած իր թոռցիկ զրոյցը պարսկական յեղափոխութեանը կուսակցութեան մասնակցութեան մասին, ժողովի պատգամաւոր Սիմոն Վրացեանը հետագայում գրել է.- « .... Ռոստոմը հարցրեց ինձ.

- Դու ինչո՞ւ հակառակ ես, որ դաշնակցութիւնը մասնակցի պարսկական յեղափոխութեանը:

Ինձ համար անակնկալ էր այս հարցումը: Ես ո՞վ, որ Ռոստոմը հետաքրքրւի իմ կարծիքով:

- Ինձ թւում է, որ հայերը շահ չունին պարսկ. յեղափոխութիւնից,-պատասխանեցի ես,- մենք ինչո՞ւ զոհեր պիտի տանք պարսիկների համար:

7- Պարսիկ պատմագէտ Ռուհօլլահ Ռանջբարը իր «Կրօնական փոքրամասնութիւնները և Սահմանադրական յեղափոխութիւնը» (2010 Էթթելաաթի բացառիկ համար) խորագիրը կրող յօդւածում հետևեալ մեկնաբանութիւնն է կատարել.«.... Կովկասում միջցեղային կռիւների հետևանքով հայերի և մուսուլմանների միջև բախումներ էին առաջանում Թաւրիզում, որտեղ հակաքրիստոնէական տրամադրութիւններ էին խմորւում, սակայն, տեղական իշխանութիւնների և կրօնական առաջնորդների խոհեմութեան շնորհիւ, չծաւալւեցին սոյն հակադրութիւնները, չնայած, որ «Հաբլօլմաթին» օրաթերթը մուսուլմանամէտ, իսկ «Թարբիաթ» օրաթերթը հայամէտ կեցւածքներ էին որդեգրել:Կարևոր էր նաև ընդհանուր թշնամու՝ մենատիրական իշխանութեան առկայութիւնը, որով էլ՝ հայերի ու մուսուլմանների միջև համերաշխութիւնը պահպանւում էր: .... Թէև Կովկասում մի իրանցի առևտրականի սպանութիւնը կամ՝ 1907թ. Ռուս-անգլիական պայմանագիրը հակաքրիստոնէական ու հակահայկական խմորումների պատճառ էին դարձել, բայց և այնպէս հայ-մուսուլմանական համագործակցութիւնները չխամրեցին: Այս երկու «խմբերի» զգացմունքները միմեանց հանդէպ այնքան էին ջերմացել, որ Թաւրիզում մի հայ ազատամարտիկի սպանութիւնից յետոյ, մուսուլմաններն ու հայերը այնպիսի յուղարկաւորութիւն կազմակերպեցին, որ ժամանակի «Նալէյէ Միլլաթ» (Ազգի հառաչանք) օրաթերթը գրեց. « Իսկապէս ոչ թէ Ատրպատականում, այլ Իրանում ոչ մի ազնւականի, պետ. այրի յուղարկաւորութիւն այսպիսի փառքով ու շուքով չի ուղեկցւել, նոյնիսկ «Հուրրիաթ»-ի նահատակների համար...»:

8- Տասնապետեան Հ., «Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», հատոր Դ, Բէյրութ, 1982թ., էջ 235:

- Ի՞նչ զոհեր,- խնդաց Ռոստոմը,- տուէք ինձ 500 դաշնակցական ֆիդայիներ և ես կը գրաւեմ ամբողջ Ատրպատականը:

Յաճախ դժուար էր լինում հասկանալ՝ լո՞ւրջ էր խօսում Ռոստոմը, թէ՞ հանաք էր անում: Բալաջանը, որ լսում էր մեզ, հաստատեց Ռոստոմի խօսքերը.

- Հինգ հարիւր ֆիդային նոյնիսկ շատ է:

Հետագայ դէպքերը –Եփրեմ, Քեռի – ցոյց տուին, որ Ռոստոմի ու Բալաջանի խօսքերը չափազանցութիւն չէին, բայց և այնպէս, ես այսօր էլ նոյն կարծիքին եմ. մենք գործ չունէինք Պարսկաստանում: Հայ ժողովրդին ի՞նչ Շահ այն օրերի պարսկական յեղափոխութիւնից»»:(Սիմոն Վրացեան,«Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատոր Բ, էջ 103):

9- Ատրպատականի ազերիներ–Դ.Մ.)

10- Տ՛ես «Հայրենիք» համար 10 (321)., հոկտ. 1952 թ., էջ 79:

11- Բերբերեան Հ., նոյն տեղում, էջ 32:

12- ՀՀ Մատենադարանի կաթողիկոսական դիւանի թղթ. 237, վաւ. 323, թ. 87:

13- Սիմոնեան Հր. «Ազատագրական պայքարի ուղիներում» գիրք 3, էջ 479-480 :

14- Իրանի ԱԳՆ փաստաթղթերի և Դիւանագիտութեան պատմութեան կենտրոն, արկղ 22, համար 24, թղթ. 20:

15- Վարանդեան Մ., «ՀՅԴ պատմութիւն», հատոր Բ, Թեհրան, էջ 261:

16- Նոյն տեղում, էջ 261-2:

17- «Դրօշակ», համար 5(183) , մայիս 1907թ., էջ 76:

18- Ընդհ. Ժողովը-Դ.Մ.)

19- «Յեղ. Ալբոմ». Դ. շարք, 1963թ., թիւ 8(44). Բէյրութ,էջ 253:

20- Գ. Խուդինեանի « Հ Յ Դաշնակցութեան քննական պատմութիւն» աշխատութեան մէջ, էջ 284-ում, նշւում է, որ «Չնայած իր նկատմամբ ցարական ոստիկանութեան հաստատած աչալուրջ վերահսկողութեանը, Ռոստոմը Ատրպատականում եղել է և՛ 1890թ.-ին և 1891թ.-ի 2-րդ կէսին և՛ 1892-ի սկզբներին, ընդորում 1891- 1892-ին անգամ հասցրել է Թաւրիզում որոշ ժամանակ աշխատել որպէս ուսուցիչ»: (Տ՛ես Սամսոնի յուշերը, «Հայրենիք»,1923թ., համար 10, էջ 85):

21 «Դրօշակ», համար 10 (187),1907թ. հոկտ., էջ 153 :

22- Պարսկերէն շատ աղբիւրների օրինակով Ռուհօլլահ Ռանջբարը ևս իր «Կրօնական փոքրամասնութիւնները և Սահմանադրական յեղափոխութիւնը» աշխատութիւնում կարևորելով հայերի վիթխարի ներդրումը յեղափոխութեան յաղթանակի և մասնաւորապէս «Թեհրանի նուաճման» գործում, դա համարում է հայերի համար մեծ առաւելութիւն՝ ի համեմատ միւս փոքրամասնութիւնների, այն առումով, որ եթէ վերջիններս ապագայ խորհրդարանում օժտուեցին մէկական պատգամաւորով, հայերը սակայն, ունեցան Մեջլիսում երկու պատգամաւոր՝ Հիւս. և Հարաւային իրանահայութեան կողմից: Հետագային (1925-27թ.-ից) Յ. Միրզայեանին է միանում Մեջլիսում իրանահայութեան հարաւային շրջանի պատգամաւոր Ալէք Աղայեանը:

23- Իրանի անդրանիկ օրաթերթ «Էթթելաաթ»-ի 2010թ. Սահմանադրութեանը նուիրած բացառիկ համարում պարսիկ մտաւորական, համալսարանի դասախօս Ռուհօլլահ Ռանջբարը «Կրօնական փոքրամասնութիւնները և Սահմանադրական շարժումը» խորագրի ներքոյ իր յօդուածում անդրադառնալով շարժման նախօրեակներին հայևպարսիկ համագործակցութեանը, կարևորել է հայ յեղափոխականների քարոզչական աշխատանքները արտերկրում՝ յօգուտ Սահմանադրական յեղափոխութեան և որպէս օրինակներ մատնանշում է.-«.... Հայերը արտերկրում ևս տարբեր համաժողովների և դասախօսութիւնների ընթացքում հովանաւորում էին սահմանադրականներին: Ջորջիանակ,- նշել է նա,-Ստամբուլում հայերի ղեկավարը Իրանի ազատախոհների և ազգային պոռթկումի վերաբերեալ դրւատանքի խօսքեր է հնչեցրել, ինչպէս և՝ հայ և պարսիկ համագործակցութեան կարևոր հանգամանքին անդրադարձել: Նոյնպէս՝ Ֆրանսիայի Ունիոն քաղաքում, Դաշնակցութիւն կուսակցութեան ղեկավարը ընդգծել է, թէ իրանահայերը թև ու թիկունք են կանգնել Սահմանադրական շարժմանը:

24- Ամուրեան Ա., «ՀՅ Դաշնակցութիւնը Պարսկաստանում», Թեհրան, 1950 թ., էջ 105 :

25- Սիմոնեան Հր., նշւ. աշխ., գիրք 3, էջ 376 (յղումը «Ռոստոմ» գրքից, էջ 166):

26- Այս մասին պատմաբան Մ. Վարանդեանը վկայում է, որ Ռոստոմը և ընկերները խոստացան, որ Դաշնակցութեան Արևմտեան Բիւրօն կօգտագործեն պարսից դատի համար ՀՅԴ կապերը Եւրոպայի, մասնաւորապէս Ֆրանսիայի հայամէտ շրջանակների հետ, նիւթեր մատակարարելով Արևմտեան մամուլին: Ըստ Վարանդեանի, շատ շուտով Թաւրիզից Ժնև մեկնեցին Սահմանադրական Պարսկաստանի համար պայքարող երկու պատուիրակներ, որոնցից մէկը կովկասահայերին լաւածանօթ Կարաբէկովն էր, որին Արևմտեան Բիւրօն մեծ աջակցութիւն ցուցաբերեց մղելու իրենց քարոզչութիւնը ՀՅԴ բարեկամների շրջանակներում՝ Փարիզ և այլուր:

27- Սիմոնեան Հր., նշւ. աշխ., էջ 378:

28- Բերբերեան Հ., նոյն տեղում, էջ 37:

29- Վարանդեան Մ., նշւ. աշխ., էջ 283:

30- Դոկտ. Ալի Ֆորուհի, «Գիլանի հայութիւնը և Սահմանադրական շարժումը», էջ 700:

31- Էսմայիլ Ռայինը իր « Եփրեմ Խան զօրավարը» գրքում (էջ 64-65) այդ կոմիտէների մասին գրել է.

« .... Որոշ ռուսահայեր էլ գաղտնի կերպով Իրան են եկել և Գիլանում ու Թաւրիզում միացել ապստամբների շարքերին, որպէսզի կուեն պետական ուժերի դէմ: Գիլանում հայերի ստւարախիտ լինելու բերումով երկու կոմիտէ կեանքի կոչւեց «Սաթթար» և «Բարդ» (Կայծ) անուններով, որոնցում հայ-մուսուլմանական խառը խմբեր էին: «Սաթթար» կոմիտէում 3 հայեր կային՝ Եփրեմը, Արտաշէսը և Ներսէսը: Մի առ ժամանակ անց Եփրեմը «Սաթթար» կոմիտէից անջատւում է ու Էնզելիում «Բարդ» կոմիտէն է ստեղծում, որի 3 անդամներն հայեր էին: «Բարդ» և «Սաթթար» կոմիտէների հիմնական տարբերութիւնը կայանում էր ծրագիր-կանոնագրային հիմունքներում: «Բարդ» կոմիտէն հետևում էր սոցիալիստ-յեղափոխականների ծրագրին, իսկ «Սաթթար»-ը՝ ինքնիրեն սոցիալ-դեմոկրատ («Էջթեմախյունէ Ամիյուն») էր անւանում...»:

32- Վարանդեան Մ., նշւ. աշխ., էջ 283 :

33- Ջինւորական հրամանատար – Դ.Մ.

34- Բերբերեան Հ., նոյն տեղում, էջ 34:

35- «Սարզամինե ման» (Իմ Հայրենիքը), իրանագիտութեան ամսագիր, 2014 թ., օգոստոս, էջ 62:

36- Վարանդեան Մ., նշւ. աշխ., էջ 268:

37- «Էթելաաթ» օրաթերթի բացառիկ համար, 2010 թւական, Թեհրան, էջ 123:

38- Հետագային մտնում է ՀՅԴ շարքերը,Դ.Մ.)

39- Վարանդեան Մ., նշւ. աշխ., էջ 273:

40- Ռուհօլլահ Ռանջբար, նշւ. աշխ., էջ 121:

41 Աֆարի Ժ., «Իրանի Սահմանադրական յեղափոխութիւնը», էջ 110:

Անվարան

Վրէժ-Արմէն

Ներկայ խառնակ ժամանակները, թէ՛ Հայաստանի և թէ՛ աշխարհի պատմութեան մէջ մեր կեանքը տակնուվրայ ընելէ անդին, նաև խառնիխուռն մտքեր կը յառաջացնեն մեր ուղեղներուն մէջ և, ուզենք-չուզենք, հարցումներ կը դնեն մեր առջև՝ հարցականի տակ առնելով մեր անցած ուղին, մեր ըրածն ու չըրածը, մեր ռազմավարութիւնը, մեր գործելակերպը և ամեն ինչ: Այս «մեր»ը կը վերաբերի մեզմէ ամեն մէկուն, կը վերաբերի մեզի՝ որպէս կուսակցութեան, որպէս հաւաքականութեան, որպէս ազգի ու պետութեան և որպէս համամարդկային ընտանիքի:

Ի՞նչ ըրինք և ի՞նչ չըրինք, ինչպէ՞ս ըրինք և ինչպէ՞ս չըրինք, ինչո՞ւ ըրինք և ինչո՞ւ չըրինք, որ հո՛ս հասանք:

Հեռու ինձմէ այս հարցումներուն պատասխանները տալ կարենալու յաւակնութիւնը: Ընդհակառակը՝ այդ հարցումներէն իւրաքանչիւրը դուռ կը բանայ այլ հարցադրումներու, և կարելի է կորսուիլ անոնց անյատակ հորին մէջ:

Մեր սեփական կատարածներուն և չկատարածներուն մասին, անշուշտ, իւրաքանչիւրս ինք պիտի կատարէ իր ինքնաքննութիւնը, իր ինքնագնահատումն ու իր ինքնասրբագրութիւնը՝ ի հարկին:

Անհատական գետնի վրայ, օրինակ, կրնամ ես ինծի հարց տալ, թէ ձեռքէս եկածը ըրի՞, որպէսզի բան մը բարեփոխեմ, սխալ մը ուղղեմ, իրագործման մը նպաստեմ՝ օգտակար ըլլալու համար հասարակութեան զարգացման, այդ ըլլայ իմ ապրած թաղիս, քաղաքիս, բնակած երկրիս թէ նախահայրերուս երկրին համար, ազգիս թէ մարդկութեան համար: Վերջին հաշուով՝ ինծի՛ ու ընտանիքի՛ս համար, որպէսզի ապրինք աւելի ապահով, աւելի արդար, աւելի մաքուր և մարդկայի՛ն միջավայրի մը մէջ: Մաս կազմեցի՛ որևէ հաւաքական ճիգի, որևէ շարժումի, որևէ միութեան կամ կուսակցութեան՝ ուժերս միացնելու ինծի պէս մտածողներու, ինծի պէս գործել ուզող ուրիշներու, թէ՛ ապրեցայ ես ինծի համար՝ իմ հաճոյքներս հետապնդելով պարզապէս:

Հաւաքական գետնի վրայ, մեր պարագայի՛ն՝ ըլլա՛յ ազգային-թեմական, միութենական թէ կուսակցական, ըլլա՛յ պետական ոլորտներուն մէջ, դարձեալ կրնանք մենք մեզի հարց տալ, թէ մեր բոլոր հնարաւորութիւնները ի գործ դրի՞նք քայլ մը առաջ երթալու, դժուարութիւն մը աւելի յաղթահարելու, դիրք մը աւելի զօրացնելու, յաղթանակ մը աւելի տանելու համար: Ոչ միայն ներթեմական, ներմիութենական, ներկուսակցական կամ ներ-պետական առումով, այլև համազգայի՛ն առումով, միջթեմական, միջմիութենական, միջկուսակցական կամ միջհայկական՝ հայրենահայութիւն ու սփիւռքահայութիւն միասնաբար: Կրցա՞նք ճշտել առաջնահերթութիւնները, հիմնահարցերը, առկայ



ու գալիք տագնապները, զանոնք դիմակայելու միջոցները, մարդուժը, գիտուժն ու նիւթուժը, այլև ժամանակացոյցը:

Դեռ միայն վերջին երեսնամեակը նկատի առնելով՝ հարց տանք մենք մեզի, թէ որքա՞ն ճիշտ կրցանք գնահատել Խորհրդային Միութեան կամ այդ անուան տակ շարունակուող Ռուսական կայսրութեան քայքայումն ու անակնկալ անկախացումը անոր բաղադրիչ հանրապետութիւններուն՝ սկսեալ Հայաստանի Հանրապետութենէն, ուր մենք մեր ձեռքով, նաև մեր ձեռքով քանդեցինք մեր տնտեսական կռուանները, կողոպտեցինք պետական գոյքը, ինկանք դրամատիրական ծուղակին մէջ, և ահա երեսուն տարի է՝ չենք կրցած տակաւին դուրս գալ անկէ, ուր չենք կրցած ձերբազատիլ բռնատիրական վարչակարգի՝ մեր հոգիները ճնշող կապանքներէն, ուր տակաւին «ես»եր կը տիրապետեն՝ փոխանակ «մենք»ի:

Այս պայմաններուն տակ ինչպէ՞ս չվերյիշենք, մեզմէ շատեր ինչպէ՞ս չվերյիշեն այն վարանումները, որ ունէինք մենք ալ՝ իբրև «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» կամ իբրև սոսկ դաշնակցականներ, նախքան հայրենի հողին վրայ մեր վերընձիւղումը. վերահաստատուի՛լ իբրև կազմակերպութիւն անկախացող Հայաստանի մէջ, թէ՞ համբերել ու մնալ որպէս գաղափարական շարժում, որպէս ոգի ու ներշնչման աղբիւր՝ սպասելով, որ փաստօրէն փշրուին շղթաները, ապա միայն մաս կազմել իրապէս անկախ պետականութեան քաղաքական կեանքին: Չէ՞ որ այդ կ'ուզէին հասկցնել մեզի այն օրերու իշխանաւորներուն ճամբով մեր ներկայութիւնը Հայաստանի մէջ չհանդուրժող ուժերը: Քանդումի «աշխատանքը» կ'ուզէին անխափան տանիլ առաջ, իսկ մենք կրնայինք խանգարել զիրենք: Եւ մինչև հիմա նոյնը չէ՞, որ կ'ընեն, իսկ մենք անբաղձալի տարր կը մնանք քանդիչներուն համար: Այլապէս ուրկէ՞ կու գայ այդ ժահրը, այդ մաղձը, որ ոմանք այնպէս

հաւատարիմ կերպով կը թափեն մեր հասցէին:

Թէ պատրաստ չէինք անկախ պետականութիւն վարելու ազգովի՛ն, կասկածէ վեր է: Ամբողջ 70 տարի խորհրդային վարչակարգը մեզի թոյլ չէր տուած սորվիլ երկիր վարել: Հայ հանճարը շատ այլ մարզերու մէջ յաջողած էր նուաճումներ արձանագրել, բայց, ինչպէս ինծի կը խոստովանէր օրին Հայաստանի համայնավար կուսակցութեան երկարամեայ թիւ մէկ դէմքը՝ Կարէն Դեմիրճեան, Կեդրոնը արգելք կը հանդիսանար, որ ղեկավար անձնաւորութիւնները իրենց կառավարման փորձառութիւնը հաղորդեն իրենց յաջորդներուն:

Մենք ալ՝ իբրև ՀՅԴ, 1920-1921էն ի վեր զրկուած էինք այդ փորձառութենէն: Սակայն իրապէս կրնայի՛նք ո՛չ ըսել հայրենի հողին վրայ գործելու, տեղւոյն վրայ մեր երկրին ծառայելու մարտահրաւէրին՝ սպասելով աւելի... բարեհաճ օրերու: Իսկ Արցա՛խը, արցախահայութեան կա՛մնչը: Դասալիք կրնայինք համարուիլ: Նոյնը՝ մեր միւս ազգային աւանդական կուսակցութիւններուն պարագային: Ուստի ոչինչէն, ոչինչէ՛ն վերակազմեցինք մեր կառոյցները և նուիրուեցանք հայրենակերտման աշխատանքին: Շարունակուեցան մեր, մեր ազգային կուսակցութիւններուն դէմ հալածանքները, մեզ պառակտելու փորձերը: Դժբախտաբար, այո՛, որոշ չափով ջլատուեցան մեր ուժերը, յատկապէս միւս կուսակցութիւններուն պարագային, սակայն դիմացանք, շարունակեցինք ծառայել ու վտանգի պահուն անյապաղ գտնուեցանք առաջին գիծերուն վրայ:

Յոխորտանքով չէ, որ կը գրեմ այս տողերը: Ցաւո՛վ, զայրոյթո՛վ, ափսոսանքո՛վ: Բայց կը հաւատամ, որ ամենէն դժխեմ իրավիճակներուն մէջ անգամ պիտի շարունակենք այդպէ՛ս ծառայել մեր ժողովուրդին: Անվարան: **Այլապէս ինչո՞ւ կանք:**

2020 թ. ՀՅԴ Բյուրոյի հրատարակությունները

Նորություն հայտնած չենք լինի, եթե ասենք, որ անցնող 2020 թվականը հայության համար եղավ իրադարձություններով հագեցած, լարված տարի: Այդ մթնոլորտն իր ազդեցությունն ունեցավ նաև Հայ Յեղափոխական Դաշնակցութան և մասնավորապես նրա բարձրագույն մարմնի՝ ՀՅԴ Բյուրոյի գործունեության վրա: Բազմաճակատ անելիքների շրջանակում իր տեղն ունեցավ նաև մտավոր-գաղափարական աշխատանքը, ինչի կարևորությունը Դաշնակցության կողմից չի անտեսվել հայության և կուսակցության համար ամենաբարդ ժամանակներում անգամ: Այս դեպքում մեր ակնարկը վերաբերում է ՀՅԴ այն հրատարակություններին, որոնք, ինչպես վերն ասվեց, լույս են ընծայվել Դաշնակցության բարձրագույն մարմնի նախաձեռնությամբ և միջոցներով:

Այս ընթացքում շարունակվել է «Վէմ» համահայկական հանդեսի հրատարակությունը: 1930-ականներին Սիմոն Վրացյանի խմբագրմամբ լույս տեսած հայագիտական այս պարբերականը, տասնամյակներ անց վերահրատարակվելով հայրենիքում, դարձել է հայտնի և սիրելի հատկապես գիտական, մտավորական և ուսումնական շրջանակներում: Տարիների ընդմիջումից հետո՝ 2020 թվականի սկզբից, ՀՅԴ Բյուրոն սկսեց վերահրատարակել նաև կուսակցության ավագ պարբերական ու իր պաշտոնական օրգան «Դրօշակ»-ը: Անցնող տարվա ընթացքում «Դրօշակ»-ը հրատարակվեց ամսական պարբերականությամբ և, վերագտնելով ընթերցողին, գալիք ժամանակներում վստահաբար կշարունակի իր կենսագրությունը գրել:

ՀՅԴ վերոնշյալ երկու պարբերականները անցնող տարվա ընթացքում նաև սեփական մատենաշարերի սկիզբը դրեցին: «Վէմ» մատենաշարի 1-ին համարի ներքո հրատարակվեց «ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼԵԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ» գիրքը: ՀՅԴ հիմնադիր Քրիստափոր Միքայելյանի անտիպ նամակները հրատարակության է պատրաստել ՀՅԴ անվանի գործիչ, պատմաբան Երվանդ Փամբուկյանը: Նամականին, անշուշտ, հարստացնում է ՀՅԴ պատմագիտական ժառանգությունը և հետաքրքրություն է ներկայացնում ինչպես պատմաբանների, այնպես էլ համապատասխան թեմաներով հետաքրքրվող ընթերցողների համար:

Իրադարձություններից առաջ չընկնելով՝ տեղեկացնենք, որ 2021 թ. շեմին «Վէմ»-ը նոր հաճելի անակնկալ կմատուցի՝ ընթերցողի սեղանին դնելով իր մատենաշարի երկրորդ հրատարակությունը:

2019 թվականին լրացավ Հայաստանի առաջին հանրապետության կառավարության կողմից ընդունված՝ «Միացյալ և Անկախ Հայաստանի» հռչակման հայտարարագրի 100-ամյակը: Այս առթիվ 2020 թվականին «Դրօշակ»-ի մատենաշարի անդրանիկ հրատարակությամբ լույս տեսավ պատմաբան Արարատ Հակոբյանի «ՄԻԱՑՅԱԼ ԵՒ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ (Հայոց պատմության հոլովույթում)» գիրքը: Սկսելով Միացյալ Հայաստանի տեսլականի ակունքներից՝ աշխատության հեղինակը ներկայացնում է սույն գաղափարի զարգացման ընթացքը, պատմական Հայաստանի երկու հատվածների միավորման ուղղությամբ հայ պետական և հասարակական-քաղաքական շրջանակների իրականացրած աշխատանքները, մասնավորապես՝ միջազգային ատյաններում այս խնդրի շուրջ ծավալված քննարկումները: Մենագրությունը ուշագրավ տեղեկություններ է պարունակում հիմնահարցի վերաբերյալ և կհետաքրքրի ինչպես պատմաբաններին, այնպես էլ ընթերցող լայն շրջանակների:

Ի դեպ, անցնող տարվա ընթացքում կուսակցության ուշադրությունից չի վրիպել Արարատ Հակոբյանի մեկ այլ աշխատություն՝ «ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՀԱՅԿՈՄԿՈՒՄԻ ՓՈՐՁԵՐԸ. 1920 ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ» գիրքը:

Տարվա հրատարակչական հունձքի մեջ է եղել նաև Հայկազուն Ալվրցյանի հեղինակած «Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանշանները» գիրքը: Աշխատության մեջ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության խորհրդանշանների (դրոշ, զինանշան, օրհներգ) ընդունման համառոտ պատմությունը 1918-1920 թթ. և դրանց իմաստների ու խորհուրդների գիտական մեկնությունը:

Թվարկված աշխատություններով, անշուշտ, չի սպառվում անելիքն այս ասպարեզում: Գալիք տարվա ընթացքում վկան կլինենք ՀՅԴ Բյուրոյի ձեռնարկած նման նոր նախաձեռնությունների, որոնք կհարստացնեն հայագիտությունն ու կնպաստեն մեր ազգային ինքնաճանաչողությանը: Եվս մեկ անգամ կփաստեն, որ Դաշնակցության համար քաղաքական-գաղափարական աշխատանքը առանցքային կարևորություն ունի քաղաքական-հասարակական և պետական կյանքի զարգացման հարցում:





Ազգային ուժը

Իր՝ քառասուն տարիներու բուռն ու փոթորկալից կեանքով Դաշնակցութիւնը եկաւ ու նոյնացաւ հայ ժողովուրդին հետ: Ոսկրը ոսկրէն և արիւնը արիւնէն՝ Դաշնակցութիւնը հայութեան հետ փառքի կապարները բարձրացաւ և անոր հետ ալ պարտութեանց և նուաստացումի անդունդները նետուեցաւ: Քառասուն տարիներու ընթացքին հայութեան մէջ միշտ հայելիացած մնաց Դաշնակցութեան պատկերը, և փոխադարձաբար Դաշնակցութեան մէջ միշտ իր վիճակի հարազատ պատկերը գտաւ հայ ժողովուրդը:

Տարօրինակ պիտի ըլլար, որ այսօր, երբ հալածական է հայ ժողովուրդը, երբ բռնութեան տակ արիւն կը քամէ հայ Երկիրը, և երբ երկունքներէն ամէնէն ծանրագոյնը կ'ապրի մեր ցեղային երազը, Դաշնակցութիւնը մնար փառքի և յաղթանակներու բարձունքներուն վրայ, ինչպէս տարօրինակ պիտի ըլլայ, որ վաղը, երբ ազատագրուի հայ ժողովուրդը, երբ հաղթականօրէն իր գլուխը ցցէ հայ հայրենիքը, և երբ ծագի մեր դարաւոր երազին արշալոյսը, Դաշնակցութիւնը դարձեալ նոյն հալածականն ու աղէտահարը մնայ:

Ո՛չ մէկը և ո՛չ ալ միւսը: Որքան անբնական պիտի ըլլար առաջինը, նոյնքան արտառոց ու անհասկանալի պիտի մնար երկրորդը:

Արդա՛ր է, որ այսօր թափառահալած թոչունի նման հանգրուան չունի Հ.Յ. Դաշնակցութիւնը: Ու նոյնքան արդար, նոյնքան բնական և իրաւացի, նոյնքան ճիշտ ու հասկնալի, երբ վաղը, ժողովրդական ընդվզումի յաղթական թևերուն բազմած, Դաշնակցութիւնը գայ ու տարածուի անմիջական փառքի, յաղթական Հայ Դատի փէշերուն:

Քաղաքական և ոչ մէկ հոսանք այսքան տարրացաւ, խորարմատօրէն այսքան ձուլուեցաւ ու միահամուռուեցաւ իր ժողովուրդին, անոր վիշտերուն, յոյսերուն ու երազանքներուն հետ: Ու ո՛չ մէկ ժողովուրդ այսքան նոյնացաւ ու հարազատացաւ իրմէ ծնած կուսակցութեան հետ:

Դաշնակցութիւնը ծնաւ, դարձաւ, եղաւ ու մնաց իբրև թարգմանը հայ հայրենիքի և իբրև ազգային գերագոյն ուժը հայ ժողովուրդի: Այն միակ բազուկը, որ տիրականօրէն կը վարէ հայութեան ճակատագիրը և տիւ և գիշեր կը թևածէ հայրենի երկրի սահմաններուն վրայ:

Համակ ուշ ու լսողութիւն դարձած՝ այսօր հայ ժողովուրդը կը հետևի անոր բոլոր շարժումներուն, ակնածանքով կը լսէ անոր իւրաքանչիւր խօսքը ու կկատարէ անոր իւրաքանչիւր պատգամը: Որովհետև միայն ան կը կհանդիսանայ համաժողովրդական վստահութեամբ օծուն այն միակ բազուկը, որ ի վիճակի է բազմութիւնները շարժման մէջ դնել, վճռական վայրկեանին ցրիւ-ցրիւ բեկորներէն կերտել ազգի միացեալ կամքը և անդեկ զանգուածը յաչս օտարի և թշնամիի ներկայացնել իբրև ազգ և իբրև իրաւապահանջ ժողովուրդ:

Ու ճիշտ հոս է Դաշնակցութեան ազգային բովանդակ արժէքը: Ու այս կարևորագոյն պարագան է, որ չուզեցին կամ չկրցան ըմբռնել անոր հակառակորդները:

Կա՛յ ոյժ մը արդեօք, որ Դաշնակցութենէն դուրս և անկէ անկախ ի վիճակի ըլլար այս վայրացան ժողովուրդի հաւաքական կամքը կերտել և զայն իբրև կոռուան հանդէս բերել իր հայրենիքի պաշտպանութեան գործին մէջ:

Ու կա՛յ մէկը արդեօք, որ, պայքարելով հանդերձ Դաշնակցութեան դէմ, անկեղծօրէն ուրանար անոր այդ դերը և քաղաքական այս ուժը անոր մէջ չտեսնէր:

Մեր դարուն ազգերը անկարող են ապրիլ առանց ազգային հաւաքական կամքը մարմնաւորող վերին, գերագոյն ուժի:

Որքան այս ուժը շատ է ծաւալուն, որքան մեծ է անոր հմայքը, ու պարտադիր՝ անոր կամքը, այնքան ավելի է պաշտպանուած անոր ազգային դատը:

Այս տեսակէտով մարդկութեան նորագոյն պատմութիւնը արտասանած է իր վերջնական վճիռը: Ապահովագոյն ուժը ամէնքէն ճանչցուած և ամէնուն համար պարտադիր՝ ազգի մը անկախ և ազատ պետականութիւնն է:

Բոլոր ազգերը կը ձգտին այդ անկշռելի բարիքին, սակայն բոլորը չեն տիրացած անոր:

Ու ներմղուած գոյութեան արթուն բնազդէն՝ պետականազուրկ ազգերը ուրիշ, ձևով շատ աւելի թերի, սակայն խորքով յար և նման ոյժ մը ստեղծած են՝ առժամապէս պետական ազդակը փոխարինելու և հետագային զայն վերստին կերտելու համար:

Այդ ուժը և ազգային-քաղաքական հոսանքն է՝ իր դավանանքով, գործքով, իր անցեալով ու ներկայով, իր բոլոր մտորումներով ու երազանքներով վերջնապէս ձուլուած ու նոյնացած իր հարազատ ժողովուրդին հետ:

Մեր կեանքին մէջ այս դերը վիճակուեցաւ բացառաբար Դաշնակցութեան:

Լռելեայն ան իր ժողովուրդի ազգընտիր ուժը դարձաւ՝ կոչուած վարելու անոր ճակատագիրը:

Հակառակորդը ասոր մէջ կուսակցական սին փառքեր տեսաւ, իսկ Դաշնակցութիւնը՝ իր տիպար գողգոթան:

Ու խմբակցական նեղմիտ հաշիւներէ մղուած՝ ազգային այս վատառողջ տարրերը, որոնք երէկ կը պայքարէին իրացած Դաշնակցութեան՝ Հայ պետութեան դէմ, այսօր նոյնքան մոլեգնօրէն կը պայքարին ոգիացած հայ պետականութեան՝ Դաշնակցութեան դէմ:

Ասոնք երբէք այն ըմբռնումը չունեցան, թէ Դաշնակցութիւնը շատ աւելին է, քան կուսակցութիւնը, թէ ան կուսակցութիւն ըլլալէ առաջ և անկէ աւելի մեր կեանքի միակ ազգային գերագոյն ուժն է, ոգիացած հայ պետականութիւնը, որ կը ձգտի հայրենիք ունենալ և իր տեղը Հայ պետութեան զիջիլ:

«ՅՈՒՍԱՓԵՐ», 2 ՅՈՒՆԻՍ, ՏԱՐԻ 1930

ԴՐՕՇԱԿ

Չհանձնել օջախը թուրքին